Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գևորգյան Սիլվա Բենիամինի

Ամերիկյան միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 1895-1914 թվականներին

Ատենախոսություն

Է.00.01-«Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. պրոֆ.,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա. Ա.

Երևան-2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1895-1908թթ.

1.1 Միսիոներների գործունեության նախադրյալները……...……..19

1.2 Քարոզչական աշխատանքներ……...…..…31

1.3 Միսիոներները բարեգործության և դպրոցաշինության ոլորտում……...…….52

Գլուխ 2. ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1908-1914 թթ.

2.1 Կրթական բնագավառ……...……83

2.2 Մարդասիրական –բարեգործական աշխատանքներ……..……..95

Գլուխ 3. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

3.1 Հասարակական միտքը բողոքականության տարածման մասին….……..…...104

3.2 Միսիոներների գործունեության գնահատականը……...……....115

Եզրակացություններ ……..…127

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ ……..…….135

Հավելված……...…….1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարից 20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում ամերիկյան բողոքական միսիոներներն ակտիվ գործունեություն ծավալեցին Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության շրջանում: Նրանց գործունեության լուսաբանումը հնարավոր է տարածաշրջանի քաղաքական իրադարձությունները և բողոքական միսիոներության յուրահատկություններն ուսումնասիրելու դեպքում:

Գրավելով Հայկական լեռնաշխարհը՝ թուրքերը հենց սկզբից վարում էին Հայաստանը հայաթափելու և հայերին ձուլելու քաղաքականություն:

Այդ ավանդական քաղաքականությունը պետական ծրագրի տեսք է ստանում և իր դրսևորումն է գտնում պանօսմանիզմի գաղափարախոսության մեջ: Համաձայն այդ գաղափարախոսության, Օսմանյան կայսրությունը հայտարարվում էր նրանում բնակվող մուսուլման և ոչ մուսուլման բոլոր ժողովուրդների ընդհանուր հայրենիք: Օսմանյան կայսրությունում, համաձայն այդ տեսության, գոյություն ուներ մեկ ազգ՝ օսմանները, իսկ կայսրության մյուս ժողովուրդներն ինքնուրույնության և անկախ պետականության իրավունք չունեն: Երիտթուրքերն իրենց ազգային քաղաքականության հիմքում ևս դրեցին պանօսմանիզմի գաղափարները[1]:

Սակայն ժամանակի ընթացքում ինչպես Թուրքիայի կառավարող շրջանները, այնպես էլ ընդդիմադիր ուժերը համոզվեցին, որ պատմության ընթացքն անվերապահորեն տանում է դեպի կայսրության քայքայումը, նվաճված ժողովուրդների անկախությունը, ազգային անկախ պետությունների ստեղծումը: Պարզ դարձավ, որ պանօսմանիզմի քաղաքականության կենսագործումը չի կարող արգելակել ազգային-ազատագրական պայքարը, որ սկիզբ էր առել կայսրությունում [2]:

19-րդ դարում ծավալված ազգային-ազատագրական պայքարի հզոր ալիքը վերացնելու համար անհրաժեշտ էին հիմնահարցը լուծելու ավելի արմատական միջոցներ: Ահա այսպիսի պայմաններում ձևավորվում է Օսմանյան Թուրքիայում ազգային հարցը և առաջին հերթին Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու հրեշավոր ծրագիրը:

---

[1] Сафрастян Р.А.,Доктрина османизма в политическои жизни Османскои империи (50-70 гг. Х1Х в.), Ереван, 1985, с. 19-20, Фадеева И.Л., Официальные доктрины в идеологии и политике османской империи (османизм-панисламизм) XIX-начало XX в., Москва,1985, стр. 61.

[2] Խուրշուդյան Լ., Հայկական հարցը,Երևան, 1995, էջ 33:

Աբդուլ Համիդի կառավարությունը գլխավորող Քյամիլ փաշան նրա իշխանության գլուխ անցնելու առաջին տարիներին գրել էր. <<Եթէ Եւրոպիոյ մասին մէջ մեր ծոցը օձ սնուցինք, պէտք չէ, որ նոյն հիմարութիւնն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մէջ, ուրէմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք>> [3]:

Այսպիսով, պատմությունը ցույց տվեց՝ թե հին, թե նոր, որ <<թուրք վերնախավը այլազգիների նկատմամբ միշտ նույն բարբարոսն է եղել, արյան ծարավի ոճրագործը: Երիտթուրքերն իրենց հայրերի- արժանի ժառանգն էին և, նույնիսկ, գերազանցեցին նրանց արյան ու նախճիրի խրախճանքում >>[4]:

Երիտթուրքերի հակահայկական քաղաքականության արդյունքում արևմտահայությունը հայտնվել էր օրհասական դրության մեջ:

Աղքատությունը գնալով աճում էր Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերում: Հսկայական միջոցներ էին պետք միայն նրանց նյութական թշվառությունը մեղմելու համար, մանավանդ գավառներում, ուր երկրագործությունը կատարյալ քայքայված վիճակում էր:

Ակնհայտ էր, որ նման հանգամանքներում օգնության համար մեկնած ցանկացած ձեռք երկար սպասված փրկության հույս էր: Հենց այս ժամանակահատվածում էլ արևմտահայերին օգնում էին նաև Արևմտյան Հայաստանի կենտրոնական քաղաքներում և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերում հաստատված կաթոլիկ և բողոքական միսիոներներն ու նրանց կազմակերպությունները [5]:

Այդ օգնությունը հաճախ կատարվում էր դավանափոխության պայմանով, որը դժվարին այդ պահին լուրջ նշանակություն ուներ արևմտահայերի համար. ապահովում էր շատերի ֆիզիկական գոյությունը, բայց միևնույն ժամանակ, փաստորեն, արևմտահայ բնակչությունը բաժանվում էր տարբեր, միմյանցից անջատ խմբերի և հեշտացնում

---

[3] Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 246:

[4]Քարամյան Կ., Երիտթուրքերը և Կիլիկիայի 1909թ. կոտորածը, <<Բանբեր Հայաստանի արխիվների>>, 1979, N 3, էջ 69:

[5] Միսիոներությունը կրոնական կազմակերպությունների և եկեղեցիների գործունեության տարատեսակ է: Հանդես գալով տնտեսապես թույլ զարգացած և կախյալ ժողովուրդներին <<լուսավորելու >> և <<Աստծո>> խոսքը տարածելու կոչով, միսիոներներն իրականում նպաստում էին որոշակի պետությունների ու սոցիալական խմբերի քաղաքական նպատակների իրագործմանը: Ոգեշնչված լինելով <<անշահախնդիր բարեգործության>> գաղափարով, առաջին միսիոներները հավատում էին, որ իրենց բարոյական պարտքը՝ սեփական կյանքը Աստծո ծառայությանը նվիրվելն է և սխալականության ուղի բռնած մարդկությանը այլադավան մեղքից փրկելը:

թուրքական ջարդարարների կողմից նրանց ազատագրական շարժումների ճնշման գործը: Ընդհանուր առմամբ նյութական այդ օգնությունը, իհարկե, մարդասիրականից բացի, հետապնդում էր նաև քաղաքական նպատակներ՝ ամրապնդել արևմտյան տերությունների դիրքերն ու ազդեցությունը Թուրքիայում: Սակայն չի կարելի ասել, որ միսիոներների և հոգևոր հաստատությունների կողմից արևմտահայերին ցույց տրվող օգնությունը լոկ շահադիտական բնույթ ուներ:

Իրատեսորեն մոտենալով հարցին և նշելով, որ, իրոք, դավանափոխությունն էր եվրոպական միսիոներների և կրոնական կազմակերպությունների ձեռնարկումների հիմնական շարժառիթը, այնուամենայնիվ, պատմական այդ պահին դա օգնություն էր որբ, անտուն, մահվան բերանն ընկած հայ մանուկներին ու տառապյալներին՝ նրանց կյանք տալու համար [6]:

Այլ կերպ ասած՝մարդասիրական օգնություն, որ նույնպես չի կարելի անտեսել: Ամերիկացի քարոզիչների գործունեության արդյունքում որոշ թվով հայեր հրաժարվում են առաքելական եկեղեցուց և սկսում են դավանել բողոքականություն: Այսուհանդերձ, քիչ չէին այն միսիոներները, որոնք հեռու էին դավանափոխ անելու գաղափարից և առաջնայինը համարում էին բարեգործությունը և ոչ թե դավանափոխությունը:

Հարկ է նշել, որ դավանափոխությունը հակառակ հայ հայրենասեր հոգևորականության ջանքերի, ոչ քիչ դեպքերում հայերի մեջ հաջողությունների էր հասնում ազգային եկեղեցու սպասավորների մի մասի անտարբերության պատճառով:

Բողոքականությունը հայերի շրջանում սկսեց տարածվել 19-րդ դարի ընթացքում: Սկզբնական շրջանում նրանց հովանավորն էր Մեծ Բրիտանիան: Սակայն աստիճանաբար Արևմտյան Հայաստանում սկսեցին գործել նաև ամերիկյան, գերմանական, նորվեգական, շվեյցարական միսիոներներ:

Բողոքականությունը (լատիներեն protestans-առարկող, բողոքող) քրիստոնեական հիմնական դավանություններից է: Այն ընդգրկում է դավանաբանական և պաշտամունքային առանձնահատկություններով միմյանցից անկախ և ինքնուրույն ուղղություններ՝ լյութերականություն, անգլիկանություն, կալվինականություն և այլն: Բողոքականությունն առաջացել է Եվրոպայում, 16-րդ դարում, Ռեֆորմացիայի

---

[6] Թառոյան Կ.,Արևմտահայ գաղթականությունը և նրա վիճակը 19-րդ դարի 90ական թվականների վերջերին և 20-րդ դարի սկզբներին, <<Բանբեր Հայաստանի արխիվների>>, Երևան, 1974, N 3, էջ 174:

ժամանակաշրջանում: Բողոքականները չեն ընդունում սրբերի, հրեշտակների, Աստվածածնի ու սրբապատկերների պաշտամունքը, իսկ եկեղեցական հիմնական արարողակարգ հանդիսացող ժամերգությունը փոխարինում են քարոզով: Քրիստոնեական մյուս ուղղություններից բողոքականությունը տարբերվում է գլխավորապես նրանով, որ առաջադրում է Աստծո հետ մարդու անմիջական կապի սկզբունքը՝ առանց եկեղեցու և հոգևորականության միջնորդության: Մարդու փրկությունն իրականացվում է անհատական հավատի և Աստծո կամքի դրսևորման միջոցով: Բողոքականության մեջ չեն գործածվում նաև քահանա և եկեղեցի բառերը. վերջինիս փոխարեն օգտագործվում են ժողովարան կամ աղոթարան, իսկ քահանա բառի փոխարեն՝ պատվելի կամ վերապատվելի բառերը: Այդուհանդերձ, Օսմանյան կայսրությունում միսիոներները հիմնականում օգտագործել են եկեղեցի և քահանա բառերը, որոնք ավելի հարազատ էին հայերին՝ նպատակ ունենալով բողոքականությունը հնարավորինս մերձեցնել Հայ առաքելական եկեղեցուն:

<<Հանդես գալով տնտեսապես թույլ զարգացած, գաղութային և կախյալ երկրների ժողովուդներին <<լուսավորելու>> և <<Աստծո խոսքը>> տարածելու նշանաբանով, միսիոներությունն իրականում նպաստում էր առանձին պետությունների և սոցիալական խմբերի քաղաքական ու տնտեսական նպատակների իրագործմանը: Կրոնական գործոնը, փաստորեն, օգտագործվում էր որպես մեծ տերությունների քաղաքական և տնտեսական շահերին աջակցելու միջոց>> [7]:

Ամերիկյան բողոքական միսիոներներն Օսմանյան կայսրությունում իրենց քարոզչական գործունեությունը ծավալում էին գլխավորապես հայերի և ասորիների շրջանում նաև այն պատճառով, որ այդ ժողովուրդները գտնվում էին առավել ծանր սոցիալ-տնտեսական, ազգային և կրոնական ճնշումների ներքո:

Հայերի նկատմամբ վարվող քաղաքականությունը Թուրքիայում բնակվող ազգային մյուս փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող ընդհանուր քաղաքականության արտահայտությունն էր: Այդ փոքրամասնությունները միշտ էլ սոցիալական վայրենի շահագործման օբյեկտ են ծառայել Թուրքիայի իշխող խավերի ձեռքում [8]:

---

[7] Փայասլյան Ստ., Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը, Երևան, 2007, էջ 4:

[8] Գալոյան Գ.,Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 168:

Սկզբնական շրջանում միսիոներները, ներդնելով նյութական զգալի միջոցներ և հիմնելով զանազան կրթական և այլ հաստատություններ, այնուամենայնիվ, չկարողացան ձեռք բերել զգալի թվով համակիրներ: Սակայն 1890-ական թթ. և 1909թ. Կիլիկիայի հայության զանգվածային կոտորածներից հետո իրադրությունը կտրուկ փոխվեց: Սպանդից ողջ մնացած և ծնողազուրկ երեխաների մի մասի հոգածությունն ստանձնեցին տարբեր ազգությունների և երկրների կաթոլիկ և բողոքական միսիոներները: Այդ և հետագա տարիներին աճեց բողոքականություն ընդունած հայերի թիվը [9]:

Հայերը բողոքականություն էին ընդունում գլխավորապես հույսեր տածելով, որ կունենան Եվրոպական երկրների և ԱՄՆ-ի պաշտպանությունը, կկարողանան կրթվել նրանց ուսումնական հաստատություններում և կձերբազատվեն ազգային ճնշումներից: Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին 1915թ. իրադարձությունները, Օսմանյան կայսրությունում ցեղասպանության զոհեր դարձան ոչ միայն հայ առաքելական եկեղեցու հետևորդները, այլև՝ բողոքականություն և կաթոլիկություն ընդունած հայերը: Ոչ քիչ դեպքերում՝ նաև իրենք՝ քարոզիչները[10]:

1860-ական թվականներից Թուրքիայի տարբեր շրջաններում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում, հայ ավետարանականները միություններ էին կազմել: Դա նշանակալիորեն թուլացնում էր Հայոց Պատրիարքարանի դերը, ինչը համահունչ էր Օսմանյան կայսրության ազգային քաղաքականությանը: Կարելի է ենթադրել, որ հենց դրանով էին պայմանավորված թուրքական կառավարության կողմից բողոքական համայնքներին շնորհված իրավունքները: Սակայն հարկ է նշել, որ դա բացասական նշանակություն ունեցավ նաև Օսմանյան կայսրության համար, քանի որ եվրոպական տերություններն իրենց հավատակիցների շահերի պաշտպանության պատրվակով սկսեցին միջամտել Օսմանյան կայսրության ներքին գործերին[11]:

XIX դարավերջին սկսվել էր հայ ժողովրդի համար օրհասական մի ժամանակաշրջան, որի ընթացքում Հայաստանում իրենց գործունեությունն ակտիվորեն ծավալած միսիոներներն ակամայից նաև 1894-96թթ. ջարդերի և 1915թ.

---

[9] Տերոյան Վ.,Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Երևան, 2006, էջ 5:
[10] Նույն տեղում:
[11] Պալասանյան Ստ.,Պատմություն հայոց, Երևան, 1920, էջ 44:

ցեղասպանության ականատեսը դարձան: Նրանց հաղորդած տեղեկությունները, վկայությունները, հուշերը և գրությունները կարևոր աղբյուր են Հայոց ցեղասպանության ուսումնասիրման համար, մերկացնում են Օսմանյան կառավարության հակահայկական քաղաքականությունը[12]:

Միսիոներներն այդ ընթացքում իրականացրին մարդասիրական աշխատանքներ: Վտանգելով սեփական կյանքը՝ միսիոներներներից շատերը փնտրում էին անտուն երեխաներ, տեղավորում էին նրանց որբանոցներում, փրկում էին ջարդերից բազում հայերի: Ամերիկացի միսիոներներն առաջիններից էին, որ ահազանգեցին կայսրության տարածքում՝ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում տեղի ունեցող արհավիրքների մասին: Խոսուն է նաև այն փաստը, որ ամերիկյան բարեգործական կազմակերպություններն Օսմանյան կայսրությունում հիմնել էին 551 տարրական և միջնակարգ դպրոց, ութ քոլեջ, ինչպես նաև բազմաթիվ բարեգործական դեղատներ: Այս բոլոր հաստատությունները հայերի ցեղասպանության ընթացքում փակվեցին[13]:

Միսիոներների հաջողությունները պայմանավորված էին նաև ամերիկյան և անգլիական դեսպանների աջակցությամբ: Հայ քրիստոնյաներին բողոքականության մեջ ներգրավելու համար օգտագործվում էր ֆինանսական գործոնը, նրանց փոխարեն վճարում էին որոշ հարկեր, օրինակ՝ օսմանյան կայսրության կողմից քրիստոնյաներից զինվորական ծառայության դիմաց պահանջվող հարկը և այլն: Այդ ամենը հող էր նախապատրաստում ԱՄՆ-ի քաղաքական նպատակների իրականացման համար, բայց և համընթաց էր հայերի շահերին:

Այս տեսակետից ուշագրավ են ժամանակի հայ հասարակական գործիչ, հրապարակախոս Անդրանիկ Պետիկյանի մտորումները. «Ամերիկան մեծ արժէք կը

---

[12] Barrows O. J., In the Land of Ararat: A Sketch of the Life of Mrs. Elizabeth Freeman Barrows Ussher, Missionary to Turkey and a Martyr of the Great War, New York, 1916, Knapp, Grace H., The Mission at Van, In Turkey in War Time, New York, 1915, Knapp G. H., The Tragedy of Bitlis, Being Mainly the Narratives of Grisell M.Mclaren and Myrtle O. Shane.,New York, Chicago, 1919, Ussher C.D., Knapp G. H., An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace and War, London, 2002 և այլն:

[13] Սահակյան Ռ.Օ., Արեւմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, էջ 75:

դնէր օտար և հեռաւոր ժողովուրդներու սիրոյն վրայ: Միսիոնարներ իր սիրոյն դեսպաններն էին»[14]:

Միսիոներական գործունեությունն այնպիսի զարգացման էր հասել Թուրքիայում, որ բազմաթիվ քաղաքների մեջ նրանք ունեին ընդարձակ և հարուստ բնակելի հատվածներ: Դրանք իրենց արտատարածական արտոնություններով դարձել էին ինքնաբավ կառույցներ, և տեսանելի ու անտեսանելի բազմաթիվ պինդ կապերով միացել համապատասխան մայր-երկրի հետ: Այդ հատվածներն ունեին իրենց ներքին ինքնուրույն տնտեսական և առօրյա կյանքը՝ իրենց փուռը, ջրմուղը, խանութը, իհարկե, միայն միսիոներների կարիքների համար[15]:

Այստեղ գլխավոր շենքերն էին եկեղեցին՝ աղոթատունը, որբանոցը, հիվանդանոցը և դեղատունը, որ սպասարկում էր ոչ միայն քաղաքամասի, այլև՝ նրանից դուրս բնակվող ժողովրդի կարիքները՝ ընդ որում դեղորայքը հաճախ տրամադրելով անվճար:

Միսիոներական նյութական միջոցների գլխավոր աղբյուրն էին ամերիկյան առևտրական կազմակերպությունների ներդրումները, որոնց իրացման համար միսիոներները հաճախ հանդես էին գալիս նաև որպես առևտրական գործակալներ՝այդ գործունեության մեջ ներգրավելով տեղական բնակչության ներկայացուցիչների:

Չժխտելով, որ մեծ տերություններն օգտագործում էին միսիոներների գործունեությունն իրենց քաղաքական նպատակների իրագործման՝ Օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրելու և իրենց ազդեցությունը տարածաշրջանում մեծացնելու համար, անհրաժեշտ ենք համարում նաև փաստել, որ դրա հետ մեկտեղ որոշ միսիոներներ, տեղում ծանոթանալով հայ ժողովրդի դրության հետ, ուսումնասիրելով նրա պատմությունն ու մշակույթը, փորձում էին կարողացածին չափ նպաստել Հայկական հարցի արդարացի լուծմանը և բողոքում էին մեծ տերությունների երկդիմի քաղաքականության դեմ:

Այսպիսով, մատնանշելով միսիոներական գործունեության տարածմանը նպաստող գործոնները, ճշմարտության դեմ չմեղանչելու համար հարկ ենք համարում նշել, որ եթե անգամ ամերիկյան բողոքական միսիոներների ծավալած բարեգործական

---

[14] ՀԱԱ, ֆ. 1291, ց.1, գ. 606, թ. 7:
[15] Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 35:

աշխատանքներն ունեին հեռահար նպատակներ, այնուամենայնիվ, հայ ժողովրդի համար այդ ծանր ժամանակահատվածում նրանք կարողացան իրական օգնություն ցույց տալ: Նրանց ծավալած լուսավորական և կրթական աշխատանքներով են պայմանավորված ժամանակի արևմտահայ երիտասարդության և մանուկների կրթական հաջողությունները, որոնց շնորհիվ նույնիսկ այդ օրհասական տարիներին հայ ժողովրդի շատ զավակներ կարողացան դառնալ կրթված ու բանիմաց մարդիկ և նույնիսկ հայտնվելով արտերկրում՝ պայքարել համահայկական խնդիրների համար:

Թեմայի արդիականությունը

Սույն հիմնահարցի ուսումնասիրման դեպքում կարելի է նոր լույսի ներքո մեկնաբանել ամերիկյան միսիոներների գործունեությունն ու նրանց ծավալած աշխատանքների թե դրական և թե բացասական կողմերը:

Անվիճելի է, որ չնայած բոլոր փորձություններին՝ մեր ժողովուրդն անսասան է մնացել իր հավատի մեջ: Այդուհանդերձ, անխուսափելի էին նաև պառակտումները: Ուսումնասիրվող ժամանակահատվածն առանձնանում է հայ ժողովրդին բաժին ընկած թե տնտեսական, թե քաղաքական, թե ազգային հալածանքների աննախադեպ ծավալով, որ ենթադրում էր նաև կրոնական հողի վրա տեղի ունեցող գործընթացներ: Մասնավորապես, այս ժամանակահատվածում մեծ չափերի է հասնում ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում. նրանք ոչ միայն նպատակ ունեին օգնություն ցույց տալ դրա կարիքն ունեցող մեր ժողովրդին, այլև, իբրև այդ օգնության նախապայման՝ նրանց մղել դեպի բողոքականություն: Դա ունեցավ իր ոչ միանշանակ հետևանքները մեր հետագա պատմության ընթացքի վրա: Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տվյալ ժամանակահատվածի լիարժեք ուսումնասիրման, այլև արդի օրերում գործող կրոնական մի շարք կազմակերպությունների բարեգործական աշխատանքների իրական նպատակների և նրանց գործունեության հնարավոր հետևանքների ճիշտ վերլուծության համար: Բողոքականության առկայությունը հայոց մեջ առնչվում է նաև ազգային եկեղեցու պատմությանը, մղում առավել իրատեսական հայացքով նայելու նրա վրիպումներին և ձեռքբերումներին՝ իր ազգապահպան գործունեության մեջ: Արևմտյան Հայաստանում ամերիկյան միսիոներների գործունեության վերհանումը հրատապ նշանակություն ունի նաև Հայկական հարցի համակողմանի լուսաբանման համար:Այս հիմնահարցն

արդիական գործոն է դառնում, ի լրումն վերը նշվածների, հայ-ամերիկյան քաղաքական, դիվանագիտական, մտավոր-մշակութային և այլ հարաբերությունների պատմության մերօրյա իմացության տեսակետից:

Աշխատանքի նպատակներն ու խնդիրները:

Ատենախոսության նպատակն է սկզբնաղբյուրների, փաստական նյութի և համապատասխան գրականության համադրմամբ լուսաբանել Արևմտյան Հայաստանում ամերիկյան բողոքական միսիոներների ծավալած գործունեությունը 1895- 1914 թթ. ընկած ժամանակահատվածում: Մեր նպատակների մեջ է մտնում նաև փաստերի և իրողությունների հենքի վրա փորձել ցույց տալ ամերիկյան բողոքականների գործունեության ոչ միանշանակ բովանդակությունը և տալ դրա գիտական անաչառ գնահատականը: Դրան հետամտող՝ մեր խնդիրներն ենք համարում.

– բացահայտել Օսմանյան կայսրությունում ամերիկյան բողոքական կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղությունները, նրանց գործունեության արդյունքները

– բնութագրել Արևմտյան Հայաստանում ամերիկյան բողոքական միսիոներների գործունեության եղանակներն ու ձևերը

– վերհանել Օսմանյան կառավարության վերաբերմունքն ամերիկյան միսիոներների նկատմամբ

– ներկայացնել հայ եկեղեցու վերաբերմունքը բողոքականության նկատմամբ

– լուսաբանել բողոքական միսիոներների կրթական-լուսավորական գործունեությունը

– արժևորել ամերիկյան բողոքական միսիոներների գործունեության նկատմամբ հայ հասարական մտքի գնահատականները՝ դրանց մեջ փորձելով բացահայտել միսիոներների գործունեության իրական և ոչ միանշանակ արդյունքները մեր ժողովրդի համար:

Հետազոտության ժամանակագրական շրջանակը:

Ուսումնասիրության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1895 -1914 թթ. ժամանակահատվածը: Հիմնահարցի սկիզբը համարում ենք 1895 թվականը, քանի

որ 1890-ականի Համիդյան ջարդերի հետ զուգընթաց, հատկապես 1894-ից հետո, Արևմտյան Հայաստանում հաստատված բողոքական միսիոներները ձեռք բերեցին գործունեության լայն հնարավորություն՝ որբերին և գաղթականներին ապաստանելու և խնամելու ուղղությամբ: Թեմայի ավարտը հասցրել ենք մինչև 1914թ., ընդհուպ մինչև հայերի ցեղասպանությունը, քանի որ առաջին համաշխարհային պատերազմը, իր հետ բերելով մեր ժողովրդի համար նոր և մեծագույն արհավիրքներ, հատկանշվեց պատմական բուռն տարուբերումներով նաև ողջ տարածաշրջանի և համաշխարհային պատմության մեջ: Հայոց պատմության մեջ կատարվում է ողբերգական շրջադարձ, որի համեմատ ամերիկյան բողոքականության գործունեության մեջ 1915-1918թթ տեղի են ունենում կտրուկ փոփոխություններ:Միսիոներները ևս շատ անգամ կիսում են մեր ժողովրդի ճակատագիրը, հանդիպում անհաղթահարելի արգելքների և հալածվում նրա հետ: Սկսվում է ամերիկյան միսիոներների՝ Թուրքիայում ունեցած կացության և գործունեության որակապես նոր և նախադեպը չունեցող մի շրջափուլ, որը դուրս է մեր հետազոտության շրջանակներից:

Ուսումնասիրության գիտական նորույթը:

Ատենախոսության մեջ արխիվային վավերագրերի ուսումնասիրության, համեմատական վերլուծության հիման վրա փորձ է արվում, առաջին անգամ, բացահայտել Արևմտյան Հայաստանում նշված ժամանակահատվածում ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունը: Հարկ է նշել, որ արխիվում պահվող միսիոներների ձեռագիր հուշագրություններից և նոթերից շատերը բնագրից չեն թարգմանվել:

Հետազոտության մեջ, որտեղ մասնավորվում է վերոհիշյալ նորույթը, վերհանվում են Օսմանյան կայսրությունում ամերիկյան բողոքական կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղությունները, եղանակները, նրանց աշխատանքի արդյունքները: Քննության է առնվում Օսմանյան կառավարության վերաբերմունքը, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը բողոքականության նկատմամբ: Աշխատության նորույթներից է այն, որ առանձին գլխով ընդհանրացվում են միսիոներների գործունեությանը տրված գնահատականները հայ հասարակական մտքի կողմից:

Աշխատանքի կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը գործնական և կիրառական նշանակություն կարող է ունենալ Արևմտյան Հայաստանի տվյալ ժամանակահատվածի պատմության ուսումնասիրման և դասավանդման համար, հատկապես ամերիկյան միսիոներների գործունեության արժեքավորման տեսակետից: Աշխատանքը կարող է նպաստել հայ եկեղեցու պատմության, և առհասարակ, հիմնահարցի հետագա և ամբողջական հետազոտությանը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են պատմահամեմատական, պատմավերլուծական, պատմաքննական, փաստերի և իրադարձություններ հետադարձ (ռետրոսպեկտիվ) քննության մեթոդները:

Ուսումնասիրության աղբյուրներն ու գրականությունը:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում օգտագործված սկզբնաղբյուրներից առավել կարևոր են արխիվային վավերագրերը, որոնց մի մասն անգլերեն է: Ամերիկյան բողոքական միսիոներության գործունեության, ինչպես նաև բողոքական համայնքների և Հայ առաքելական եկեղեցու միջև պայքարի և հակամարտության մասին վկայող զգալի թվով փաստաթղթեր պահվում են Հայաստանի ազգային արխիվում, որոնք լայնորեն օգտագործել ենք աշխատանքը շարադրելիս[16]:

Աշխատության մեջ մեծապես օգտագործվել է Վ. Տերոյանի «Իմպերիալիստական ծիծեռնակներ. միսիոներական և բարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում» արժեքավոր աշխատությունը, որն աչքի է ընկնում հեղինակային իրազեկությամբ, քանզի հեղինակը 1919թ. աշխատել է «Մերձավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեում» և քաջատեղյակ է միսիոներների աշխատանքի կազմակերպման ձևերին:

Թեմայի ուսումնասիրման առումով առանցքային նշանակություն ունեն տպագիր սկզբնաղբյուրները, որոնք անմիջականորեն վերաբերում են միսիոներական

---

[16] ՀԱԱ, ֆ.1291,Անդրանիկ Պետիկյան, ֆ.193-Հայկ Պերպերյան, ֆ.411-Հ.Ֆ. Լինչի, ֆ.413-Լեւոն Թութունջյան, ֆ.420-Յոզղատի եւ շրջակայից բարեսիրական հայրենակցական միություն, Բեյրութ-Լիբանան, ֆ. 427-Ամերիկահայ արաբկիրցիների միություն և այլն:

կազմակերպությունների գործունեության լուսաբանմանը:Առանձնանում են հատկապես միսիոներ Հ.Դուայտի աշխատությունները: Հեղինակն անմիջական մասնակցություն է ունեցել Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում միսիոներական կայանների հիմնադրմանն ու աշխատանքներին[17]:

Ամերիկյան բողոքականների գործունեության հիմնական ուղղություններին է նվիրված ամերիկացի միսիոներ Դ.Էդդիի աշխատությունը՝ Արևմտյան Հայաստանում հաստատված միսիոներական կայանների պատմության վերաբերյալ:[18] Հետաքրքրական փաստեր է պարունակում նաև Ջ. Բարթոնի[19] աշխատությունը, որտեղ ներկայացվում է ամերիկյան Խորհրդի գործունեությունը: Միսիոներական գրականության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում այն աշխատությունները, որտեղ հեղինակներն անդրադարձել են Արևմտյան Հայաստանում որևէ քոլեջի կամ դպրոցի հիմնադրման պատմությանը[20]:

Փաստականորեն հագեցած շարադրանքներ են Խարբերդի ԱՄՆ-ի հյուպատոս Լ.Դեվիսի հուշերը, ինչպես նաև ականավոր գործիչ Հ. Ֆ. Լինչի Արևելյան և հատկապես Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդություններին նվիրված ակնարկները[21]:

Բողոքական միսիոներության գործունեության ուսումնասիրման մեջ լուրջ ներդրում ունեն սփյուռքահայ պատմաբանները, և ամենից առաջ Ա. Վարդուկյանը [22]:

Նիկոմեդիայում միսիոներների ծավալած գործունեությանն է անդրադարձել Մ.Գասապյանը[23]:

Թեմայի ուսումնասիրման առումով կարող է օգտակար լինել նաև Մ. արք. Օրմանյանի մեծարժեք աշխատությունը[24]:

---

[17] Dwight H.G.O.,The Centennial History of the American Bible Society, New York, 1919.
[18] Eddy D.B.,What Next in Turkey, Boston, 1913.
[19] Barton J. L. D., Daybreak in Turkey, Boston, 1908.
[20] Hamlin, C., My Life and Times, 2 nd ed., Boston, 1893, Washburn G., Fifty Years in Constantinople and Recollection of Robert College, Boston , 1909, Knapp G.H., The Tragedy of Bitlis, New York, 1919.
[21]Դեվիս Լ.Ա., Սպանդի նահանգ, Երևան, 2001, Լինչ Հ.Ֆ.Պ. Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ. հ. Բ., «Տաճկահայաստան», Կ.Պոլիս, 1914:
[22] Vartooguian A.P., Armenians Ordeal. A Sketch of the Main Features of the History of Armenia: An inside Account of the Work of American Missionaries among Armenians,and its Ruins Effect, and General Review of the Armenian Question, New York, 1896.
[23] Գասապյան Մ.Գ. Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913;
[24] Օրմանեան Մ., Ազգապատում, հ.Գ.,Պէյրութ, 1961:

Կեսարիայում բողոքական համայնքների գործունեության վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են պահպանված Ա.Ալպոյաճյանի[25] ծավալուն աշխատության մեջ:

Ե. Քասունու [26],Կ.Պ.Ատանալյանի [27],Լ. Արփիի[28] աշխատություններում հետաքրքիր փաստեր կան հայ բողոքականների և ամերիկացի միսիոներների միջև ծագած հակասությունների վերաբերյալ:

Ճանաչողական առումով օգտակար են նաև տարբեր վիլայեթների պատմությանը վերաբերող աշխատությունները: Այդպիսիք են Սեբաստիային նվիրված Ա. Պատրիկի [29] և Ա.Սահակյանի[30] աշխատությունները. վերջինս ճշգրտում է նահանգում բնակվող բողոքական հայերի թվաքանակը:

Խարբերդի բողոքական համայնքների պատմությանն են անդրադարձել նաև Վ. Հայկը[31] և Մ. Ճիզմեճյանը[32]:

Ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև Ա.Մելքոնյանի մեծարժեք աշխատությունը[33]:

Հ.Պողոսյանը, ներկայացնելով Զեյթունի պատմությունը, անդրադարձել է նաև ամերիկացի միսիոներների գործունեության մանրամասներին[34]:

Ուրֆայում ամերիկյան բողոքական միսիոներների գործունեության անդրադարձն է տրված Ա.Սահակյանի [35]աշխատության մեջ: Արևմտահայ կրթական կյանքին և բողոքականների հիմնած կրթական հաստատություններին են անդրադարձել Է.Կոստանդյանը [36] և Գ.Նազիկյանը[37]:

---

[25] Ալպոյաճեան Ա.,Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա., Գահիրե, 1937, նույնի Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Կահիրե, 1952, նույնի Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961:

[26] Քասունի Ե.,Լուսաշաւիղ Պատմութիւն հայ աւետարանական շարժման,Պէյրութ, 1947:

[27]Ատանալեան Կ.Պ., Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, Կալիֆորնիա, 1952 :

[28] Arpee L. A., Cetury of Armenian Protestantism-1846-1946, New York, 1946.

[29] Պատրիկ Ա.Ն.,Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ.Ա,Պէյրութ, 1974:

[30]Սահակյան Ա.Գ., Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, 2005:

[31] Վահէ Հ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959:

[32] Ճիզմէճեան Մ., Խարբերդը եւ իր զաւակները, Ֆրեզնո, Քալիֆորնիա, 1955:

[33] Մելքոնյան Ա.Ա., Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան ,2003:

[34] Պողոսյան Հ.Մ., Զեյթունի պատմությունը 1409-1921թթ.,Երևան, 1969:

[35] Սահակեան Ա.,Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները,Պէյրութ, 1955:

[36]Կոստանդյան Է., Ակնարկներ արեւմտահայ մշակութային եւ հասարակական – քաղաքական կյանքի պատմության. 19-րդ դարի 80-ական թվականներ, Երևան, 2005:

[37] Նազիկյան Գ.Ա.,Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969:

Միսիոներների աշխատանքների մասին են պատում թուրքական հալածանքներից փրկված բազմաթիվ արևմտահայեր: Նրանցից մեկն է Ա.Մարտիկյանը: Այս տանջված հայուհին Էրզրումից ուղղակի Ամերիկա է փոխադրվել և իր պատմութիւնը պատմել «Յոշոտուած Հայաստան» գիրքում[38]:

Արևմտյան Հայաստանում միսիոներների գործունեության ծավալման պատճառներն ըմբռնելու համար կարևոր նշանակություն ունեն նաև 19-20-րդ դդ. հայոց պատմությանը նվիրված աշխատությունները[39]:

Արևմտյան Հայաստանում ամերիկյան միսիոներների գործունեությանն անդրադարձել է նաև խորհրդահայ պատմագիտությունը: Այն բացասական կտրուկ առարկումներ ուներ միսիոներների գործունեության հանդեպ՝ հիմնահարցը դիտարկելով բացառապես քաղաքական տեսանկյունից, մանավանդ, խոսքը վերաբերում էր ԽՍՀՄ թշնամի իմպերիալիզմի առաջատար երկրի գաղափարախոսության պատմությանը:

Միսիոներների գործունեության վերաբերյալ կարևոր փաստեր կան Մ.Ներսիսյանի մեծարժեք աշխատության[40] մեջ, ուր նա, նկարագրելով հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ 19-րդ դարի երկրորդ կեսին, անդրադառնում է նաև արևմտահայության շրջանում ամերիկյան միսիոներների ձեռնարկումներին:

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությանը զուգահեռ միսիոներական աշխատանքին անդրադարձ է կատարել նաև Ա.Համբարյանն իր ուսումնասիրության մեջ[41]:

Ժամանակաշրջանի ուսումնասիրման առումով արժեքավոր տեղեկությունն են պարունակում Վ. Պարսամյանի[42] և Գ.Ստեփանյանի [43]աշխատությունները:

---

[38]Ազատեան Լ., Հայ որբերը մեծ եղեռնի, գիրք երկրորդ,Երևան, 2000, էջ 39:

[39]Աճառյան Հ., Հայոց պատմություն հյուսված ընդհանուր պատմության հետ, Երևան, 2004, նույնի Հայ գաղթականության պատմությունը, Երևան, 2002, Գէորգ-Մեսրոպ, Պատմութիւն հայ եկեղեցւոյ, հ. Բ., Կ.Պոլիս, 1914:

[40]Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890թթ., Երևան, 2002:

[41] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում /1898-1908թթ./, Երևան, 1999:

[42] Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1980:

[43] Ստեփանյան Գ., Հակոբ Պարոնյան /կյանքն ու ստեղծագործությունը/, Երևան, 1956:

Թեմայի ուսումնասիրման առումով առանցքային տեղ են զբաղեցնում հատկապես 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարասկզբի հայ պարբերական մամուլում տպագրված հոդվածները, որոնց մի մասը սկզբնաղբյուրի նշանակություն ունի:

Կարևոր են նաև հայ լրագրության ու տպագրության պատմությանը նվիրված աշխատությունները, որոնցում տեղեկություններ կան «Ավետաբեր» հանդեսի և միսիոներների հիմնած տպարանների մասին[44]:

Այդ առումով հիշարժան են Ա.Խառատյանի աշխատությունները, ուր արժեքավոր տեղեկություններ կան Զմյուռնիայում հայ պարբերական մամուլի[45] վերաբերյալ: Հեղինակի ուսումնասիրություններում համակողմանի ուսումնասիրված է հայ հասարակական մտքի զարգացումը 19-րդ դարի վերջին, ինչպես նաև միսիոներական մամուլի դերն այդ գործում[46]:

Թեման շարադրելիս օգտվել ենք Ս. Փայասլյանի աշխատությունից[47], ուր հիմնարար տեղեկություններ կան Արևմտյան Հայաստանում միսիոներների հաստատման, նրանց առաջին կայանների և գործունեության ոլորտների վերաբերյալ:Հեղինակն իր ուսումնասիրության մեջ ներկայացրել է միսիոներների գործունեությունը ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Օսմանյան Թուրքիայի մյուս հայաբնակ վայրերում, այդ թվում և Կիլիկիայում:

Ատենախոսության մեջ օգտագործել ենք նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանին քաջատեղյակ պրոֆ. Ա.Կիրակոսյանի մեծարժեք ուսումնասիրությունը[48], ուր թեմային առնչվող հարցերը քննարկվում են ժամանակի միջազգային հարաբերությունների լայն համապատկերի ենթատեքստում: Մենագրության մեջ պրոֆեսորը լուսաբանել է նաև արևմտահայության իրավիճակը, դիվանագետների և միսիոներների `1894-96 և 1909թթ. կոտորածներին վերաբերող

---

[44] Գալէմքեարեան Հ.Գ., Պատմութիւն հայ լրագրութեան, հ.Ա.,Վիեննա, 1893:

[45] Խառատյան Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում /1840-1900/, Երևան, 1995:

[46] Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում /1857-1908/, Երևան, 1989:

[47] Փայասլյան Ս., Ամերիկյան միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը, թեկն. ատենախոսություն, Երևան, 2006:

[48] Կիրակոսյան Ա., <<ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը 19-րդ դար-1914թ.>>, Երևան, 2014:

վկայությունները, ամերիկյան հասարակության արձագանքներն ու տուժած հայերի համար օգնության կազմակերպումը:

Թեմայի ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ բողոքականությունը, տարածում գտնելով արևմտահայության մեջ ամերիկյան միսիոներների գործունեության արդյունքում, հայ ժողովրդի համար ունեցավ հակասական արդյունքներ՝ մի կողմից կրթական-լուսավորական ոլորտում ընդգրկվեցին եվրոպական առաջադեմ գաղափարներ, կատարվեցին բարեգործական զգալի աշխատանքներ, մյուս կողմից՝ միսիոներների գործունեության արդյունքում հայության մի մասը հեռացավ Մայր եկեղեցուց, անջրպետ առաջացավ առաքելական ու բողոքական հայերի միջև, որոնց կրոնական բաժանումը, թերևս, միայն նպաստեց թուրք ջարդարարների հայաջինջ ծրագրերին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1895-1908 ԹԹ.

1.1. ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Բողոքական շարժման տարածումը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցավ աստիճանաբար, սակայն 19-րդ դարի երկրորդ կեսին ձեռք բերեց զանգվածային բնույթ, ինչի արդյունքում էլ բողոքականներն արձանագրեցին զգալի հաջողություններ։

Հայերի շրջանում բողոքական ուսմունքներից առավելապես տարածվեց ավետարանականությունը։ Հատկանշական է, որ միսիոներները չէին պատկանում միակենտրոն ղեկավարություն ունեցող որևէ կառույցի, այլ ծառայում էին տարբեր պետությունների շահերին։ Այս առնչությամբ Ռաֆֆին նշում է, որ անգլիացի միսիոներները շատ ավելի վտանգավոր էին, քան ամերիկացիները[49]։

Հաշվի առնելով վերոբերյալը՝ միսիոներական առաքելություններն ուսումնասիրելիս բացի դավանական և եկեղեցական կողմից, անհրաժեշտ է լուսաբանել նաև միսիոներների իրականացրած քաղաքական գործառույթները։ Միսիոներների գործունեությունն արևմտահայության մեջ պարարտ հող էր գտնում՝ կապված վերջինիս ծանր իրավական, քաղաքական, տնտեսական դրության հետ։ Եթե հայոց մեջ կաթոլիկության տարածումը պայմանավորված էր Հռոմի գործոնով, ապա բողոքականության ներթափանցումը կատարվում էր գլխավորապես անգլո-ամերիկյան միսիոներների միջոցով։ Հետաքրքրական է, որ հայ կաթոլիկներին հաճախ տրվել է «ֆրանկ» անունը[50], իսկ բողոքականներին անվանել են «ընգլիզ»։ Դավանափոխությունը զուգակցվում էր անգլալեզու արևմտյան քաղաքակրթական արժեքների ներթափանցմամբ, ինչը և բավարար պատճառ կարող էր լինել բողոքականներին «ընգլիզ» կոչելու համար։ Հիրավի, Թուրքիա եկած առաջին միսիոներները եղել են կաթոլիկները, 16-րդ դարից սկսած՝ դոմինիկյան վանահայրերը, իսկ 19-րդ դարից՝

---

[49] Ռաֆֆի, Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 2011, էջ 488-489։

[50] «Ֆրանկ» հորջորջումը կապվում է իտալական քաղաքների /Վենետիկ, Ջենովա/ և Ֆրանսիայի ազգերի ու նրանց դավանանքի նույնականացման հետ։

ճիզվիտական օրդենի ներկայացուցիչները: Սկզբնական շրջանում միսիոներների ակտիվ գործունեությունը հովանավորում էր Ֆրանսիան, նրանք ազատորեն կարողանում էին գործունեություն ծավալել Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում: Որքան էլ զարմանալի հնչի, ճիզվիտական միսիոներ Էմիլե Լագրանդը նշում էր, որ Թուրքիայում իրենք ավելի ազատ էին զգում, քան Անգլիայում կամ Հոլանդիայում: Նրանք հատկապես ակտիվ գործունեություն էին ծավալել կրթության բնագավառում: Կաթոլիկ ճիզվիտների գործունեության շնորհիվ դեռևս 1538թ. Թուրքիայում բացվել է ֆրանսիական կաթոլիկ դպրոցը: Հետագա տարիներին բացվել են բազմաթիվ հիվանդանոցներ, դպրոցներ, որբանոցներ[51]: 1832թ. սուլթան Մահմուդ 2-րդը Օսմանյան կայսրությունում ապրող հայ կաթոլիկներին ճանաչում է առանձին համայնք: Թուրք վերլուծաբան Մեհմեդ Դերին նշում է, որ այդ ամենն արվում էր Օսմանյան պետությունում մեծ տերությունների ազդեցությունն ուժեղացնելու նպատակով, և որ միսիոներները, որպես կանոն, ակտիվորեն գործում էին հույների, հայերի, ասորիների, եզդիների շրջանում :

Հարկ է նշել, որ կաթոլիկ հայերին առանձին համայնք ճանաչելու հանգամանքը վկայում է նաև այն մասին, որ Թուրքիան շարունակաբար վարում էր ազգային փոքրամասնությունների մեջ հնարավորինս շատ ինքնակառավարման կենտրոններ ստեղծելու քաղաքականություն, որով առավել կուժեղացվեր պետական վերահսկողությունն այդ շրջանակներում: Սակայն իրականում Թուրքիան հայ կաթոլիկ համայնքը միլլեթ ճանաչեց եվրոպական տերությունների ուժեղ ճնշման ներքո:

19-րդ դ. կեսից Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Օսմանյան կայսրության մյուս հայաշատ շրջաններում տարածվեց նաև ավետարանականությունը: 1847թ. հուլիսի 1-ին Հայ ավետարանականները ևս ճանաչվեցին որպես առանձին «միլլեթ» (ազգ) [52]

1860-ական թվականներից Թուրքիայի տարբեր շրջաններում հայ ավետարանական եկեղեցիները կազմակերպեցին Բութանիայի, Արևելյան Կիլիկիո, Կենտրոնական միությունները:Դա իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև

---

[51]Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթողիկե եւ Ավետարանական համայնքը Թուրքիայում. ժամանակակից միտումներ, Երևան, 2012, էջ 12-19:
[52]Քասունի Ե.,Լուսաշաւիղ, Պատմութիւն հայ ավետարանական շարժման, Պէյրութ, 194, էջ 18:

Թուրքիայի համար: Օգտագործելով կաթոլիկ և բողոքական համայնքների գոյությունը՝ օտար պետությունները միջամտում էին Թուրքիայի ներքին գործերին՝ իրենց հավատակիցների իրավունքները պաշտպանելու անվան տակ: Հարկ է նշել, որ միսիոներների գործունեությունը Թուրքիայում անհնարին կլիներ առանց մեծ տերությունների աջակցության: Այսպես, Օսմանյան կայսրություն ոտք դրած առաջին բողոքական միսիոներները վայելում էին Անգլիայի, իսկ մի քանի տարի անց՝ նաև ԱՄՆ-ի հովանավորությունը: Սկսած 1810թ.՝ ամերիկյան «American Board Of Commissioners For Foreign Missions» ընկերությունն ակտիվորեն աջակցում էր Օսմանյան կայսրության տարածքում գործող միսիոներական կառույցներին, իսկ 1819թ. սկսած՝ այս կազմակերպության անդամներ Փ. Ֆիսքը և Լ. Փարսոնսը ժամանում են Օսմանյան կայսրություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ժամանակ ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև դիվանագիտական հարաբերություններ չկային, անհրաժեշտության դեպքում ծագած խնդիրները լուծվում էին անգլիական դեսպանատան միջոցով: 1830թ. ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև առևտրական պայմանագիր է կնքվում, որը հեշտացնում է ամերիկյան միսիոներների գործունեությունը[53]:

Աստիճանաբար ԱՄՆ-ի <<մշակութային իմպերիալիզմի>> տեսության իրականացման գործում մեծ դերակատարություն են ունենում ոչ պետական դերակատարները՝ միսիոներները, որոնք նպաստում էին օտար երկրներում ԱՄՆ-ի ներկայության ազդեցությանը[54]:

Արդեն 1830թ. Բուրսայում, Իզմիրում, Ստամբուլում բացվում են բողոքական դպրոցներ:[55] 1844թ. Բարձր Դուռն արգելում է միսիոներների գործունեությունը Տրապիզոնում, Բուրսայում և Էրզրումում: Սակայն կարճ ժամանակ անց Անգլիայի միջամտությամբ այս խնդիրը հարթվում է: 1847թ. Անգլիայի դեսպանը հանդիպում է Մուսթաֆա Ռեշիդ փաշային, և սուլթան Աբդուլ Մեջիդը պաշտոնապես ճանաչում է բողոքական համայնքը: Այս առիթով ամերիկյան միսիոներները շնորհակալական ուղերձ են հղում Անգլիայի դեսպանին:

---

[53] Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1999, էջ 5:
[54] Կիրակոսյան Ա., <<ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը 19-րդ դար-1914թ.>>, Երևան, 2014, էջ 55:
[55] «Գլոբուս» N 2, հունիս, 2008, էջ 10-14:

Այսպես՝ 19-րդ դարի երկրորդ կեսը կարելի է բնորոշել որպես եկեղեցաշինության վերելքի շրջան Թուրքիայում: 1842թ. կառուցվում է առաջին բողոքական եկեղեցին, այնուհետև 1846թ. Ստամբուլում բացվում է ևս մեկ բողոքական եկեղեցի: 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում գործում էին 417 ամերիկյան միսիոներական դպրոցներ, որտեղ սովորող աշակերտների թիվը հասնում էր 17 556-ի, իսկ 1913թ. դպրոցների թիվը հասնում է 450-ի, աշակերտների թիվը՝ 25 922-ի: Այս ընթացքում Թուրքիայի տնտեսական և քաղաքական կյանքին միջամտությունը եվրոպական երկրների համար հնարավորություն էր ստեղծում տիրապետող դիրքեր գրավել այնտեղ[56]:

Ավելին ցանկության դեպքում նրանք կարող էին բաժան-բաժան անել կայսրությունը և այն վերածել գաղութային տարածքի [57]:

Բայց Եվրոպան նման քայլի չէր դիմում: Պատճառը, ինչպես նշել է ֆրանսիացի սոցիալիստ Պիեռ Ժոզեֆ Պրուդոնը, միջազգային ասպարեզում հավասարակշռության սկզբունքի պահպանման ձգտումն էր,« միջազգային նախանձը»[58],պետությունների միջև եղած կատաղի մրցակցությունն ու պայքարը, որն իր խորքում, որպես հակակշիռ, մերժում էր որևէ առանձին տերության միահեծան իշխանությունը Օսմանյան կայսրության վրա[59]:

Իմպերիալիզմի դարաշրջանում, երբ գաղութների և արտահանման շուկաների համար մղվող պայքարը կատարյալ սրության էր հասել, իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուրի համար Թուրքիայում իշխող դիրք գրավելը կենսական խնդիր էր դարձել[60]:

Նման աշխարհաքաղաքական իրավիճակի ձևավորման արդյունքում Օսմանյան կայսրությունը դարձավ ուժերի հավասարակշռության եվրոպական համակարգի վճռորոշ օղակներից մեկը[61]:

---

[56] Սիմոնյան Հր.Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1999, էջ 20:

[57] Армянский вопрос и геноцид армян,Библиография литиратуры на русском языке 1877-1997, Составители П.О. Оганесян, Э.А. Бабаян, Е., 1998, с. 181.

[58]Прудон П. Ж., Война и мир. Исследование о принципе и содержании международного права, с. 195-196.

[59] Սիմոնյան Հր. Ռ., նշվ. աշխ., էջ 20:

[60] Գալոյան Գ.,Պատմության քառուղիներում,էջ 170,Фадеева И.Л. Османская империя и англо-турецкие отношения в середине Х1Х в.,Москва,1984, с. 29.

[61] Тодорова М.Н., Англия, Россия и Танзимат, Москва, 1983, с. 49.

Այս գործոնները Թուրքիան դարձրել էին միջազգային իմպերիալիզմի հակասությունների կենտրոն: 1895թ. վերջերից բավականին ակտիվացել և արևելյան հարցի թատերաբեմ էր ձգտում դուրս գալ նաև մեկ այլ, երիտասարդ, բայց օրըստօրե հզորացող պետություն՝ ԱՄՆ-ը: Միացյալ Նահանգները, պատրվակ բռնելով ամերիկացի միսիոներներին հասցված նյութական ու բարոյական վնասները, փորձում էին ճնշում գործադրել սուլթանի վրա և ամրապնդվել Մերձավոր Արևելքում: Հայկական ճգնաժամը օբյեկտիվորեն նպաստում էր նրանց մտադրություններին[62] :

«Արևելյան հարցը» մի անլուծելի հիմնախնդիր էր դարձել: 1878թ. Բեռլինի վեհաժողովը ժողովուրդներին խաղաղություն չբերեց[63]: Արևելյան հարցը, ամբողջությամբ վերցրած, մնաց չլուծված: Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի համար խոշոր տերությունների պայքարը մնում էր օրակարգում, նրանց հակամարտությունները գնալով ավելի ու ավելի էին ուժեղանում[64]:

Սուլթանական կառավարությունը, օգտվելով տերությունների անհամաձայնությունից, մշակեց հայերի բնաջնջման ծրագիրը՝ բարենորոգումներ իրականացնելուց խուսափելու, Հայկական հարցը հրապարակից հանելու և իր ներքին գործերին եվրոպական պետությունների միջամտություններին ընդմիշտ վերջ տալու դիտավորությամբ[65]:

Այդ էր Հայկական հարցի «լուծման» թուրքական եղանակը[66]: Դեռևս, 1878թ. սուլթան Աբդուլ Համիդի առաջին նախարար Քյամիլ փաշան հայերին բնաջնջելու, «հայ ազգը իսպառ վերացնելու» կոչ արեց:

Պատահական չէ, որ Ֆրանսիացի հրապարակախոս Դումերկը, գնահատելով 61-րդ հոդվածը, գրում է. «Հակակշռի պահանջը, դադարելով երաշխիք լինել, վիրավորանք էր պարզապես, այն ավելին չէր, քան պրովոկացիա: Բեռլինի դաշնությունն ավելին էր, քան սխալը, այն ոճիր էր, Բեռլինի դաշնագրության տողերի միջին, մի դև հազիվ տեսանելի

---

[62] Մկրտչյան Լ., Զեյթունի ապստամբությունը 1895-1896թթ., Երևան, 1995, էջ 83-84:
[63] Амфитеатров А., Армянский вопрос, С. Петербург, 1906, с. 19.
[64]Վարդանյան Հ.Գ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 83:
[65]Ահարոնյան Գ., Մեծ երազի ճամբուն վրա, Լոս Անճելես, 1986, էջ 103:
[66] Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությիւնը, Երևան, 1994,էջ 19:

գրերով գրել էր 1879-1916 թվականների ամբողջ ծրագիրը, այդ գրերը սկսեցին քիչ առ քիչ պարզվել, որպես ջարդերի կարմիր արյանգույն, որպես հրդեհի, կրակի գույն»[67]:

Նշված վեհաժողովից հետո, երբ Հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային ու կրոնական հալածանքները, կյանքի ու գույքի անապահովությունը, հարկային ծանր լուծն ու գավառային պաշտոնյաների չարաշահումներն ավելի մեծ չափերի հասան[68]:

Դրան հետևեցին հայերի բնաջնջման նոր պոռթկումները 1890-ական թթ: Կոտորվեց ավելի քան 300 հազար հայ, ավերվեց ավելի քան 2500 բնակավայր:

Անգլիական դիվանագիտության կարկառուն դեմքերից մեկը՝ Լլոյդ Ջորջը քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո խոստովանում էր՝ Հայաստանը «զոհաբերվեց մեր կողմից կերտած հաղթանակի զոհասեղանին>> և որ <<Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թվականների սարսափելի սպանդներին և 1915 թվականի զարհուրելի կոտորածին…Հենց մենք տվինք թուրքերին հնարավորություն իրագործելու այդ ոճրագործությունը»[69]:

Դավանական փոքրամասնությունների նկատմամբ Աբդուլ Համիդի կիրառած վայրագ քաղաքականությունը օբյեկտիվորեն նպաստում էր քարոզչության և գործունեության հաջողություններին ոչ միայն հայերի, այլև այլադավան մյուս հանրությունների մեջ: Այս տեսակետից հատկանշական են նրանց առնչությունները ասորիների հետ:

Ասորիների՝ ջուլոների մոտ դպրոցներ չեն եղել, իսկ ժամասացությունը կատարվել է ժողովրդին անհասկանալի հին սիրիական ձևով[70]: 19-րդ դարի վերջին անգլիական միսիոներները այնտեղ բաց արին մի քանի դպրոցներ: Նրանք Նյու Յորքում և Ուրմիայում սկսեցին գրքեր տպագրել և տարածել ասորիների մեջ: Կաթոլիկների կրոնը ևս, ինչպես ամենուր, այնտեղ էլ տարածվում էր փայլուն ոսկիներով և ասորիներից

---

[67] Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, Աշ. Հովհաննիսյանի անձնական արխիվ, թղթ. 24411, վավ. 126, թ.6:

[68] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, էջ 6:

[69] Джордж Л., Правда о мирных договорах, т.2, Москва, 1957, стр. 390.

[70] Խոսրոևա Ա., Ասորիների ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և հարակից թուրքաբնակ վայրերում 19-րդ դարի վերջ-20-րդ դարի առաջին քառորդ, Երևան, 2004, էջ 42:

շատերը սկսեցին կաթոլիկություն ընդունել, շատ անգամ այն վերապահությամբ,երբ <<հենց որ դադարում են իրենց սիրաշահել, վերադառնում են հին հավատին>>[71]:

Վերոնշյալ հանգամանքները փաստում են այն մասին, որ բողոքականության տարածման պատճառները օսմանահպատակ հայերի շրջանում պետք է փնտրել առաջին հերթին Թուրքիայի ներքին դրության մեջ, նրա հպատակության ներքո գտնվող քրիստոնյաների անմխիթար վիճակի նրանց նկատմամբ իրականացվող տարաբնույթ բռնաճնշումների մեջ, ինչը պարարտ հող նախապատրաստեց բողոքական միսիոներության տարածման համար ինչպես արևմտահայության, այնպես էլ օսմանահպատակ մյուս քրիստոնյաների շրջանում:

Պատմական փաստերը վկայում են նաև այն մասին, որ ասորիները ևս արևմտահայերի նման իրենց փրկության հույսը հաճախ կապել են Ռուսաստանի միջամտության հետ; Ասորիների հոգևոր առաջնորդ Մարշիմոնի հետ զրույցի ժամանակ այն հարցին, թե նա ի վիճակի է արդյոք Թուրքիայի հետ Ռուսաստանի պատերազմի դեպքում զորքեր հանել վերջինիս օգնելու նպատակով, Մարշիմոնը պատասխանում է . «Եթե Ռուսաստանն իր զորքերով գրավի Վանը և զենք տա նեստորականներին, ապա ինքը երաշխավորում է, որ հենց այժմ կարող է հանել 40 հազարանոց բանակ»[72]:

Միսիոներների և հոգևոր հաստատությունների կողմից արևմտահայերին ցույց տրվող օգնությունը, սակայն, լոկ շահադիտական գործարք չէր: Իրատեսորեն մոտենալով հարցին և նշելով, որ, իրոք, դավանափոխությունն էր եվրոպական միսիոներների և կրոնական կազմակերպությունների ձեռնարկումների հիմնական շարժառիթը, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ պատմական այդ ժամին դա օգնություն էր որը, անտուն, մահվան բերանն ընկած հայ մանուկներին ու տառապյալներին՝ նրանց կյանք տալու համար:

Չնայած միսիոներների ներդրած նյութական զգալի միջոցներին և զանազան կրթական և այլ հաստատությունների հիմնմանը՝ սկզբնական շրջանում նրանց չհաջողվեց ձեռք բերել զգալի թվով համակիրներ: Սակայն 1890-ական թվականներին սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի կազմակերպած արևմտահայության և 1909թ. Կիլիկիայի հայության զանգվածային կոտորածներից հետո իրադրությունը կտրուկ

---

[71] Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը 1409—1921 թթ., Երևան, 1969, էջ 91:
[72] Բայբուրդյան Վ.Ա., Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ., Երևան, 2006, էջ 83-84:

փոխվեց: Սպանդից ողջ մնացած և ծնողազուրկ երեխաների մի մասի հոգածությունն ստանձնեցին տարբեր ազգությունների և երկրների կաթոլիկ և բողոքական միսիոներները: Այդ և հետագա տարիներին աճեց հատկապես բողոքականություն ընդունած հայերի թիվը[73]:

Վերին աստիճանի հատկանշական է, որ Մերձավոր Արևելքում միսիոներները վերջնականապես գտել էին իրենց գործունեության համար անսպառ աղբյուր՝ հայ ժողովրդին: Բաժանված երեք բուրժուական-ասիական պետությունների միջև, որոնցից մեկը՝ ցարական Ռուսիան իր ոչ պակաս իմպերիալիստական ախորժակներով, շատ քիչ նպաստավոր պայմաններ կարող էր ընծայել այդպիսի գործունեության համար, մյուս երկուսն էլ /Թուրքիան և Պարսկաստանը/, ընդհակառակն, իրենց թուլությամբ, անզորությամբ և պարտվածությամբ ստիպված էին հաշտվել և համակերպվել իրենց հպատակ ժողովրդի շրջանում միսիոներական գործունեության հետ, որը «երկնային թագավորության» և «կենդանի խոսքի» ճանապարհ էր հարթում իմպերիալիստական երկրների առջև: Բողոքական միսիոներության տարածմանը նպաստում էին ինչպես բացվող որբանոցները, այնպես էլ որբանոցի հետ զուգընթաց հիմնադրվող դպրոցը, որի դռները լայնորեն բացվում էին ամբողջ ժողովրդի առջև: Այնտեղ ձրի ուսում ստացողները որոշ պարտավորություններով, հիշողություններով և սովորություններով կապվում էին միսիոներության հետ: Այս բոլոր հիմնարկները կողմնակի և անուղղակի կերպով դեպի աղոթատուն, դեպի իրենց անմիջական և անսքող նպատակն էին առաջնորդում բոլոր նրանց, ովքեր ամենահեռավոր չափով միայն կապված էին միսիոներների հետ՝ թեկուզ մեկ անգամ հիվանդի այցելություն խնդրելով, կամ դեղատնից դեղ առնելով: Ըստ որում յուրաքանչյուր ոք ինքն էր որոշում իր նվիրվածությունը միսիոներական գործին և այդ որոշումն ապացուցում էր ժողովարան հաճախելով: Դա անվրեպ չափանիշն էր բոլորի համար. գործազուրկների համար, որոնք ուզում էին ապահովել իրենց ստացած գործի հարատևությունը, զանազան արհեստավորների, պաշտոնյաների համար, որ ուզում էին առաջ քաշվել, աշակերտների համար նույնիսկ, եթե ուզում էին լավագույնը լինելու նախապայմանը ձեռք բերել:

---

[73] Տերոյան Վ.,նշվ.աշխ.,էջ 5:

Այսպես օրինակ, Մարզվանի ամերիկյան քոլեջում առաջնային կարգով անվճար ուսուցման կամ նպաստի հնարավորություն էին ստանում այն աշակերտները, ում ընտանիքի անդամները մասնակցում էին բողոքական քարոզչությանը :

Բողոքականությանը հարելու նյութական դրդապատճառների մասին է փաստում նաև 1895թ. Ուրֆայում բողոքական քարոզիչերից մեկի զրույցը մի հայ գյուղացու հետ: Քարոզիչը, հանդիպելով նախկինում ժողովարան այցելող մի հայի՝ Ա.Ապուսեֆյանին, փորձում է տեղեկանալ, թե ինչու վերջինս այլևս չի ունկնդրում բողոքական քարոզներին, նա պատասխանում է,որ անցյալ ամիս տրված նպաստի փոխարեն,ինքն արդեն մի քանի անգամ այցելել է բողոքական եկեղեցի[74]:

Այսպիսով, բողոքական միսիոներների գործունեության ծավալման հիմնական նախադրյալներն ընկած էին, նախ, Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների հատկապես՝ հայերի նկատմամբ իրականացվող տնտեսական, ազգային, կրոնական բռնությունների իրողությունը:Այնուհետև, այդպիսի նախադրյալ պետք է համարել արևմտյան տերությունների, իսկ 1890-ական թթ. սկսած, նաև ԱՄՆ-ի քաղաքական հաշվարկները Թուրքիայում միսիոներական հենակետեր ստեղծելու միջոցով օսմանահպատակ ոչ մահմեդական հանրությունների մեջ գոյացնել կաթոլիկական և բողոքական համայնքներ, որոնք լայն հնարավորություններ կընձեռեին այդ երկրում իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար: Այս վերջին հանգամանքն ի հայտ էր բերում Օսմանյան պետության երկիմաստ վերաբերմունքը ամերիկյան բողոքականների /և առհասարակ արևմտյան քարոզչության/ նկատմամբ: Տեղի տալով տերությունների ճնշումներին, օսմանյան իշխանությունները նպաստում էին քարոզչությանը՝ այն դիտելով որպես քայքայիչ գործոն՝ երկրի ոչ մահմեդական և ավանդական հանրությունները պառակտելու և նրանց սեփական քաղաքական ընթացքից ելնելով /օսմանիզմ, պանիսլամիզմ, պանթուրքիզմ/:

Այդ է պատճառը, որ միսիոներական գործունեության սկզբնական շրջանում `19-րդ դարի առաջին քառորդում, օսմանյան իշխանությունները որոշակի արտոնություններ շնորհեցին բողոքականներին. տալով նրանց առանձին համայնքի

---

[74] Долян М., Распространение протестантства американскими миссионерами в Османской империи (1908-1917 гг.) - Тезисы докладов XIУ Республиканской научной сессии молодых востоковедов. Ереван, 1988, стр.3.

կարգավիճակ՝ թուրքական կառավարությունը իրավունք տվեց բողոքականներին ունենալ առանձին ուսումնական և հոգևոր հաստատություններ, դեղատներ, արհեստանոցներ և այլն:

1890-ական թթ. բողոքական քարոզիչներն անարգել կարող էին շրջել հայաբնակ վայրերով, կարդալ քարոզներ, տարածել կրոնական գրականություն `չհանդիպելով որևէ խոչընդոտի տեղական իշխանությունների կողմից [75]:

Դա այն դեպքում, երբ հայերի կողմից անցկացվելիք ցանկացած, նույնիսկ կրոնական բնույթ ունեցող միջոցառման համար, նախապես պետք էր ստանալ թույլտվություն նահանգապետի կողմից, որպեսզի հայ համայնքը չմեղադրվեր ապստամբության կազմակերպման և անհնազանդության մեջ[76]:

Սա, անշուշտ, օտար, այդ թվում և ամերիկյան բողոքական քարոզչության հաջողությունների նախադրյալներից մեկն էր: Սակայն միևնույն ժամանակ օսմանյան քաղաքականությունը մի հայտնի չափով ընդդիմանում էր տերությունների միջամտությանը Թուրքիայի գործերին և այդ չափով իսկ սահմանափակում էր քարոզչության ազդեցությունն ու ծավալումը /խրախուսելով համայնքների դիմակայությունը օտար քարոզիչներին, երբեմն խոչընդոտելով միսիոներների գործունեությանը և այլն/:

Պատահական չէ, որ արդեն 1895թ. սկսած նկատելի է դառնում օսմանյան իշխանությունների զգուշավոր քաղաքականությունը միսիոներական աշխատանքի նկատմամբ: Այսպես, օրինակ, հայտնի է, որ Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերում առաքելականների կողմից բողոքական հայերի նկատմամբ կիրառվող խտրականություններն ու հալածանքները լռելյայն խրախուսվում էին թուրքական իշխանությունների կողմից: Նմանատիպ մի օրինակի ենք հանդիպում Բաբերդում, ուր 1897թ. աշնանը բողոքական հայերին շուկայում փորձում են մթերքն ավելի թանկ գնով վաճառել, ի վերջո դա վեճի առիթ է դառնում:

---

[75] ՃիզմէճեանՄ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրէզնօ, 1930, էջ 304:

[76] Петросян Ю.А., Османская империя: могущество и гибель, Москва, 1990, с. 180.

Եվ չնայած այն հանգամանքին, որ թուրք ոստիկանները շրջում էին շուկայում, նրանցից որևէ մեկը չի խառնվում միջադեպին՝թողնելով, որ հայերը դուրս քշեն շուկայից բողոքական քարոզչին և նրա ուղեկիցներին[77]:

Ավելացնենք, որ ամերիկյան միսիոներների հաջողության նախադրյալներից պետք է համարել նրանց ոչ քիչ ներկայացուցիչների մարդասիրական վերաբերմունքը տառապյալ հայերի նկատմամբ՝ հատկապես թուրքերի կազմակերպած ջարդերի և կոտորածների պայմաններում, 1890-ական թթ. և հետագայում:

Պատահական չէ, որ 1895թ. կոտորածների ժամանակ Բիթլիսի իշխանությունները պահանջում էին, որ միսիոներները հեռանան Սասունից[78] :

Այդ առիթով ԱՄՆ դեսպանությունը բողոք է ներկայացնում թուրքական կառավարությանը՝ միսիոներների «բարեգործական մտադրությունները» չհասկանալու համար: Պահանջվում է նաև թույլատրել նրանց գործունեությունը, քանի որ միսիոներների մեծամասնությունը ամերիկյան քաղաքացիներ էին:Միսիոներների հեռանալը Սասունից կնշանակեր առանց այդ էլ թշվառ վիճակում գտնվող հայությանը թողնել առանց օգնության որեւէ հույսի: Միսիոներների բացակայությունը նաև հնարավորություն կընձեռեր թուրքական իշխանություններին գործել առանց անցանկալի վկաների:

Քիչ չեն դեպքերը, երբ միսիոներներն հայերին օգնություն տրամադրելու համար վտանգել են իրենց կյանքը: Այսպես, օրինակ, Ակնի բողոքական քարոզիչները 1896թ. ճեղքում են թուրքական զինվորների շրջափակումը և հայկական թաղամասերից կարողանում են դուրս բերել մեծ թվով հայերի՝նրանց ժամանակավոր ապաստան և սնունդ տրամադրելով[79]:

Հաճախ միսիոներների միջնորդությամբ, նրանց վկայությունների շնորհիվ ազատ են արձակվել նաև անհիմն մեղադրանքների արդյունքում բանտարկված հայերը:

Այսպես Չարսանճագի գյուղերից մեկում 1898թ. 15 հայ տղամարդկանց մեղադրում են զինված հարձակում կազմակերպելու փորձի մեջ, թեև իրականում նրանք փորձել էին գյուղից դուրս գտնվող անտառային մի հատվածում հողին հանձնել հիվանդության

---

[77]http://cheloveknauka.com/turetsko-amerikanskie-otnosheniya-1908-1917-gg-i-rol-missionerskih-organizatsiy#ixzz2IzNI6DJx.

[78] Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 315:

[79] http://www.cnewa.us/source-images/Roberson-eastcath-statistics/eastcatholic-stat10.pdf.

հետևանքով սատկած մի քանի խոշոր եղջերավոր կենդանիների՝ վարակից խուսափելու համար: Ընդ որում այդ մասին նախապես տեղեկացրել էին թուրք վալլիին: Միայն ամերիկյան միսիոներների վկայության շնորհիվ է հնարավոր դառնում հարթել այս միջադեպը[80]:

Այնուամենայնիվ, չնայած միսիոներների բազմաթիվ մարդասիրական ձեռնարկումներին, արևմտահայերը հիմնականում կասկածանքնով էին վերաբերվում նրանց գործունեությանը: Այդ առումով մեծ դերակատարում ուներ նաև Հայ ազգային եկեղեցու քարոզչությունը: Հայ առաքելականներին կոչ էր արվում ոչ միայն խուսափել բողոքականների հետ առնչություններից, այլև՝ բացառել որևէ կենցաղային շփում բողոքականների և նույնիսկ նրանց ազգականների հետ[81]:

Միսիոներների գործունեությունն ավելի հանգամանորեն պարզաբանելու համար նպատակահարմար ենք համարում ուսումնասիրել Արևմտյան Հայաստանի նահանգներում նրանց հիմնած բողոքական կենտրոններն ու կազմակերպությունները, ծավալած աշխատանքների առանձնահատկությունները:

---

[80] «Ավետաբեր», 1904, թիվ 8, էջ 130:
[81] Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան,1955, էջ 103:

1.2. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դարեր շարունակ հայ ժողովուրդը, զրկված լինելով պետականությունից, գտնվել է օսմանյան և պարսկական, իսկ հետագայում՝ նաև ռուսական կայսրությունների տիրապետության տակ: Առանձնապես ծանր է եղել օսմանյան բռնակալության տակ գտնվող արևմտահայության վիճակը: Հայ և օտար աղբյուրների տվյալներով 19-րդ դարում այստեղ ապրում էր ավելի քան 4 միլիոն հայ[82]:

19-րդ դարի վերջերին Թուրքիան դեռևս հետամնաց երկիր էր՝ չնայած եվրոպական զարգացած երկրները Օսմանյան կայսրությունը գաղութացնելու նպատակով այստեղ ներմուծում էին արդյունաբերական ապրանքներ և արտահանում գյուղատնտեսական մթերքներ ու հանքային հանածոներ: Ընդհանուր առմամբ, 19-րդ դարը Թուրքիայի պատմության մեջ առանձնանում է իբրև պատերազմների և ռազմական բախումների, անհաջող բարեկարգումների ու պարտությունների դրամատիկ ժամանակաշրջան, որից փորձում էր եզրակացությունների հանգել Բ.դուռը: Թուրքիան արդեն կորցրել էր իր երբեմնի հզորությունը, մասնատվել և սեղմվել էր Փոքր Ասիայի արևմտյան հատվածում: 19-րդ դարի 60-ական թվականներին կազմվեց վիլայեթների կանոնագիր, ըստ որի Օսմանյան կայսրությունը բաժանվեց 26 վիլայեթների և 123 սանջակների: Հայկական նահանգներն էին Սեբաստիան, Էրզրումը, Խարբերդը, Վանը, Բիթլիսը, Դիարբեքիրը: Հայաշատ էին նաև Ադանան, Այդընը, Էդիրնեն և այլ վիլայեթներ[83]:

Օսմանյան պետության ղեկավարների համար առաջնային նշանակություն ձեռք բերեց երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, ինչը պահանջեց նոր միջոցների որոնում քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները չեզոքացնելու համար[84]:

Այդ քաղաքականությունն ուղեկցվեց քրիստոնյա ժողովուրդների վրա դրված հարկային բեռի ծանրացմամբ, կրոնական, քաղաքական ու բարոյական հողի վրա տեղի

---

[82] «Ժամանակ», 1908, թիվ 22:
[83] Eddy D.B.,What Next in Turkey, Boston, 1913,p. 67.
[84] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն.ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը /1876-1920/, Երևան, 2009, էջ 44:

ունեցող բռնաճնշումներով, որոնք դժվարին կացության մեջ դրեցին հատկապես օսմանահպատակ հայությանը[85] :

Նկարագրելով այդ վիճակը՝ 1868թ. օգոստոսին Կարինից Գ.Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկի հեղինակը գրում է, որ գավառահայությունը «ողբացող անգամ չունի, յոյսը միայն երկնքին է մնացել...»[86]:

Նման իրադրությունը առավել դյուրին դարձրեց օտարերկրյա կրոնական-բարեգործական առաքելությունների գործունեությունը պետական մակարդակով հալածվող քրիստոնյա բնակչության շրջանում:

Պատահական չէ, որ կրոնական ու քաղաքական, տնտեսական հալածանքների ծանր բեռից դուրս գալու ուրիշ ուղի չտեսնելով՝ արևմտահայության կամազուրկ մասը դիմում էր ազգակործան միջոցին՝ դավանափոխությանը: Օգտվելով առիթից՝ իրենց անսահմանափակ գործունեությունն էին ծավալել կաթոլիկ և բողոքական քարոզիչները: Բուն դնելով Արևմտյան Հայաստանում, շահելով սուլթանի հովանավորությունը՝ նրանք քաղաքականապես անապահով ժողովրդից պոկում էին դիմադրողականությունը կորցրած մասին, կազմալուծում ժողովրդի միասնությունը, դրանով իսկ իրենք վերածվում էին թուրքական քաղաքականությունն իրականացնող գործիքի: Դա մի կացություն էր, երբ «Խաւարի քօղով ծածկեալ և նախապաշարեալ յամենայնի», դրան գումարած իշխանությունների հայաջինջ քաղաքականությունը, նրա գործադրած «սոսկալի հալածանքները բոլորովին յուսահատութեան մատնած է հայն»,- 1887թ.մայիսի 25-ին Բաբերդից Գ.Սրվանձտյանցին գրում է Ասատուր Մութաֆյանը[87]:

Այս առումով ուսումնասիրվող ժամանակաշրջանում հատկապես մեծ հաջողություններ արձանագրեցին ամերիկյան բողոքական միսիոներական կազմակերպությունները, որոնք իրենց մասնաճյուղերը ստեղծեցին Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում [88]:

Պատահական չէ, որ ամերիկյան հեղինակներ Լ. Թոմասն ու Ռ. Ֆռայսը գնահատում են միսիոներական գործունեությունը Թուրքիայում որպես ամերիկյան

---

[85] Лазарев Я.Д., Причины бедствий армян в Турции и отвественность за разорения Сасуна, Тифлис, 1895, с. 32.

[86] ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ 153, 2-րդ բաժին, գ. 146, թ. 1:

[87] ԳԱԹ, նույն տեղում, գ. 720, թ. 1

[88] Սև գիրք.նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և հայոց ցեղասպանության մասին, Երևան, 2011, էջ 384:

բողոքականության ողջ պատմության <<ամենահմայիչ և զարմանալի, ինչպես նաև ոգեշնչող դրվագներից մեկը>>[89]:

Միսիոներական աշխատանքը հովանավորվում էր մեծ տերությունների կողմից՝ նպատակ ունենալով միսիոներական գործունեության միջոցով Թուրքիայի տարածքում իրականացնել այդ երկրների քաղաքական շահերը: Բարեգործական, կրթա-լուսավորական աշխատանքների շնորհիվ ամերիկյան միսիոներներին հաջողվեց քարոզչական գործունեություն ծավալել արևմտահայության շրջանում՝ Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում կազմավորելով բողոքական մարդաշատ համայնքներ:

Հարկ է նշել, որ միսիոներությունը երբեք չի անտեսել իսլամի հետևորդների շրջանում ավետարանականություն քարոզելու գաղափարը, բայց այդ գաղափարին անցնելու համար նրանք դիմում էին զարտուղի միջոցների: Բողոքական քարոզչության հիմքում դրվում էր հավատացյալի և Աստծո միջև անմիջական կապ հաստատելու գաղափարը[90]:

Բողոքականության տարածման և քարոզչական աշխատանքների հաջողության գրավականն էր Ավետարանի լայն տարածումը բնակչության շրջանում, ինչը հետագայում հնարավոր կդարձներ նաև դրա մեկնաբանումը բողոքական քարոզիչների կողմից: Բողոքականները իրենց են վերագրում «Ավետարանական» տիտղոսը, թեպետ մյուս քրիստոնյաները ևս օգտագործում են ավետարան անվանումը, որը հունարեն «եվանգելիա» բառի թարգմանությունն է:

Այն Նոր Կտակարանի մեջ բազմիցս գործածված է՝ գլխավորապես Մեսիայի գալստյան ավետիսի համար: Ավետարանական են կոչվում այն անձինք և եկեղեցիները, որոնք իրենց կրոնական վարդապետությունները և պարտականությունները հիմնում են Ավետարանի վրա: Ըստ բողոքականների, այն եկեղեցիները և կրոնական վարդապետությունները, որոնք այս կամ այն սինոդի կամ եկեղեցու հայրապետի որոշումն են հեղինակություն համարում, պետք չէ, որ Ավետարանական կոչվեն [91]:

---

[89] Կիրակոսյան Ա.,<<ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը 19-րդ դար-1914թ.>>,էջ 72:
[90]« Ավետաբեր», 1902, թիվ 30, էջ 266:
[91] «Ավետաբեր», 1904, թիվ 8, էջ 134:

Ավետարանական եկեղեցիները <<Պորտ ընկերության>> առջև պատասխանատվություն էին կրում Աստվածաշնչի տարածման համար, ինչը հնարավոր էր դառնում ոչ միայն հովիվների և ուսուցիչների, այլև եկեղեցիների հոգաբարձու մարմինների և եկեղեցու անհատ անդամների աջակցության շնորհիվ: Այս առումով խիստ կարևորվում էր «Ամերիկյան աստվածաշնչի ընկերությանը» Ավետարանների բաժանման, տարածման վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների հաղորդումը, որի վրա հիմնվելով էլ վերոնշյալ ընկերությունը որոշում էր հաջորդ տարում տպագրվելիք կրոնական գրականության ծավալները[92]:

Հայ բողոքականների և իրենց դավանանքի հետագա ծավալման նպատակով միսիոներնները XX դարասկզբին ևս տպագրում էին ս. Գիրք, Նոր կտակարան /այդ թվում և հայատառ թուրքերեն/, Աստվածաշունչ, Ավետարան և այլն: Հրատարակչական գործին մեծապես նպաստում էին Իզմիրում և Կ.Պոլսում հիմնված միսիոներական տպարանները: Բացի վերոնշյալ գրականությունից հայ ավետարանականները նախաձեռնեցին մշակել եղած գրականությունից տարբեր կրոնական և բարոյական գրականություն: Քարոզչական աշխատանքների մեթոդների ու ձևերի մասին հնարավոր է դառնում պատկերացում կազմել առանձին բնակավայրերում բողոքականների գործունեության ուսումնասիրության և վերլուծության շնորհիվ:

Այսպես՝ ամերիկյան բողոքական ամենամեծ համայնքներից մեկը կազմավորվեց Խարբերդում: Միսիոներական գործունեության վերլուծության նպատակով անդրադառնանք նահանգի ժողովրդագրական և տնտեսական նախադրյալներին:

Խարբերդը, որը գտնվում էր պատմական Հայաստանի Ծոփք նահանգի տարածքում, համարվում է «Հայ ժողովրդի ամենավաղ ծագման հիմնական տարածքներից մեկը»[93]:

Այն նաև համարվում էր Միջին Ասիայի կամ Արևելյան Թուրքիայի բարգավաճ տարածքներից մեկը[94]:

Կ.Պոլսի պատրիարքարանի 1912 թ. վիճակագրական տվյալների համաձայն Խարբերդի նահանգում ապրում էր 168 հազ. հայ, 102 հազ. թուրք, 95 հազ. քուրդ[95]:

---

[92] «Ավետաբեր», 1904, թիվ 20, էջ 412:
[93] Hovhannisian R., Armenian Tsopk /Kharpert, Armenian Tsopk/ Kharpert, Costa Mesa, 2002, p. 28.
[94] Bliss Rev.E., Turkey and the Armenian Atrocites, Edgewood Publishing Company, 1896, p. 427.

Խարբերդի նահանգի որոշ բնակավայրերում ապրում էին նաև հույներ և ասորիներ[96] :

Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսը գրում է. «Տարածաշրջանի առևտուրը հիմնականում հայերի ձեռքում էր, ըստ էության հայերն էին նաև դրամատների տերերը, բժիշկները, ատամնաբույժները, կոշկակարները և կենցաղում խիստ անհրաժեշտ մյուս արհեստավորները»[97]:

Հավանաբար վերոնշյալ հանգամանքներն էլ պատճառ հանդիսացան, որպեսզի նահանգում հաստատված ամերիկյան միսիոներներն իրենց գործունեությունը կենտրոնացնեն հատկապես հայության շրջանում: Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդն իր ամենամեծ կայաններից մեկը հիմնել էր Խարբերդում:1853թ. ամերիկյան առաքելությունը փոքր կայան էր հիմնել նաև Արաբկիրում [98]

Խարբերդում հաստատված առաջին ամերիկացի միսիոները պատվելի Դանմորն էր, ով 1855թ. հիմնադրեց բողոքական դպրոց[99]: Նրա կարծիքով Խարբերդը կայսրության ամենախոստումնալից միսիոներական դաշտն էր [100]:

1853թ. Պորտը Արաբկիր էր ուղարկել նաև պատվելի Քլարք Պորտին, որին հաջորդեցին պատ. Ռիչարդսոնն ու պատ. Փալերդը իրենց ընտանիքներով [101]:Վերոնշյալ անձանց քարոզչական աշխատանքների շնորհիվ բողոքականությունն իր արմատները գցեց Խարբերդում: Միսիոներների մյուս խումբը, որ դեռևս 19-րդ դարի վերջերից գործում էր Խարբերդում, Գերմանիայից էր: Գերմանացի միսիոներները դեռևս 1897թ. Մեզրեում երկու մեծ շենք կառուցեցին 1902թ. նրանք արդեն որբանոցի 5 շենքեր էին կառուցել՝ 700 երեխաների համար[102]:

---

[95] ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ. 399, թ. 6:
[96] Բախտիկեան Ս., Ոսկեգետակ, Գ հատոր, Պէյրութ, 1945-48, էջ 319:
[97] Դեվիս Լ., Սպանդի նահանգը.Ամերիկյան դիվանագետի զեկուցագրերը հայկական ցեղասպանության մասին,1915-1917թթ.,Երևան,2001,էջ 124:
[98] Hewsen R., Armenia. A Historical Atlas, Chicago and London, 2001, p. 197.
[99] Great need Over The Water, The Letters of Thereza Huntington Ziegler, Missionary to Turkey, 1898-1905, Gomidas Institute, Michigan, 1999, p. 51.
[100] Յիշատակարան Եփրատ գոլէճի, Պոստոն, 1942, էջ 37:
[101] «Ավետաբեր», 1902, թիվ 39, էջ 345:
[102] Վահէ Հ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 455:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Խարբերդում փոքր կայան ունեին նաև ֆրանսիական կապուցինները և Անարատ Հղության կաթոլիկ հայ քույրերը[103]:

Թեև ամերիկյան կայանի հիմնական աշխատանքը կենտրոնացած էր երկու քաղաքներում, բայց, միսիոներների գործունեությունը չէր սահմանափակվում քաղաքներով և ընդգրկում էր նաև գյուղական համայնքներ: Միսիոներական աշխատանքի մի մեծ բաժին կատարում էին կին միսիոներները, ովքեր շրջելով Խարբերդի դաշտի տասնյակ գյուղերով, հավաքներ, դասընթացներ էին կազմակերպում կանանց համար: Կարճ ժամանակամիջոցում միսիոներական աշխատանքների արդյունքում նկատելիորեն ուժեղացավ ԱՄՆ-ի քաղաքական ազդեցությունը Օսմանյան Թուրքիայում: ԱՄՆ կոնգրեսը երկու հյուպատոսություններ բացեց Էրզրումում և Խարբերդում: ՈՒիլյամ Դադլի Հանթերը Խարբերդում ԱՄՆ հյուպատոս նշանակվեց: Սակայն Օսմանյան կառավարությունը հրաժարվեց ճանաչել այս երկու հյուպատոսությունները, որովհետև ամեն կերպ խուսափում էր 1895թ. կոտորածների վերաբերյալ լրատվության արտահոսքից:

Օսմանյան կառավարությունը հյուպատոսությունը ճանաչեց միայն 1901թ. հոկտեմբերին[104]:1905թ. սեպտեմբեր-1908 սեպտեմբեր ամիսների ընթացքում Խարբերդի ամերիկյան հյուպատոսն էր Էվան Յանգը, 1908թ. հոկտեմբեր-1914թ. մայիս ընթացքում՝ Վիլյամ Մաստերսոնը, 1914թ. մայիսից -1917թ. ապրիլ՝ Լեսլի Դևիսը[105]:

Խարբերդի հայ բնակչության շրջանում ամերիկյան քարոզչական աշխատանքների արդյունքների մասին է խոսում Մ. Օրմանյանի հայտնի ուսումնասիրությունը, որին կցված վիճակագրական տվյալների համաձայն նահանգի հայ բնակչության ընդհանուր թվաքանակը 153200 էր, որից առաքելական՝ 142000, կաթոլիկ՝ 4500, բողոքական՝ 6700 [106] :

1903թ. նոյեմբերի 5-10-ին տեղի է ունենում Խարբերդի բողոքականների եկեղեցական միության ԼԱ գումարումը, որին ներկա էին 25 եկեղեցիների և 35 թեմերի

---

[103] Hewsen R.,Նշվ.աշխ., p.197.
[104] Merguerian B., The View from the United States Consulate, New York, 1998, p. 280.
[105] Նշվ. աշխ., էջ 284:
[106] Օրմանյան Մ., Հայոց եկեղեցի, Կ.Պոլիս, 1913, էջ 262-268:

մեջ աշխատող հովիվներ, երեցներ, ավետարանիչներ քարոզիչներ, 15 եկեղեցիների նվիրակներ[107]:

Այստեղ քննարկվում է քարոզչության միջոցների արդյունավետության և հատկապես նոր քարոզիչներ պատրաստելու հարցը, «Աստծո խոսքի» տարածումը նաև այն վայրերում, ուր դեռևս բողոքական եկեղեցիներ և համայնքներ չկային: Նույն միության 1904 թ. գումարման ժամանակ նույնպես չհաջողվեց լուծել շրջիկ հատուկ ավետարանիչ ունենալու խնդիրը: Խարբերդի Հոգևոր միության գործադիր ժողովի պաշտոնական մարմինը ներառում էր հոգևոր միության նախագահին, գրագրին, գանձապետին, ընտրված երկու երեցներին: Նախորդ գործադիր ժողովը իր 1901-1903թթ. երկու տարվա պաշտոնավարության ընթացքում աշխատել էր Աստվածաբանական դպրոցի վերաբացման, գործադիր ժողովի վերակազմության ու եկեղեցիների բացերի լրացման ուղղությամբ: Հոգևոր գործակցության ժողովը, որ կազմվել էր եկեղեցական միության կազմակերպություններից, ընդգրկում էր Պորտի միսիոներներին և նրանց թվով ընտրված երեցների ու աշխարհական բնիկների: 1904թ. որոշվեց գործակցության ժողովը վերակազմել հետևյալ ձևով ՝ ներկա 5 միսիոներների թվով ընդգրկել 5 բնիկ անդամների, որոնք պետք է ընտրվեին տեղացիներից՝ գաղտնի քվեարկությամբ: Դրանցից երեքը երեցներ էին, մեկը Եփրատ քոլեջի ուսուցիչներից էր և մեկը՝ հասարակության ընդհանուր հավանությամբ էր ընտրված: Նրանց հիմնական խնդիրն էր եկեղեցական միության կանոնագրի վերաքննությունը: Խարբերդի եկեղեցական միությունը իր կազմավորման թվականին՝ 1865թ. «Խարբերդի Աւետ.Միութեան կազմական կանոնագիրը» անունով կանոնագիր էր խմբագրել, որի համաձայն Խարբերդի եկեղեցական միության շրջանի մեջ գտնվող եկեղեցիների ու ժողովուրդների կրոնական ու կրթական գործերը պետք է կանոնակարգեր հիշյալ եկեղեցական միությունը[108]:

Խարբերդի եկեղեցական միությունն իր կազմակերպումից ի վեր քարոզչական արտոնագրի վերաբերյալ սկզբունքներ ու կանոններ է մշակել: Սովորաբար այն տրվել է Աստվածաբանական դպրոցն ավարտած անձանց, որոնք ունեին նաև քրիստոնեական կյանքի փորձառություն և գոհացուցիչ քննություն էին հանձնում եկեղեցական միության

---

[107] «Ավետաբեր», 1904, թիվ 14, էջ 248:
[108]«Ավետաբեր», 1904, թիվ 13, էջ 266:

առջև: Եկեղեցական միությունը վերահսկում էր ոչ միայն բուն Խարբերդում տարվող քարոզչական աշխատանքները, այլև `հարակից շրջաններում ավետարանականության տարածման գործընթացը:

Խարբերդի ընդարձակ և բազմամարդ բնակավայրերից մեկն էլ Հոշեն էր: Բնակիչները հիմնականում երկրագործությամբ էին զբաղվում: Ավետարանական գործն այստեղ սկսվել էր 1868թ.: Եկեղեցին 70-80 անդամներ ունենալով, հետագայում ընդարձակվում է և կարողանում դառնալ ինքնապահ: Բայց այստեղի երևելի գործիչներից շատերը մահացան, իսկ մյուսներներն էլ փոխադրվեցին և մասնավոր պաշտոնների անցան, 1900-1901թթ. նրանց թիվը մեծապես նվազել էր: Պատճառների մեջ գլխավորն աղքատությունն էր[109]:

Հայաբնակ վայրերում բողոքականության տարածման մասին վիճակագրական տվյալները փաստում են, որ քարոզչական աշխատանքներն Արևմտյան Հայաստանում տալիս էին որոշակի արդյունքներ: Այսպես օրինակ՝ 1900թ. դրությամբ Բերրիում հաշվում էր 600 տուն հայ բնակիչ՝ լուսավորչական ու բողոքական[110]: Ըստ մեկ այլ աղբյուրի ՝ նույն ժամանակ քաղաքն ուներ 800 տուն բնակիչ, որից 700-ը հայ էին[111]:

Չարսանճագի քաղաքներից Բերդակը Ա.Կոլյուբակինի վիճակագրության համաձայն ՝ ուներ 145 տուն հայ, որից 12 տունը ՝ բողոքական, և 80 տուն թուրք և քուրդ բնակիչ[112]:

Պրոֆ.Մկրտիչ Որբերյանի բերած տվյալների համաձայն՝ 1900 թ.Մալաթիա քաղաքում կար 7000 տուն՝ 35000 բնակիչներով, որից 5200 տունը՝ թուրք, 1800 տունը՝ հայ, ընդ որում՝ 1635 տունը առաքելական, 65 տունը՝ բողոքական, 80 տունը՝ կաթոլիկ և 20 տունը՝լատին[113] :

Արաբկիրը 150-ի չափ եկեղեցու անդամ ունի և որպես հոգևոր տուրք ստանում է 120 օսմ.ոսկի: Արաբկիրում 1895-1900թթ հաշվվում է 70 տուն բողոքական[114]:

---

[109] «Ավետաբեր», 1904, թիվ 14, էջ 290:
[110] Անդրանիկ, Տէրսիմ. ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիս, 1900, էջ 133:
[111] ՀԱԱ, ֆ. 476, ց.1, գ.197, թ. 9:
[112] Колюбакинь А., Материалы для Военно-Статистическаго Обозрения Азиатской Турции, Тифлис, 1890, т. 3, ч. 1, с. 226.
[113] Ալպոյաճեան Ա.,Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Բեյրութ, 1961, էջ 453-454:
[114] Колюбакинь А., Материалы для Военно-Статистическаго Обозрения Азиатской Турции, т. 3, ч. 1, с. 227.

Այսպիսով, ամերիկյան բողոքական միսիոներները լայն գործունեություն ծավալեցին Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերում՝ Մալաթիա, Արաբկիր, Թոքաթ, Սեբաստիա և այլն: Կեսարիայում բողոքականությունը հիմնադրում են Վրդանես քահանան և <<Ֆիզիքա>> Պողոսը: 19-րդ դարի կեսերին Կեսարիա են գալիս ամերիկացի միսիոներները, որոնց հաջողվում է քաղաքում և շրջակա գյուղերում՝ Թալաս, Էվերեկ, Չոմախլու, Մունճուսուն և այլն, բացել բողոքականների խմբակներ: Կեսարիայում ամերիկացիները հիմնում են եկեղեցի և դպրոց[115]:

1872-73 թթ. գյուղի բողոքականների թիվը հասնում էր 10-ի, իսկ որոշ ժամանակ՝ անց 25-30 տան: Բողոքական համայնք կար նաև Կեսարիայի Մունճուսուն գյուղում, որն ուներ իր եկեղեցին և դպրոցը :1886-1897 թթ. գյուղում բողոքականների թիվը հասնում է 300 հոգու[116]:

Միսիոներական քարոզչությանը այստեղ առատ հունձք էր սպասում՝ փաստորեն գյուղը դավանական անկլավ դարձավ շրջակա հայաբնակ գյուղերի մեջ:

Յոնճալուն Պուլանըգ գավառի մեծ ու անվանի գյուղերից մեկն է: Գյուղի բողոքական պաշտոնյան պարոն Ներսես Առաքելյանն էր, որ երկար տարիներ բարի ու ազնիվ կյանքով է ապրել: Չնայած գյուղում բողոքականությունը սկզբում արժանացել էր հասարակության պարսավանքին, հատկապես հարուստների, սակայն 1890-ական թվականներից այն ուներ իր առանձին ժողովարանը, դպրոցն ու աղոթատունը[117];

Նիկոմեդիայի Ավետ. եկեղեցին 76 անդամներից էր բաղկացած, իսկ բողոքական ժողովուրդը կազմված է 200 անհատներից[118]:

Երզնկայի հայ ավետարանական ժողովրդի քարոզիչն էր Իսրայելյանը, որին ևս հաջողվում է 1889-1896 թթ. իր շուրջը հավաքել 15 բողոքական ընտանիքներ [119]:

Հարկ է նշել, որ բողոքականության տարածմանը արտաքին ազդակներից զատ նպաստում էին նաև ներքին գործոնները, ինչպես օրինակ հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո գործող դպրոցների անմխիթար վիճակը և այլն: Այսպես օրինակ նույնիսկ նշվում է, որ քիչ չէին դեպքերը, երբ հայկական այս կամ այն գյուղի միակ

---

[115] Չորմիսյան Լ., նշվ. աշխ., էջ 499:
[116] Ալպոյաճեան Ա.,Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 793:
[117] «Ավետաբեր», 1904, թիվ , էջ 82:
[118] «Ավետաբեր», 1896, թիվ 18, էջ 350:
[119] «Ավետաբեր», 190, թիվ 5, էջ 156:

եկեղեցին հաճախ փակ էր լինում քահանայի բացակայության պատճառով, և դեպքեր են եղել, երբ հուղարկավորությունն անգամ ստիպված են եղել առանց քահանայի մասնակցության կատարել[120]:

Կամ Սվազում հարգանք վայելող անձանցից Ավետիս էֆ. Պողոսյանը բողոքում է Սվազի Առաջնորդարանին, թե իրենց թաղականը տոմար չունի, իսկ եկեղեցու եկամուտը «կեր թռչնոց երկնից կըլլայ»[121]:

Այսպիսով, հաճախ տարբեր բնագավառներում ազգային եկեղեցու բացթողումները և թերացումները ևս սկսում են նպաստել, որպեսզի տեղի հայությունը սկսի աջակցություն, այլընտրանք փնտրել ամերիկյան բողոքական համայնքների հիմնած կրոնական և կրթական հաստատությունների մեջ: Բողոքական կենտրոն ուներ նաև Մարզվանը, ուր դեռևս 1853թ. մայիսին կազմավորվել էր Մարզվանի ավետարանական միությունը: Մարզվանի ավետարանական ժողովուրդը բաղկացած էր 800 հոգուց: Նրանց հոգևոր պաշտամունքի լեզուն էր հայերենն ու թուրքերենը: Վերապատվելի Կարապետ Ատանալյանը՝ եկեղեցու հովիվը հրաժարական էր տվել, և նոր քարոզիչ չէին գտել: Եկեղեցին ինքնապահ էր և 1895թ. 260 օսմ. ոսկի էր տվել բոլոր ծախսերի համար: Մարզվանի հայտնի քարոզիչներից էր Ջոն Ֆրենսիս Սմիթը: Նրա հետ միասին միսիոներական աշխատանքերով էր զբաղվում նրա դուստրը՝ Բերթա Սմիթը, որը աշխատում էր Մարզվանի <<Անատոլիա >> վարժարանում[122]:

Մարզվանի եկեղեցին, Ամասիայի, Սամսոնի, Գափուգայայի, Ֆաթսայի և Քյոփրուի հինգ եկեղեցիները եւ էլի մի շարք շրջաններ, որոնք այս եկեղեցիների ճյուղերն էին, ուրույն կայան էին կազմել: Թե՛ եկեղեցիների և թե՛ միսիոներների միջոցներով հնարավոր եղավ այս շրջաններում քարոզիչներ պահել: Ավետարանի պաշտոնյաներ պատրաստող Աստվածաբանական դպրոցը 1893թ.–ից ի վեր փակված էր: Այդ պատճառով դպրոցը վերաբացելու խնդրանքով Մարզվանի ավետարանական համայնքը դիմում էր գրել Պորտ ընկերությանը[123]:

Բողոքականության տարածման խնդիրների շուրջ 1904թ. հունիսի 3-ին մայրաքաղաքի մեջ գումարվեց Բութանիայի նահանգային կրոնական ժողովը կամ

---

[120] ՀԱԱ, ֆ. 193, ց.1, գ.117, թ.18:
[121] ՀԱԱ, ֆ.193, ց.1, գ.1 136, թ.1:
[122] «Ավետաբեր», 1896, թիվ 10, էջ 125:
[123] «Ավետաբեր», 1904, թիվ 13, էջ 250:

բողոքականների սինոդը, որը տևեց 8 օր: Սինոդը կազմող մարմինը բաղկացած էր Ադաբազարից, Նիկոմեդիայից, Պարտիզակից, Պրուսայից, Իսթանոզից, Պուրտուրից եկած քարոզիչներից և պատվիրակներից, նաև Կ.Պոլսի ավետ. եկեղեցիների հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչներից: Պարզվեց, որ ազգապետարանը նյութապես աննպաստ վիճակի մեջ է: Որպեսզի Ամերիկյան Պորտը կարողանա եկեղեցիների պակասները հոգալ, տեղացի քարոզիչները ներկայացրին Պորտին ուղղված պահանջների հիմնավորումները: Սինոդը վավերացրեց եկեղեցական հանգանակության վերաբերյալ որոշ առաջարկներ: Այդ առումով ուշադրություն հրավիրվեց այն փաստի վրա, որ Բուրսայի եկեղեցին իր ծախսերն ինքն է հոգում, ունենալով /1899թ./ 95 անդամներ, 180 ունկնդիրներ: 1898թ. դրությամբ նրանց հաջողվել էր հանգանակությամբ հավաքել 161 ոսկի: Իսթանոզի եկեղեցին նույնպես իր ծախսով էր ապրում, ենթադրվում էր, որ նշված շրջանում եղել են եկեղեցու 320 անդամներ, որոնք տարեկան 452 ոսկի հոգեւոր տուրք են վճարում [124]:

Կարմիրը Խարբերդի կուսակալության գյուղերից էր: Ստույգ տեղեկություններ չկան, թե երբ է Ավետարանականությունը մուտք գործել այստեղ, բայց ժողովրդի մեջ գերիշխում է այն կարծիքը, թե 40 տարի առաջ/1866թ./: Խարբերդի վաղեմի միսիոներներից մր. Հուիլը սկսել է քարոզել Կարմիրում:

Բողոքականության տարածման չափերն աննկատ չէին մնում սուլթանական կառավարությունից, որը մեծ կասկածանքով էր վերաբերվում ամերիկյան միսիոներների գործունեությանը, սակայն հանդուրժում էր նրանց՝ ԱՄՆ-ը դիտելով որպես երկրի տնտեսական զարգացմանն օժանդակող կարևոր գործոն[125]:

Այդ հանդուրժողականությունն իր հերթին նպաստում էր, որ շատ հայեր հարեն բողոքականությանը՝ փրկվելու թուրքական հալածանքներից:

Այսպես ներկայացնենք 1890-ական թվականներին Յոզղատի գյուղերի վիճակագրությունն ու նրանցում բողոքական ընտանիքների թիվը: Սունկուրլուն պարունակում էր 290 տուն հայ, որից 14 տունը բողոքականներ էին: Վերջիններս ունեին երկսեռ վարժարան: Չորումը պարունակում էր 80 տուն հայ, որից 8-ը՝ բողոքական: Տեղի հայերը գաղթել էին 20 տարի առաջ, Կեսարիայի, Յոզղատի և դրանց հարակից

---

[124] Նույն տեղում:
[125] Կիրակոսյան Ա., նշվ.աշխ., էջ 235:

շրջաններից, ունեին նորաշեն եկեղեցի, որը գործում էր 1881թ.-ից: Բողոքականները ևս ունեին իրենց քարոզիչն ու դպրոցը[126]:

ՀՀ ազգային արխիվում պահվող մի տեղեկագրից [127]պարզ է դառնում, որ Յոզղատի գուղերում գտնվում են 24870 տուն, 125177 անձինք, 44 եկեղեցի, 37 դպրոց, 64 քահանա, 31 վարժապետ, 1549 տուն, 1441 անձինք, 11 ժողովարան, 16 դպրոց, 10 քարոզիչ, 611 աշակերտ, 3 օրիորդների վարժարան և 20 վարժապետ[128]:

Յոզղատի Խորենյան և Միաբանյան վարժարանների, հայ բողոքականների, ընդհանուր բնակչության, քահանաների, աշակերտների թվի, Յոզղատի ծագման և դպրոցի հիմնադրման մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում նաև «Փունջ» հանդեսի 1889թ. հունիսյան համարը: Այստեղ նշվում է, որ բողոքականությունն արդեն 30 տարի է, ինչ տարածված է շրջանում: Ընդ որում, քաղաքի բողոքականների մեջ վերջին շրջանում աչքի է ընկնում Մահտեսի Մեսրոպի որդին՝ Մեսիա Մեսրոպյանը, որը տեղի բողոքականների վարժապետն է: Վերջինս ուսանել էր Նյու Յորքում, այնուհետև կրկին վերադարձել էր Յոզղատ՝ փորձելով իր կողմը գրավել տեղի հայությանը, սակայն մեծ հաջողություններ չի արձանագրում, քանի որ կարողանում է մկրտել միայն իր ընտանիքի անդամներին[129]:

Այսպիսով միսիոներների ակտիվ քարոզչական աշխատանքների շնորհիվ բողոքականությունը 1895-1908թթ. կարողանում է բավական տարածում գտնել Արևմտյան Հայաստանում:[130]

Բիթլիսի ամերիկյան միսիոներական կենտրոնը 1858թ. հիմնել են Ջորջ Քաշինգ Նեփը և իր կինը՝ Ալզինա Չըրչիլ Նեփը: Հետագայում, Մերի և Շարլոթ Էլի քույրերի հետ համատեղ ջանքերով նրանք 1868թ. Բիթլիսից ոչ հեռու, գեղատեսիլ մի վայրում հիմնում են ամերիկյան «Մաունթ Հոլյոկ» սեմինարիայի աղջիկների մասնաճյուղը: Նեփերի երեխաները ծնվել և մեծացել են Բիթլիսում: Նրանցից ավագին՝ Ջորջ Փերկինս Նեփին հայրը 1877թ. ուղարկել է Միացյալ նահանգներ՝ սովորելու: Դպրոցն ավարտելուց հետո, 1887թ. նա ընդունվում է Հարթվորդի աստվածաբանական

---

[126] ՀԱԱ, ֆ.420, ց.1, գ.11, թ.4:
[127] ՀԱԱ, ֆ. 420, ց. 1, գ. 11, թ. 5-7:
[128] Տես Հավելված 1:
[129] ՀԱԱ, ֆ. 420, ց.1, գ. 10, թ .3:
[130] http://www.lragir.am/armsrc/comments31494.html.

սեմինարիան: 1890թ. նա ձեռնամուխ է լինում միսիոներական գործունեությանը: 1896թ. Ջորջ Նեփին վտարեցին Թուրքիայից՝ մեղադրելով հայերին իշխանությունների դեմ հրահրելու մեջ: 1899թ. նա վերադարձավ Բիթլիս: 1915թ.հունիս-հուլիս ամիսներին Բիթլիսի հայ բնակչության ջարդերի ժամանակ նա ամեն ջանք գործադրեց, որպեսզի վերջ դնի հայերի կոտորածներին: Սակայն երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին անցանկալի վկային և պահակախմբի ուղեկցությամբ տարան Դիարբեքիր: Ըստ թուրքական պաշտոնական վարկածի՝ Ջորջ Նեփը մահացել է 1915թ. օգոստոսի 10-ին, բծավոր տիֆից: Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լ.Դևիսի և բժիշկ Ատկինսոնի համոզմամբ, միսիոների՝ տիֆից մահանալու վարկածը չի համապատասխանում իրականությանը: Ջորջ Նեփը, ավելի քան 20 տարի ծառայելով որպես միսիոներ,իր կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդին[131]:

Միսիոներները, հաստատվելով Բիթլիսում, հայ հոգևորականության կողմից հանդիպեցին այն նույն դիմադրությանը, որին ի սկզբանե հանդիպել էին կաթոլիկները : Նույնիսկ մի անգամ ամբոխը հարձակվեց միսիոներ Ջորջ Նեփի և իր օգնականների վրա[132]:

Ավետարանականությունը Բիթլիսից աստիճանաբար տարածվեց նաև վիլայեթի գյուղերում, որոնցից մեկում՝ Աղաղում, այն տարածվել է մոտավորապես 1872 թ.:1895-96թթ. գյուղն արդեն ուներ 25-30 տուն բողոքական[133]:

Պատճառը պարզ է՝ հայ եկեղեցին չէր միջամտել բողոքական քարոզչությանը, մանավանդ, որ կոտորածի աղետալի իրականության մեջ, երբ ժողովուրդը հուսո ապավեն էր որոնում, Շեյխ Եաղուպում ավետարանականությունը ևս որոշակի տարածում գտավ. այստեղ բողոքական քարոզիչները բնիկներ դարձան, քանի որ գյուղը շրջապատված էր մի քանի մեծ ու փոքր գյուղերով, որոնք ձմռանը ճանապարհների անանցանելիության պատճառով կտրվում էին Բիթլիսից, և Բիթլիսի ավետարանական քարոզիչները չէին կարողանում այցելել այստեղ, ուստի բողոքականների քարոզչական

---

[131] Փայասլյան Ստ., Ամերիկացի միսիոներ Ջորջ Քաշինգ Նեփի զեկուցագիրը, ԲՀԱ, Երևան, 2004, համար 2, էջ 17:
[132] Լինչ Հ. Ֆ. Պ., Հայաստան. Ուղեւորութիւներ, ուսումնասիրութիւններ, հ. Բ.,Կ.Պոլիս, 1914, էջ 175:
[133] «Ավետաբեր», 1904, թիվ 12, էջ 148:

աշխատանքներն իրենց վրա են վերցնում գյուղում մշտական բնակություն հաստատած ավետարանական քարոզիչները[134]:

Երբ բողոքականությունը սկզբնավորվեց Բիթլիսում, միսիոներները քարոզչական աշխատանքներ ծավալեցին նաև այդ քաղաքից 2 ժամ հեռավորության վրա գտնվող Խուլդիք գյուղում: Գյուղի առաջին միսիոներներից էր պատվելի Նաբը, ում ջանքերը հանդիպեցին համառ դիմադրության: Մարդիկ բողոքականության տարածումը կանխելու համար սկսում են եկեղեցում անեծքներ կարդալ բոլոր նրանց հասցեին, ովքեր հարում են բողոքականներին: Բանը հասավ կենցաղային հալածանքի, անգամ ննջեցյալներն օրերով չէին թաղվում, քանի որ գերեզմանոցում ժողովուրդը տեղ չէր տալիս: Վերջին հարցը լուծվում է պետական միջամտության միջոցով. կառավարությունը տեղ է հատկացնում այդ նպատակով:1897թ. դրությամբ այստեղ 15-20 ավետարանական ընտանիքներ կային, կառուցվել էր ժողովարանի երկհարկ շենք, միսիոներների միջոցով կառուցվել էր նաև երիցատուն[135]:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 19-րդ դարի վերջին Բիթլիս քաղաքում կար 100 բողոքական, իսկ ամբողջ գավառում կար մոտ 1200 բողոքական: Նրանք, իրենց գործունեությունը ծավալելով Բիթլիսում, ակամայից դառնում են տեղի ունեցող արևմտահայերի ջարդերի ականատեսը: Միսիոներ Ջ. Նեփն այդ մասին թողել է զեկուցագրեր, որոնք սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Բիթլիսում տեղի ուեցած դեպքերի ուսումնասիրության համար[136]:

«Որպեսզի քրիստոնյա բնակչությունը կարողանա ապրել կայսրությունում, ապա արտաքին քրիստոնյա ուժերը պետք է տարածվեն կայսրության ամեն մի անկյունում:Սրա մասին արդեն կարիք չկա ասելու, բայց դեռ կան մարդիկ ,որոնց պետք է հիշեցնել այդ մասին: Ինչպես պետք է դա արվի: Մենք չգիտենք, և կարծես թե ոչ ոք էլ չգիտի:Մենք հավատում ենք՝ Աստված, որ անուշադիր չեղավ Աբելի արյան հանդեպ,չի թողնի, որ 10000 և ավելի թշվառ մարդկանց արյունը իզուր հոսի:»- գրում է Ջ. Նեփը[137]:

1895-96թթ հայկական ջարդերի ընթացքում Օսմանյան կայսրությունում բրիտանական դեսպանությունն ու հյուպատոսական ներկայացուցչությունները

---

[134]« Ավետաբեր», 1904, թիվ 12, էջ 155:
[135] «Ավետաբեր», 1902, թիվ 32, էջ 298:
[136]Փայասլյան Ստ.,Ամերիկացի միսիոներ Ջորջ Քաշինգ Նեփի զեկուցագիրը, էջ 25:
[137] Նշվ. աշխ., էջ 27-28 :

շարունակում էին ուսումնասիրել «հայկական շարժումն» ու թուրքական իշխանությունների գործելակերպը, ապահովում իրենց նախարարությանը մանրամասն տեղեկատվությամբ: Դեսպան Քարրիին ուղղված հյուպատոս Գրեյվզի 1896թ. մարտի 23 -ի զեկուցագրում նկարագրվում էր Երզնկայի շրջանի գյուղերից մեկում տեղի ունեցած դեպքերը, երբ իշխանությունները մեղադրել էին տեղի հայ բնակչությանն ապստամբության մեջ և Երզնկայի բանտ էին նետել 35 հայերի: Թեև, ըստ հյուպատոսի, գրեթե անհնարին էր, որ զգալի փոքրամասնություն կազմող գյուղի հայերը ապստամբեին կառավարության դեմ[138]:

Ինչպես նշում էր այդ օրերին «Spectator» շաբաթաթերթը, կառավարությունը չհրապարակեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած «ողբերգական» իրադարձություններին վերաբերող հյուպատոսների հաղորդագրությունները՝ միմիայն «...Անգլիայում հասարակական կարծիքը ծայրաստիճան գրգռելու վախից»: «Անգլիական հասարակայնությունը, գրում էր հասարակական- քաղաքական «Contemporary Review» ամսագիրը, - տեղեկատվություն ստանալու համար պարտական է միմիայն մամուլի ձեռներեցությանը, քանի որ կառավարությունը համառորեն թաքցնում էր այն»[139]:

Ընդ որում հարկ է նշել, չնայած իրենց կառավարությունների «անգործությանը»՝ օտարերկրյա միսիոներները հիմնականում գործում էին եռանդով՝ փորձելով ստույգ մահից փրկել անմեղ հայերին:

Պատահական չէ, որ այդ տարիների իրադարձությունների լուսաբանման հավաստի աղբյուր են ամերիկյան բողոքական միսիոներների վկայություններն ու զեկուցագրերը, որոնք փաստում էին թուրքական իշխանությունների իրականացրած ջարդերի մասին:1890-ական թվականներին ամերիկյան միսիոներները լայն գործունեություն ծավալեցին նաև Վանում, ուր դեռես 60-ական թվականներից գործում էր ամերիկյան «Պորտ» ընկերության դպրոցը՝ «բողոքականներու շրջանակը», ինչպես այն անվանում էին տեղացիները: Այն փոքր պարսպապատ քաղաք էր քաղաքի մեջ՝ Այգեստանի հյուսիս –արևելյան ծայրամասում՝ բազմաթիվ նորաձև շենքերով և մեծ ժողովարանով:

---

[138] Armenia and the Powers: From Behind the Scenes. - The Contemporary Review, 1896, vol. 69, pp. 628-643.
[139] Նույն տեղում:

Քաղաքամասի հիմնական և գլխավոր շենքերն էին եկեղեցին, որ աղոթատուն էր կոչվում, որբանոցը, հիվանդանոցը և դեղատունը, որ սպասարկում էր ոչ միայն քաղաքամասի կարիքները, այլ նաև դրսի ժողովրդին: Հաճախ, որպես ողորմություն, անվճար տրվում էր դեղորայք: Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ միսիոներական կազմակերպությունների քարոզչության տնտեսական զենքերը շատ բազմապիսի էին : <<Քաղաքամասի մեջ գտնված փոքրիկ տնայնագործական արհեստանոցները պետք է իրենց անմիջական աշխատանքին զուգընթաց, իրենց արտադրական ծրագրերին համազոր չափով ծառայեին նաև իրենց կրոնաքաղաքական դաստիարակության գործին>>,-գրում է Վ.Տերոյանը[140]:

Միսիոներական քարոզչության հանրահայտ մեխանիզմներից էր որբանոցների հիմնումը: «Ժողովրդական անասելի թշվառության մեջ նրանք շատ էին գտնում հայրեր և մայրեր, որոնք իրենց սեփական որդուց հրաժարվում էին, իրենց հայտարարությամբ նրան թողնում որբանոցում և միսիոներներին հանձնում»[141]:

Ահավասիկ «Որբունի» տեղեկատուից մի մեջբերում. «Արդեօք քանի- քանի գուրգուրոտ ծնողներ իրենց անկարողութեան հոգեւարքին ատեն, իրենց ձագուկներուն անսուաղութենէ կմախացած պճլիկ մարմինները շոյելով, իրենց ամբողջ էության վերջին թրթռացումը հառաչած են իրենց առյաւէտ մարող շունչին հետ, այդ օտար ոլորտներուն ծոցը որբ ու անտէր թողնելով հայութեան սուրբ մասունքները»[142]:

Այդ առումով հատկապես մեծ էր ամերիկացի միսիոներ բժիշկ Ռեյնոլդսի դերակատարումը: Վերջինս տարիներ ի վեր և,մանավանդ, 1895 թ. դեպքերից հետո, հավաքում էր երկսեռ որբեր, խնամում, կրթում էր նրանց: Բժիշկ Ռեյնոլդսն ուներ երկու օգնականներ՝ բժիշկ Աշըրը և միստր Յարոուն, որոնք իրենց տիկինների հետ միասին մեծ նվիրումով երկար տարիներ ծառայեցին հայությանը և վայելեցին մեր ժողովուրդի երախտագիտությունը[143]: Վահան Փափազյանն իր հուշերում նշում է, որ իրենց /հեղափոխականներին –Ս.Գ./ նույնիսկ հաջողվում է ընդունելություն գտնել բողոքական շրջանակներում և տեղացի ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը «վարակել»

---

[140] Տերոյան Վ.,Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում,Երևան, 2008, էջ 37:
[141] Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 38:
[142] ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 6, թ. 2:
[143] Գեղունի, Որբունի կամ պատկերազարդ բացառիկ բազմավեպ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1900, էջ 5:

հեղափոխական ոգով: Նա նաև փաստում է ,որ բողոքական շրջանակի մեջ իրենց ունեցած ծանոթությունները բավական դեր են խաղացել իրենց համար[144]:

Հայտնի է, որ ամերիկյան միսիոներները դեղորայքով և բժշկական այլ ծառայություններով անվճար օգնություն են ցույց տվել Վանում գտնվող վիրավոր ֆիդայիներին, թեև թուրքական կառավարության հետ խնդիրներ չունենալու համար այդ օգնությունը բացահայտ բնույթ չի կրել: Այդ իսկ պատճառով էլ Կոմսը նշում է, որ միսիոներները խուսափում էին բացահայտորեն հանդիպել ֆիդայիների հետ [145]:

Ընդհանուր առմամբ,Վանում ավետարանական գործը նոր թափ ստացավ 1896թ. Վանի ինքնապաշտպանության օրերից, երբ թուրքերի ջարդերից ու կողոպուտներից հետո ամերիկյան միսիոներներն օգնության փութացին ժողովրդին, որբանոցների մեջ խնամվում էին երկսեռ որբեր, որբանոցներին կից կային նաև հյուսնոց, դարբնոց, կոշկակարի, դերձակի, շալագործի խանութ-գործարաններ,ինչպես նաև թիթեղագործի խանութ: Աղջիկների համար կային ասեղնագործի խանութ:Որբանոցի տարիքը լրանալուց հետո աշակերտներին տրվում էր անկողին, հագուստեղեն և 5 օսմանյան ոսկի:Ժամանակ առ ժամանակ արհեստագործական գործիքներ և դրամական բացառիկ օգնություններ էին տրվում: Աղջիկները որբանոցից դուրս չէին հանվում մինչեւ ամուսնություն: Ամուսնացողներին օժիտ էր տրվում, իսկ տոնական օրերին, մասնավորապես Զատիկին, տուն-որբանոց էին հրավիրվում իբրև հյուր:

Վանի ինքնապաշտպանության ժամանակ բողոքականի և լուսավորչականի խնդիր չկար, նրանք իրենց շրջանակը լայն բացեցին ժողովրդի առջև և իրենց ընտանիքներով և զավակներով գործի լծվեցին: Դոկ. Աշըրը խնամում էր հիվանդներին և վիրավորներին: Սակայն միսիոներական օգնությունը լուրջ խոչընդոտ չէր կարող լինել թուրքական իշխանությունների համար, որոնց հալածանքները հաճախ վերածվում էին բացահայտ կոտորածների: Դրա հետեւանքով շատ հայեր նախընտրում էին հեռանալ իրենց բնակավայրերից: Նրանց գաղթը դեպի ԱՄՆ հիմնականում իրականացվում էր ամերիկյան բողոքական միսիոներների աջակցությամբ:

Հայերի հանդեպ Օսմանյան կայսրության քայքայիչ քաղաքականության դրսևորումներից էր այն, որ 19-րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանում

---

[144] Փափազեան Վ., Իմ Յուշերը, հատոր Ա., Պօսթըն, 1950, էջ 229-230:
[145]Նշվ. աշխ, էջ 230:

յուրաքանչյուր ընտանիք ամսական միջին հաշվով վճարում էր ռուսական դրամով հաշված 54ռ. 70 կ. հարկ այն դեպքում, երբ Կովկասում ապրող յուրաքանչյուր ընտանիք վճարում էր 14 ռ. 09 կ.[146] :

Արևմտահայերի վիճակը ծանր էր հատկապես այն գավառներում, ուր քրդերը թուրքական սուլթանի հատուկ արտոնությամբ իրավունք ունեին զենք կրելու, իսկ հայկական գյուղի աղաներն անպայման քուրդ բեկերն էին կամ ցեղապետերը : Այս ամենի հետևանքով մեծանում էր նաև ուծացման վտանգը:

Ճանապարհորդ Դ.Նոգարտը վկայում է, որ «Վանի ,Պիտլիսի, Մանազկերտի, Էրզրումի շրջաններուն մէջ, հոն ուր քրիստոնեաներուն եւ այլազան քիւրտ ցեղախմբերուն կողքին նստակաց մահմէտական բնակչութիւն մը կա, որ ինքզինքը «թուրք» կանվանէ, գլխավորաբար հայկական ծագում ունի»[147]:

Բնական է, որ նման պայմաններում միսիոներների կողմից առաջարկվող օգնությունից հրաժարվելը շատ դժվար էր: Մանավանդ,որ բողոքականությանը հարելու դեպքում այդ օգնությունը կարող էր շարունակական լինել, ավելին՝ հնարավոր էր դառնում նաև որոշակի աշխատանք գտնել միսիոներական շրջանակում, ստանալ կրթություն կամ վերջին հաշվով գաղթել ԱՄՆ:

Զեյթունի ապստամբության ժամանակ հիշարժան է մի հայուհու՝ Կատար Ապուսեֆյանի քաջությունը, որը հանձն առավ թուրքերի պաշարման գիծը ճեղքելով՝ հայերին օգնելու խնդրանքով Մարաշի ամերիկյան միսիոներին մի երկտող տանել և փորձել տեղեկանալ, թե որքանով է հավանական եվրոպական պետությունների միջամտությունը[148]:

Ասվածը մեկ անգամ ևս փաստում է այն, որ տեղի հայությունն իրական օգնություն կամ միջամտություն սպասում էր միսիոներներից, որոնք կարող էին միջնորդ հանդիսանալ կառավարության և օսմանահպատակ հայության միջև: Հարկ է նշել, որ համիդյան կոտորածի տարիներին թուրքական իշխանությունները հաճախ պահանջում էին ժամանակավորապես դադարեցնել ամերիկյան միսիոներների

---

[146] Խաժակ, Հարկերը Տաճկահայաստանում, էջ 66, «Բյուզանդիոն», 1906, թիվ 3069, էջ 67:
[147] ՔեչեանԱ., Ակն եւ Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 155:
[148] Չորմիսեան Լ., նշվ. աշխ., էջ 240:

գործունեությունը հայկական այս կամ այն բնակավայրում,պատճառաբանելով, թե իբր նրանք հրահրում են քրիստոնյաներին մահմեդականների դեմ [149]:

Սակայն, որպես կանոն, նման պահանջին հաջորդում էր այդ բնակավայրում քրդական զինված հարձակումը հայերի վրա: Թուրքական իշխանությունների համար միսիոներները որոշակի խոչընդոտ էին հայերի ջարդերն անարգել իրականացնելու ճանապարհին:

Հարթ չէին հարաբերությունները հայ լուսավորչական, կաթոլիկ և բողոքական համայնքների միջև: 1895թ.սեպտեմբերին դեսպան Քարրին առանձին հանդիպումներ է ունենում կաթոլիկ հայերի առաջնորդ Ազարյանի և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Իզմիրլյանի հետ:Ազարյանը հավաստիացնում էր դեսպանին, որ իր համայնքը բացարձակապես չի մասնակցում լուսավորչական հայերի մեջ քարոզչությանը, իսկ անձամբ ինքը փորձում է միջնորդ հանդիսանալ վերջիններիս և թուրքական կառավարության միջև[150]:

Քարոզչական աշխատանքների մեջ յուրահատուկ դեր են ունեցել տեղացի քարոզիչները, որոնց մեջ աչքի էին ընկնում Ա.Գարագաշյանը՝ Կ.Պոլսի Աստվածաշնչի «Պայպըլ հաուզ»-ի ընկերության թարգմանություններ վերահսկողը, պրոֆ. Յ.Հ.Ճէճիզեանը՝ դասախոս, խմբագիր, երիտասարդ տարիներին հրավիրվում է Պարտիզակ, իբրև ուսուցիչ և քարոզիչ, և ուրիշներ:

Ընդհանուր առմամբ տեղացի քարոզիչների և միսիոներության հետ ծագած մեծագույն հակասություններից մեկը դրամական էր. միսիոներությունը միշտ չէ, որ հավատարիմ էր իր սկզբունքներին, հաճախ «նպաստը» օգտագործվում էր իրենց կամքը պարտադրելու համար: Այս առումով ստեղծված տարակարծությունների մեջ իր բաժինն ուներ նաև միսիոներների որոշած սակացույցը բնիկ հովիվների, քարոզիչների, ուսուցիչների, խմբագիրների և պաշտոնյաների համար, որոնք այնքան ցածր էին միսիոներների գանձած ամսաթոշակների համեմատ, որ խտրականության դեմ դժգոհությունն ու զայրույթը բնական էր: Չնայած վերոբերյալ հանգամանքներին՝ մեր համոզմամբ, միսիոներների քարոզչությունը և նրանց գաղափարաբանական

---

[149] Կիրակոսյան Ա., Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում 19-րդ դարի 90ական թթ., Լրաբեր հասարակական գիտությունների,1984թ., համար 1:
[150] Կիրակոսյան Ա., նշվ.աշխ., էջ 294:

աշխատանքները քրիստոնյա բնակչության և մասնավորապես արևմտահայության շրջանում ունեցան նաև բացասական հետևանքներ: Ձևավորվեցին փակ սոցիալական - կրոնական խմբավորումներ:

Ակնհայտ էր,որ միսիոների վերջնական նպատակը բնակչության գաղափարական վերափոխումն էր, սակայն այնուամենայնիվ, պետք է նշել, որ նրանց գործունեությունն ընդհանուր առմամբ բարեգործական և մարդասիրական բնույթ էր կրում: Կրթական ամերիկյան համակարգը երկակի նկարագիր ուներ. մի կողմից այն նպաստեց կայսրության ժողովուրդների կրթական ընդհանուր մակարդակի բարձրացմանը, ասպարեզ եկան տարբեր բնագավառների բարձրորակ մասնագետներ, որոնք իրենց գործունեությամբ ևս նպաստում էին ամերիկյան քաղաքականության իրագործմանը, մյուս կողմից էլ կրթական այդ համակարգի շրջանավարտները ինքնըստինքյան հեռանում էին ազգային կրթական ավանդույթներից, հոգեբանությունից՝ դաստիարակվելով «ամերիկանիզմի» ոգով, ինչը հանգեցրեց ներազգային գաղափարական մասնատման: Փաստ է, որ դա կարող էր կործանարար լինել արևմտահայության համար: Եվ, իրոք, իր բարեգործական աշխատանքների շնորհիվ ամերիկյան կառավարությունը պահպանեց իր քաղաքական ազդեցությունը երկրում: Եվրոպական տերությունները և ԱՄՆ-ը Թուրքիայում ունեցած իրենց զորեղ ազդեցության շնորհիվ հող էին նախապատրաստում միսիոներների գործունեության համար[151]:

Արևմտահայաստանի հայ բնակչության իրավազուրկ վիճակը, քրդական հարստահարություններն ու թուրքական իշխանությունների կողմից գործադրված բռնությունները, 1894-1896 թթ. կազմակերպված կոտորածները հայերին մի հայտնի չափով մղում էին հակվել դեպի հեղինակավոր տերությունների ուժը ներշնչող միսիոներները:

Վերջիններիս մեջ ոչ քիչ դեպքերում հայերը տեսնում էին իրենց ֆիզիկական գոյության կամ թշվառությունից խուսափելու երաշխիքները[152]:

---

[151] Шпилькова Б., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.), Москва, 1960, с. 47.

[152] Гаюк. И. Я., Армянская церковь как уникальный феномен христианского мира, Львов, 2005., с. 106.

Ավելացնենք, որ հայ եկեղեցին, իր հերթին, չէր կարող լիարժեք դիմակայել միսիոներական քարոզչությանը թուրքական իշխանությունների կողմից իրեն պարտադրված անգործունակության և իրադարձությունների վրա ազդելու չափազանց աննշմար կարողությունների պատճառով: Այս հանգամանքը ևս դյուրին էր դարձնում հայերի դավանափոխության ուղղված միսիոներների գործունեությունը:

1.3. ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Արևմտյան Հայաստանում միսիոներական գործունեության բնութագրական կողմերից մեկը կրթական-լուսավորական շարժումն էր, որը համադրված լինելով բողոքական քարոզչությանը, այնուամենայնիվ, դրական նշանակություն ունեցավ արևմտահայության կրթական մակարդակի բարձրացման առումով: Ամերիկյան միսիոներները, ձեռնամուխ լինելով հայ բնակչությանը և հատկապես երիտասարդությանը, բողոքական գաղափարներով տոգորելու իրենց առաքելությանը, ստիպված էին նախևառաջ գայթակղել նրանց որակյալ ուսման և մասնագիտական կարողությունների կատարելագործման հնարավորություններով: Այդ է պատճառը, որ կարճ ժամանակում Արևմտյան Հայաստանում մեծ տարածում ստացան բողոքականների հիմնած դպրոցները, արհեստանոց-ուսումնարանները, քոլեջներն ու նույնիսկ մանկապարտեզները: Ընդ որում, ակնհայտ էր, որ վերոբերյալ ուսումնական հաստատություններն առաջարկում էին բավական որակյալ, եվրոպական կրթական համակարգին բնորոշ կրթություն, ինչը հաճախ հնարավոր էր լինում ստանալ անվճար:

Միսիոներական կրթական շարժումը, որի դրական նշանակությունը ոչ ոք չի կարող ուրանալ, հատկապես սկզբնական տարիներին որոշակի դժվարություններ ունեցավ հիմնականում երկու պատճառով. նախ «իրարօգնության դրությունը» /ծանոթ է «Լենգեսթըրյան» անունով և հիմնադիրն է Ջոզեֆ Լենգեսթըրը /1778-1838/,ըստ որի, բարձրագույն դասարանի աշակերտները նաև ավելի ցածր դասարանների աշակերտների ուսուցչի դեր են ստանձնում, ձախողվեց:

Բացասական անդրադարձ ունեցավ նաև այն որոշումը, որի համաձայն, բնիկ ուսանողները քոլեջում կամ աստվածաբանական դպրոցում չպետք է սովորեին անգլերեն, որպեսզի ազգակիցներից իրենց բարձր չդասեին և ԱՄՆ չգնային, կամ չմտնեին առևտրական ասպարեզ՝ հեռանալով քարոզչական կամ ուսուցչական ծառայություններից: Ռ.Էնդըրսընի հետապնդած ու պարտադրած կրթական այս ծրագիրը լուրջ տարաձայնություններ ստեղծեց միսիոներական շարքերի մեջ ու

հակասությունների պատճառ եղավ Պեպեքի ուսումնարանի և Աստվածաբանական վարժարանի միջև[153]:

Արևմտաեվրոպական միսիոներների՝ Արևմտյան Հայաստանում ծավալած կրթական գործունեությունը, հարկ է լուսաբանել նաև դրական տեսանկյունից: Որոշ հեղինակներ շեշտում են նրանց գործունեության միայն բացասական կողմերը՝ այն, որ միսիոներները սոսկ ջլատում էին արևմտահայության ուժերը, թուլացնում ազատագրական պայքարը: Իրոք, այդ կարծիքի մեջ ճշմարտություն կա,սակայն դրա հետ միասին կար էին նաև դրականը, որքանով նրանք նպաստում էին կրթության տարածմանը արևմտահայ աճող սերնդի մեջ՝ հաղորդակից դարձնելով նաև Եվրոպայի առաջավոր գաղափարներին: Մյուս կողմից, օտար դավանությունների հետ կրթական մրցակցությունը խթանում էր նաև հայ հանրության ազգային դպրոցի զարգացման միտումները, մղում նրան նոր կամ արդիական մեթոդներ կիրառելու արևմտյան դպրոցի հետ մրցակցելու անհրաժեշտության առջև: Մոտավորապես նույնն էր պատկերը Կ.Պոլսի Հովհաննես Կոլոտ պատրիարքի ժամանակներում / XVIII դ. 10-40-ական թթ./,երբ հայ եկեղեցին ու դպրոցը վերածնություն ապրեցին կաթոլիկության հետ հակադրվելու, այլև արևմտյան արժեքները նրա միջոցով յուրացնելու պայմաններում:

XIX դարում գոյություն ունեցած եկեղեցական ու վանական դպրոցներում տիրապետում էր ուսուցման միջնադարյան-սխոլաստիկ ձևը: Աշակերտները սովորում էին մեխանիկորեն, անգիր անելով, չկար որոշակի կարգ ու կանոն:Մարմնական պատիժը համարվում էր ուսուցման գործընթացի անբաժանելի մաս: Խիստ սահմանափակ էր յուրացվող գիտելիքների շրջանակը: Դրանց չափն ու որակը կախված էր <<ուսյալ >> վարժապետի խղճից ու կարողությունից[154]:

Սովորելու նկատմամբ հայերի ունեցած պահանջի շնորհիվ կարճ ժամանակահատվածում բողոքականների հիմնած ուսումնական հաստատությունները համալրվեցին նորանոր աշակերտներով, որոնք իրենց հերթին աստիճանաբար դարձան Օսմանյան կայսրության առավել կիրթ ու բանիմաց խավը:

---

[153] Journal of Mr.Dwight on a Visit to Brousa,"Missionary Herald"december, 1838, pp. 461-462.

[154] Երկանյան Վ. Ս., Հայկական դպրոցը 1800-1870 թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1970, № 10, էջ 32:

Հատկանշական է այն հանգամանքը, որ հայերի կրթական միջին մակարդակը, նաև՝ գրագիտությունը, անհամեմատ ավելի բարձր էր, քան գերիշխող՝ տիրապետող ազգի՝ թուրքերի մակարդակը թե՛ Օսմանյան կայսրությունում ընդհանրապես, թե՛ Արևմտյան Հայաստանում մասնավորապես՝ չնայած քաղաքական ու սոցիալական բացառիկ անբարենպաստ պայմաններին:

Պատահական չէ, որ Թուրքիայի պետական պաշտոնյաներն ու փաշաները միմյանց հետ մրցել են, որպեսզի այս կամ այն հայտնի հայ մասնագետը ծառայի իրենց ընտանիքին, լինի իրենց խորհրդատուն[155]:

Նրանք տեսնում էին, որ մահմեդականության, թափառաշրջիկ և կիսավայրենի ցեղերի հարևանությամբ ապրող այդ քրիստոնյա ժողովուրդը որքան էլ որ ենթարկվում է ճնշումների, շարունակում է առաջադիմել, միշտ իր ձեռքում է պահում իր միջավայրի առևտուրն ու արհեստները և հաղորդակից է եվրոպական լուսավորությանը[156]:

Խոսուն է նաև այն փաստը, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության տիրապետող ժողովրդի ՝թուրքերի 90 տոկոսն անգրագետ էր, մինչդեռ թուրքերի կողմից կեղեքված ժողովուրդների շրջանում անգրագետները զգալիորեն քիչ էին ՝ հույների մոտ 50 տոկոս, հայերի մոտ ՝միայն 33[157]:

Դա այն դեպքում, երբ դեռևս 1869թ. Թուրքիայում ընդունվում է ժողովրդական կրթության մասին օրենք, (որի համար հիմք էր ծառայել համապատասխան ֆրանսիական օրենսդրությունը), այսուհանդերձ ակնհայտ էր, որ երկրում չկային անհրաժեշտ մանկավարժական կադրեր, հատկապես ուսուցչուհիներ[158]:

Հայկական կրթարաններն ավարտած շատ ուսուցիչներ, ովքեր հմտացած էին թուրքերեն լեզվի մեջ, դասախոսել են Թուրքիայի բժշկական, իրավաբանական,

---

[155]Ռեֆիք Ա., Հայոց դերը թուրք մշակոյթին մեջ, <<Ընդարձակ տարեցոյց ազգային հիվանդանոցի>>,Կ.Պոլիս, 1931, էջ 128:

[156] Գինոսյան Ն., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային կյանքում /19-րդ դարի երկրորդ կես- 20-րդ դարի սկիզբ /թեկն. ատենախոսություն, Երևան, 2012, էջ 74:

[157] Новичев А.,Турция, Краткая история, М., 1965, с.133-134, Еремеев Д., Ислам: Образ жизни и стиль мышления, М., 1990, с. 255.

[158]Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալփը թուրք կանանց իրավունքների մասին, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, էջ 14:

երկրագործական, գեղարվեստի համալսարաններում, Մյուլքիյեի, Կալաթասարայի, Սուլթանիեի լիցեյներում[159]:

1900-ական թթ. Արևմտյան կրթական գործը հաստատուն հիմքերի վրա էր դրվում: Անուրանալի է այն փաստը, որ այդ գործում իրենց ներդրումն ունեին նաև ամերիկյան միսիոներները: 1901թ. միայն Խարբերդում և հարակից գյուղերում կային 27 հայկական վարժարաններ՝ 2554 երկսեռ աշակերտներով, սրան ավելացրած՝ որբանոցի աշակերտները, լատինական ու բողոքական դպրոցների երկսեռ աշակերտները ՝4106 հոգի[160]:

Ընդ որում, 1878-1903թթ. ընթացքում Թուրքիայում, միսիոներների անմիջական նախաձեռնությամբ բացվեցին 7 քոլեջ, որոնք իրենցից ներկայացնում էին բարձրագույն և կրտսեր հաստատությունների համակցություն՝Եփրատ քոլեջը Խարբերդում, Ամերիկյան քոլեջը՝Վանում, Կենտրոնական Թուրքիայի քոլեջը՝ տղաների և աղջիկների մասնաբաժիններով ՝համապատասխանաբար Այնթափում և Մարաշում, Ս.Պողոսի քոլեջը՝ Տարսոնում, Անատոլիական քոլեջը՝ Մարզվանում և Միջազգային քոլեջը՝ Զմյուռնիայում [161]:

Մեզիրեում, Խարբերդում, Հյուսեյնիկում և շրջակա ավաններում բացվել էին նաև մանկապարտեզներ՝ ծաղկոցներ[162]: Նիկոմեդիայի գավառը 1909-1910 թթ. ուներ ազգային 82 դպրոց, որոնցից 50-ը արական՝ 5142 աշակերտներով, 32-ը՝ իգական՝ 4298 աշակերտուհիներով, 15 մանկապարտեզ՝ 1555 երեխայով: Կար 178 ուսուցիչ,13 ուսուցչուհի[163]:

1897թ. Պիլեճիկում բացվում է բողոքական դպրոց փակված լուսավորչական դպրոցի փոխարեն: 1901թ. ի վեր այնտեղ պաշտոնավարում էին Պարտիզակի Բարձր Վարժարանի շրջանավարտ Զ.Գասապյանը, դպրոցի աշակերտներից 25-ը բողոքական էին, իսկ 32-ը պատկանում էին մնացած բնակչությանը:

Ավետարանականության տարածումը կրթական մակարդակով մյուսներից տարանջատեց նաև Մունճուսուն գյուղը: Կեսարիայի ողջ շրջանում չկա մեկ այլ գյուղ,

---

[159] Չորմիսեան Լ., նշվ. աշխ., էջ 503:
[160] Ճիզմեճեան Մ., Խարբերդ եւ իր զավակները, Ֆրեզնօ, 1955, էջ 397:
[161] Կիրակոսյան Ա., <<ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը 19-րդ դար-1914թ.>>, էջ 76:
[162] Երկանյան, Վ. Ս., Հայկական դպրոցը *1800-1870 թթ.*, էջ 39:
[163] Գասապեան Մ., Հայերը Նիկոմեդիոյ գավառին մեջ, Պարտիզակ, 1913, էջ 39-41:

որն այնքան գրագետ մարդ ունենար, որքան Մունճուսունը, դրան պետք է հավելել նաև Մարզվանի Աստվածաբանական ճեմարանում, Անատոլիա քոլեջում և Բեյրութի բժշկական քոլեջում ուսանող Մունճուսունի երիտասարդներին[164]:

Շեխ Յաղուպ գյուղում ավետարանականները ունեին իրենց դպրոցը: 1896թ. Բիթլիսից միսիոներներն այստեղ են ուղարկում Տ. Վարժապետյանին ՝ դասախոսելու համար: Նիկոմեդիայի 3 դպրոցներում 1896 թ. 88 աշակերտներ էին դաստիարակվում: Եկեղեցին իր ծախսերի մեկ երրորդը Պորտից էր ընդունում: 1895թ. ժողովրդի տված նվիրատվությունը կազմել էր 110 ոսկի: Դպրոցների ծախքի համար աշակերտներից մի փոքր տուրք էր առնվում[165]:

1900-1902 թթ. Չարսանճագ-Բերրիի բողոքականների դպրոցն ուներ 80 աշակերտ, վարժապետ ու վարժուհի: Այստեղ գործում էր նաև « Կանանց ու երիտասարդների քրիստոնեական ջանասիրաց ընկերակցությունները»: Եկեղեցին ուներ տարեկան 3000 դահեկան ծախս[166]:

Ընդհանուր առմամբ, 1900-1914 թթ. Արևմտյան Հայաստանի կրթական ասպարեզում հատկապես մեծ վերելք էր ապրել Խարբերդը: Այստեղ գործում էր 5 քոլեջ՝ ֆրանսիական, գերմանական, ամերիկյան՝ երկսեռ «Եփրատ» քոլեջը, երկու ազգային Կենտրոնական վարժարան[167]:

Եփրատ քոլեջն ուներ նաև մանկավարժական ճյուղ, որը մինչև 1914թ. ունեցել է 38 շրջանավարտ: Քոլեջին կից բացվել էր մանկաբարձական բաժին՝ 8 հայ ուսանողուհիներով[168]:

Հայոց Պատրիարքարանը 1901,1903 և 1908 թվականներին հրապարակել է Արմտահայաստանի, Թուրքիայի հայաշատ գավառների ու քաղաքների դպրոցների վիճակագրությունը, որին հետագայում անդրադարձել է հայ անվանի գրող և իրավաբան Գր. Զոհրապը: Նրա հաշվարկներով՝ այդ ժամանակաշրջանում Արևմտյան

Սակայն հարկ է նշել, որ արեւմտահայ կրթական կյանքին ուղղություն տվող կենտրոնը Կ.Պոլիսն էր: Դեռեւս 18-րդ դարի վերջերից այստեղ հիմնված էին եկեղեցիներին կից թաղային դպրոցներ, որոնց թիվը մշտապես տատանվում էր 40-ի շուրջը, որտեղ սովորում էր 5-6 հազար աշակերտ:

[164] «Ավետաբեր», 1904, թիվ 12, էջ 150:

[165] «Ավետաբեր», 1904, թիվ 13, էջ 225:

[166] «Ավետաբեր», 1902, թիվ 10, էջ 93:

[167] Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ. էջ 321:

[168] Նշվ. աշխ., էջ 401:

Հայաստանի մեջ կային « շուրջ 1785 կրթական հաստատութիւններ՝ ավելի քան 282,000 աշակերտով, մինչդեռ թուրքերը հազիվ կրնան հաշվել 150 դպրոց՝ շուրջ 17,000 աշակերտով: Քիւրտերը ոչ իսկ մեկ դպրոց ունին»[169]:

Վիճակագրությունը կասկած չի հարուցում, որովհետև այն քաղված է Հայոց Պատրիարքարանի և Թուրքիայի պետական համալսարանի տեղեկատվական աղբյուրներից, մանավանդ որ հայկական և ոչ մի դպրոց չէր կարող բացվել առանց կառավարության թույլատվության, քանի որ «Երկար տարիներէ ի վեր թուրք կառավարութիւնը մասնաւոր տուրք մը կը գանձէ բովանդակ բնակչութենէն, նաև քրիստոնեաներէն, կրթութեան համար՝ հիսեյի –մեարիֆ: Իհարկէ, հատկացնելու համար միայն թուրք դպրոցներին: Թուրք կառավարութիւնը ոչ միայն որեւէ հատկացում չի կատարեր հայ դպրոցներուն,այլ ամեն տեսակ խոչընդոտներ կը ստեղծէ անոնց առջեւ: Մանաւանդ Ապտուլ Համիտի վարչութեան օրերուն,հայ դպրոցներու դէմ այս պայքարը հասած էր ծայրագոյն մոլուցքին»[170]:

Արևմտահայ կրթական կյանքում նորահայտ ավետարանական դպրոցները հովանավորվում էին ԱՄՆ-ի կողմից թե նյութական և թե քաղաքական առումով: Եթե դրան հավելենք նաև նման դպրոցների բարենպաստ պայմաններն ու նյութատեխնիկական ապահովվածությունը, պարզ է դառնում, թե ինչու դրանք կարողացան հաջողությամբ մրցակցել ժամանակի ազգային դպրոցների հետ:

Ամերիկյան առաքելությունը չորս աստվածաբանական ճեմարան հիմնեց թուրքական առաքելություններից յուրաքանչյուրի համար. Մարզվանում՝ արևմտաթուրքական, Խարբերդում՝ արևելաթուրքական, Մարաշում՝ կենտրոնական Թուրքիայի առաքելությունների համար: Չորրորդ ճեմարանը՝ Մարդինում, պետք է ապահովեր հարավ-արևմտյան շրջանը, որտեղ արաբախոս բնակչություն կար[171]:

Հատկապես կարևոր էր Մարզվանի Աստվածաբանական վարժարանը, որ գտնվելով քոլեջի շրջակայքում, միշտ հնարավորություն էր ունենում աշակերտների շրջանում առանձնացնել հոգևոր պաշտոնների համար հարմար անձանց: Կրթական հիմնարկները լուսավորական աշխատանքներից բացի իրականացնում էին նաև

---

[169] Զոհրապ Գր., Հայկական հարցը փաստաթղթերուն լոյսին տակ, Բեյրութ, 1973, էջ 16:
[170] Նշվ. աշխ., էջ 15:
[171] Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, 1977, p. 125-126.

որոշակի բարեգործական գործունեություն: Մարզվանի «Երիտասարդաց աղքատասիրական ընկերակցությունը» ուներ իր կանոնադրությունը, այն ուներ նաև իր գրատունը,որը փորձում էր վարժարաններից զատ որոշակի կրթական քայլեր ձեռնարկել, իսկ 1902թ. հոկտեմբերին բացվեց նաև մանկապարտեզ՝ երեխաների համար[172]:

Ամերիկյան միսիոներների կրթական հաստատությունների մեջ առանձնահատուկ տեղ ուներ Խարբերդի աստվածաբանական ճեմարանը, որ բացվեց 1859թ., իսկ արդեն 1878թ. հիմնվեց «Արմենիա» քոլեջը, որն էլ 1888թ. վերանվանվեց «Եփրատ քոլեջ»[173]: Քոլեջի հիմնադիր ու առաջին նախագահը ամերիկյան միսիոներական առաքելությունների աշխատակից վերապատվելի Քրոզբի Հուիլն էր: Քոլեջն ուներ 6 մեծ և 14 փոքր շենքեր, որոնցից 2 մեծ շենքեր աղջիկների համար:1902թ. քոլեջի տարբեր բաժիններում սովորում էր 1100 աշակերտ[174]:

Հետագա տարիներին քոլեջը ղեկավարել են ամերիկացի միսիոներներ Հենրի Ռիգզն ու Ջեյմս Բարտոնը, որը Խարբերդ էր եկել 1885թ: 1913-1914թթ .Եփրատ քոլեջի վարչական ժողովի նախագահն էր բժիշկ Հենրի Ատկինսոնը, քարտուղարը՝ Մերի Ռիգզը:Այսպիսով, 19-րդ դարի կեսերից ամերիկացի միսիոներները մի քանի տասնյակ երկսեռ դպրոցներ բացեցին Խարբերդում, Մալաթիայում, Ակնում, Արաբկիրում, բազմաթիվ գյուղերում[175]: Ամերիկյան միսիոներների հիմնադրած Եփրատ քոլեջը դարձավ ժամանակի լավագույն կրթօջախներից մեկը:

Է.Կոստանդյանը նշում է, որ «Միսիոներների մուտքը կատարվեց այնպիսի մի ժամանակ, երբ ժողովրդի մոտ 90 տոկոսը գտնվում էր համակ անգրագիտության մեջ, երբ գոյություն չունեին ազգային եկեղեցական-ծխական դպրոցներ>>[176]:

Բողոքականների լուսավորական և բարեգործական աշխատանքների համար լայն ասպարեզ բացվեց հատկապես համիդյան ջարդերի տարիներին, որոնք ըստ էության, համիդյան բռնապետության ամենադաժան տարիներն էին[177]:

---

[172] «Ավետաբեր», թիվ 12, 1902, էջ 49:
[173] Յիշատակարան Եփրատ գոլէճին, էջ 118-119:
[174]Greene Rev. J., Leaving The Levant, New York, 1916, p. 221 .
[175] Նազիկյան Գ.Ա., Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան,1969, էջ 67:
[176]Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության /19-րդ դարի 80-ական թվականներ/, Երևան, 2005, էջ 54:

Պատահական չէ, որ հենց այդ ժամանակ են հիմնվում Խարբերդի գթասիրական հաստատությունները, որոնց շնորհիվ ինչպես փաստում է «Ավետաբերը». «Փողոցների մեջ այլեւս թափառող աղքատներ չենք տեսնում>>[178]:

Այս գործն առաջին տարիներին հանձնված էր դոկ. Պարնըմին, իսկ վերջին տարիներին հանձնված է եղել վերապատվելի միստր Նեփին:Վերատեսչությունն իր նախագահության ներքո կազմակերպել էր վարչական մարմին: Շուկայի մեջ գործել են դերձակության և կոշկակարության վարձու շենքեր: Այս արհեստների զարգացմանը նպաստում էր պարոն Մելքոն Պենենյանը, որը թեև բարձրագույն կրթություն էր ստացել, սակայն նախընտրում էր արհեստը: 100-120 երկսեռ երեխաներ հաճախում են Եփրատ քոլեջ՝ աչքի ընկնելով իրենց ուշիմությամբ: Այս կանոնավոր դպրոցականներից զատ խնամակալությունը բացել էր գիշերային դպրոց աշխատող տղաների և աղջիկների համար:[179] Տղաների դպրոցի մեջ ուսուցանվում են թվաբանություն, տոմարակալություն, հայերեն, գեղագրություն, աշխարհագրություն: Աղջիկների դպրոցում աղջիկները սովորում էին կարդալ, գրել, պարզ թվաբանություն: Ժամանակի մամուլում հանդիպող վկայությունների համաձայն, Խարբերդի ամերիկյան պատսպարաններում գտնվող տղաների հագուստն ու սնունդը շատ ավելի բարվոք վիճակի մեջ է եղել, քան գերմանական պատսպարաններինը: Ժողովասրահի մեջ հանդիպող երկսեռ երիտասարդները բոլորն էլ կոկիկ ու մաքուր են հագնված, նույնիսկ քաղաքի շատ հարուստներից ավելի լավ: Սնունդը ևս բարձր մակարդակի վրա է եղել: Մեծ ուշադրություն էր դարձվում բարոյական կրթությանը: 450- ից ավելի երկսեռ երեխաների բարոյական կրթության հարցը իրենց վրա էին վերցրել Նեփը և Անտոնյանը: Խարբերդի Աստվածաբանական վարժարանի բացման վերաբերյալ խնդրագիր ուղարկվեց Բոսթոն, ուսուցիչները պետք է լինեն Խարբերդի միսիոներները: Ընդհանուր առմամբ իր գործունեության սկզբից մինչև 1912թ. Եփրատ քոլեջն ունեցել է 177 պատվաբեր շրջանավարտ, որոնցից 38-ը տարբեր քաղաքներից ու գյուղերից էին: Նրանցից 48-ը ուսուցիչ էին, 32-ը՝ վաճառական, 21-ը՝ արհեստավոր,18-ը ՝ձեռնադրյալ

---

[177] Խառատյան Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում /1840-1900/, Երևան, 1996, էջ 186:
[178] «Ավետաբեր», 1902, թիվ 13, էջ 50:
[179] «Ավետաբեր», 1904, թիվ 27, էջ 483:

կղերական, 13-ը՝ բժիշկ,10-ը ՝երկրագործ, 4-ը՝ խմբագիր, 4-ը՝ դեղագործ, 2-ը՝ երկրաչափ և այլն[180] :

1898 թ.տարեկան հաշվետվության համաձայն ՝ Խարբերդում գործում էին բողոքական 63 դպրոցներ՝ 4000 աշակերտներով[181]: Հենց այս դպրոցների, և հատկապես Եփրատ քոլեջի շրջանավարտների շրջանում էր, որ միսիոներների կատարած աշխատանքը խթանեց ԱՄՆ արտագաղթը, որ միսիոներական գործունեության բացասական հետևանք էր,որչափով սակավամարդ էր դարձնում հայ ազգաբնակչությունը հայրենիքում: Միևնույն ժամանակ արտագաղթն ազդեց նաև Խարբերդում բողոքական համայնքի թվաքանակի վրա, ինչպես փաստում է Վ.Մալքոմը[182]:

Պակաս բացասական նշանակություն չունեցավ նաև ազգային դաստիարակության բացակայությունը միսիոներական կրթօջախներում, որի առթիվ Ե. Տեմիրճիպաշյանը ցավով գրում էր. «մեր մանուկն օտարին կրթել կուտանք: Ու կը տրտնջանք թե հայոց ազգն աղքատ է, թե հայոց ազգն ազատ չէ»[183]:

Այսինքն, մեր առաջավոր գործիչները հասկանում էին, որ մեր ազգի փրկությունը հնարավոր է միայն ուսյալ սերունդ կրթելու պարագայում՝ միաժամանակ հասկանալով այն վտանգը,որ պարունակում էին իրենց մեջ միսիոներական բարեգործական-կրթական հաստատությունները՝ շրջանցելով ուսուցման ազգային ոգին:

19-րդ դարի 90-ական թվականներին ողջ սրությամբ դրվեց գավառաբնակ հայության կրթության հարցը: Հրամայական պահանջ էր՝ բարելավել ազգի տնտեսական ու կրթական վիճակը՝ մրցակցելու օտարամուտ միսիոներական դպրոցների հետ և չեզոքացնելու վերջիններիս ազդեցությունը կրթական կյանքում: Բացի այդ գավառահայությունը թշվառ վիճակում էր և իրավիճակը մեծապես դժվարանում էր դպրոցների բացակայության պատճառով[184]:

---

[180] «Ավետաբեր», 1908, թիվ, 14, էջ 879:
[181] Peterson M.,"Starving Armenians". America and the Armenian Genocide,Charlottesville, 2004, p. 199
[182] Malcom V.,The Armenians in America, Boston,1919, p. 76.
[183] Տեմիրճիպաշեան Ե., Երկեր, Երևան, 1986, էջ 18:
[184] «Ծաղիկ», 1890, թիվ 5:

Դեռևս 1868 թվականին միսիոներները Կ.Պոլսում բացեցին «Կալաթասարայի» լիցեյը, 1869-ին՝«Ռոբերտ» քոլեջը[185], իսկ 1876-ին Խարբերդում ՝«Եփրատ» քոլեջը: Նմանատիպ քոլեջներ բացվեցին Վանում, Մարզվանում, Կարինում, Այնթափում, Մուշում և այլուր: Փաստորեն, բազմաթիվ հրատապ խնդիրների կողքին ավելանում էր նաև հայ երեխաների՝ այլադավան դպրոցներում ուսանելու խնդիրը: Ընդ որում, ծնողները հաճախ նախընտրում էին օտար ուսուցումը ազգայինից: Կարևորելով ազգային նկարագրի պահպանման և տոհմիկ դաստիարակության անհրաժեշտությունը՝ հայ մտավորականները կասկածի տակ էին դնում օտար, այլադավան կրթության տեր մարդկանց աշխարհաքաղաքական պատկանելիությունը, որի առիթով «Մասիսը» գրում է. «Անոնք գիտական հարեւանցի տեղեկութիւններովն միայն կը մտնեն հայ ընկերութեան մէջ, ուր պիտի ապրին,առանց ճանաչելու իրենց տոհմին անցեալը,կեանքը եւ շատ անգամ լեզուն ալ»[186]:

Այսպես Մարզվանի բողոքական դպրոցներում 1900-1904 թթ. 250 աշակերտներ կային, Անատոլիա քոլեջում ևս քաղաքից բավական աշակերտներ էին ընդգրկվել, բայց դա բավական չէր բարձր դպրոցների պակասը լրացնելու համար[187]: Քոլեջի նախապատրաստական ճյուղի դասերը հարմարեցված էին բուն քոլեջին: Մարզվանի աղջիկների բարձրագույն վարժարանն այնպիսի համբավ ուներ, որ շրջակա ավանների և քաղաքների բնակիչները իրենց դուստրերին այստեղ կրթության տալու համար նույնիսկ ընտանյոք հանդերձ տեղափոխվում էին Մարզվան: Այս վարժարանի մեջ 1904թ. 163 աշակերտուհի կար, 113 հայ, 39 հույն, 4 ամերիկացի և 1 ռուս: Վարժարանը հիմնվել էր 1868թ. և այդ ժամանակից ի վեր 175 աղջիկների վկայական է տրվել: Վարժարանի տնօրինուհին միս Ուիլարդն էր: Որբանոցի մեջ 60 տղա և 40 աղջիկ կային, նրանք միս Ռայթի խնամքի տակ էին: Պարտիզակի բարձրագույն վարժարանը հիմնվել էր 1879թ. Փիրսի գլխավորությամբ: Վարժարանը 1907թ. ունեցել է 155 շրջանավարտ, որոնցից շատերը հետագայում դարձան Ռոբերթ քոլեջի շրջանավարտներ[188]:

---

[185]An Appreciation. In Memory of the Rev. George Washburn (1833-1915). Printed. not Published by The Trustees of Robert Qollege, New York, 1915, p. 8.

[186] «Ղուկասյան Հ., Բողոքականությունը Կովկասուն Հայոց մեջ, Թիֆլիս,1886, էջ 57:

[187] Մասիս», 1898, թիվ 3:

[188] «Ավետաբեր», 1896, թիվ 2, էջ 19:

Միսիոներների կրթական-բարեգործական աշխատանքները լայն ծավալ ստացան նաև Ուրֆայում: 1897թ. համայնքի համար նախատեսված ընդհանուր ծախսի գումարը հասավ 366 օսմ. ոսկու, որից 189ը նախատեսվում էր կրթության, իսկ մնացյալը՝ հոգևոր և բարեսիրական նպատակների համար: Կիրակնօրյա դասերին ներկա էին լինում ավելի քան 600 մարդ, որոնցից շատերը լուսավորչական էին: Ուրֆայի բողոքական կիրակնօրյա դպրոցի երկսեռ աշակերտների թիվը 1896թ. կազմել է 1.100, գրանցված ամենափոքր թիվը եղել է 350,իսկ միջինը՝ 800-900: Այս բազմությունն ամեն կիրակի եկեղեցու մեջ հավաքվում է և հատուկ կարգերի է բաժանվում: Կիրակնօրյա դպրոցն ուներ տղաների 16 և աղջիկների 32 կարգեր: Յուրաքանչյուր ուսուցչի ընկնում էր 15-20 աշակերտ: Ամեն հինգշաբթի երեկո դասերից հետո կիրակնօրյա ուսուցիչները հավաքվում էին գալիք կիրակի օրվա դասերը քննարկելու համար: Դասընթացի նյութը սկսվում էր Հին Կտակարանի ուսումնասիրումից, այնուհետև՝ Նոր Կտակարանի վերաբերալ առանձին քննարկում էր կազմակերպվում: Ապա դասընթացի նյութ էր դառնում մարդը՝ իր ֆիզիկական և հոգևոր կառուցվածքով: Ծննդյան տոնից մեկ շաբաթ առաջ քննություն էր անցկացվում :

Հարկ է նշել, որ Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների ¾-ը, այսինքն 48-ից 36-ը դպրոցի նախկին սաներից էին եղել: Հանձնաժողով էր կազմվում նաև Բեյրութի Ամերիկյան Բժշկական Վարժարանի շրջանավարտներին քննելու համար [189]:

Ադաբազարի և Պարտիզակի բողոքական եկեղեցիները 1900-ական թթ. Գավառական ժողով անունով եկեղեցական միություն էին կազմակերպել:Այս ժողովը Բութանիայի հոգևոր Միության մեկ ճյուղն է կազմել: Սույն մարմինը տարվա մեջ 3 անգամ գումարվում էր և եկեղեցու հոգևոր կարիքների մասին խորհրդակցելով՝ ծախսերի տնօրինություն անում [190]:

Ադաբազարի մեջ 400 ավետ. հայեր կային, գործում էր «Հայուհեաց վարժարանը» ՝ 10 խնամակալների հովանավորության ներքո և 3 ամերիկացի ուսուցչուհիների ուժերով: Նիկոմեդիայի ավետ. հայերի թիվը հասնում էր 250-ի:Հոգևոր տուրքը գոյանում էր ժողովրդի՝ ամեն կիրակի գանձանակը նետած կամավոր նվերներից: Տղաների,

---

[189] «Ավետաբեր», 1904, թիվ 16, էջ 280:
[190] «Ավետաբեր», 1904 , թիվ 13, էջ 226:

աղջիկների և մանուկների դպրոցներում կային 65 աշակերտներ: Կանայք, երիտասարդները և օրիորդները ուրույն աղոթքի ժողովներ էին անում:

Միսիոներների նախաձեռնությամբ բացվող դպրոցները և նրանց բարեկարգ վիճակը, ինչպես նաև թուրքական կառավարող շրջանների թույլատվությունը, ակնհայտորեն նպաստում էին բողոքականության տարածմանը: Թուրքական կառավարությունը հանդուրժում էր միսիոներների կրթական ձեռնարկումները, քանի որ ի դեմս միսիոներական դպրոցների՝ տեսնում էր կարևոր օջախներ հայ ժողովրդի միասնությունը պառակտելու և դավանաբանական հակամարտություններն ավելի սրելու համար, իսկ դպրոցական հարմարավետ շենքերն, ըստ էության, հետագայում անցնելու էին թուրքերի ձեռքը՝ իբրև հաստատուն կապիտալ[191]: Սակայն չի կարելի հերքել այն փաստը, որ ամերիկյան, ֆրանսիական ու գերմանական միսիոներների հիմնած դպրոցները դրականապես են ներգործել սերունդների վրա և նպաստել են այս կամ այն մասնագիտության մեջ խորանալուն, լեզուների իմացությանը, գիտամանկավարժական և թարգմանական գրականության ստեղծմանը, թեև այդ ամենի ընդհանուր ուղղվածության պարագայում հաճախ մերժվում էր բուն հայկականը: 1902թ. <<Մուրճում>> տպագրված մի հոդվածից տեղեկանում ենք, բողոքականների ազդեցությունը խարբերդահայության շրջանում թուլացնելու նպատակով նույնիսկ որոշվում է Սանասարյան վարժարանը տեղափոխել Խարբերդի մոտ գտնվող Սորսորի վանք և նրա բակում կառուցել դպրոցի հարմարավետ շենք: Այդ վայրը մատնանշել էր վարժարանի ուսուցիչ Ս. Սոխիկյանը: Դրա համար կային հատուկ պատճառներ: Մասնավորապես, Խարբերդում բողոքականութունը խորը արմատներ էր ձգել և իր կրթական ու կրոնական հաստատություններով սպառնում էր հայ լուսավորչական եկեղեցուն և տոհմային դաստիարակությունը, իսկ Սանասարյան վարժարանը կարող էր «այդ օտար տարրերը չեզոքացնել ու մրցիլ անոնց դէմ»[192]: Սակայն ինչ-ինչ պատճառներով Սանասարյան վարժարանը չտեղափոխվեց Խարբերդ: Արևմտահայության համար 19-րդ դարի երկրորդ կեսին կրթական կենտրոն էր մնում Կ.Պոլսը, քանզի այստեղ էին բացվել եվրոպական չափանիշներով գործող նոր

---

[191]Փայասլյան Ստ., Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին, ԲՀԱ, Եր., 2006, համար 1, էջ 124:
[192] «Մուրճ», 1902, թիվ 3, էջ 205:

դպրոցներ: Հայտնի էին Նուպար –Շահնազարյան ժառանգավորաց գիշերօթիկ վարժարանը/1866-1876/, Կ.Փանոսյանի Ագապյան իգական դպրոցը/1869-1876/, Մեզպուրյան իգական վարժարանը /1879-1896/, Պերպերյան վարժարանը/1876-1934/: 1886թ Կ.Պոլսում, Ղալաթիա թաղամասում բացվեց Ազգային Կեդրոնական վարժարանը, որը հետագայում հասավ լիցեյի աստիճանի: 1889թ. Կ.Պոլսի մերձակայքում գտնվող Արմաշ գյուղի Չարխափան Ս.Աստվածածին վանքում Կ.Պոլսի պատրիարք Խորեն Աշըգյանի հովանավորությամբ և Մաղաքիա Օրմանյանի վերատեսչությամբ հիմնվեց հոգևոր բարձրագույն դպրոց, որը կատարեց այն դերը, ինչ կատարել է Գևորգյան ճեմարանը Էջմիածնում: Դպրեվանքի նպատակն էր «Եկեղեցականութեան փափաք ունեցող երիտասարդները սոյն կոչման համար կրթել և պատրաստել»[193]:

1895թ. Կ.Պոլսում բացվում է Էսայան սանուց վարաժարանը: 1880 թվականից Վանում գործում էր Երամյան միջնակարգ դպրոցը: Ազգային բարեկարգ դպրոցներ են գործել Մուշում, Խարբերդում, Կեսարիայում, Այնթափում, Հաճընում, Սեբաստիայում և այլուր:1881թ. Կարինում հասարակական-քաղաքական գործիչ Կ.Եզյանի ջանքերով և մեծահարուստ Մ.Սանասարյանի ջանքերով հիմնվել էր Սանասարյան բարեկարգ վարժարանը, որը գործում էր գերմանական ռեալական գիմնազիայի օրինակով: Իր գոյության 34 տարիների ընթացքում վարժարանը տվել է 1000-ից ավելի շրջանավարտ: 19-րդ դարի 2-րդ կեսին հայկական մշակույթի ամենակարևոր օջախներից մեկն էր Վասպուրականը: Այստեղ Վարագա վանքում է հրատարակվել արևմտահայ «Արծուի Վասպուրական»-ը /1855թ. /, որի կանչը հասնում էր հայաբնակ հեռավոր անկյուններ: Ըստ ազգագրագետ, մանկավարժ Մ.Միրախորյանի վիճակագրական տվյալների, 19-րդ դարի վերջում Վանում գործում էր 10 վարժարան `1650 աշակերտով, որից 300-ը՝ իգական սեռի[194]:

1896թ. կոտորածներից առաջ՝ 1895թ. Վանի դպրոցների աշակերտների թիվը /ներառյալ ամերիկյան միսիոներների երկու դպրոցը / հասնում էր 2520-ի, որից 1590-ը՝ տղա, 930-ը աղջիկ[195]:

---

[193] Ընդարձակ օրացոյց Ազգային հիվանդանոցի,Կ.Պոլիս, 1900, էջ 183:
[194]Միրախորյան Մ.,Նկարագրական ուղեւորություն ի հայաբնակ գավառս Արեւելյան Տաճկաստանի, մաս Բ.,Կ.Պոլիս, 1885, էջ 176:
[195]« Մշակ», 1895, թիվ 146:

1898թ. Վանի դպրոցներում /ներառյալ ամերիկյան միսիոներների 3 դպրոցների/ սովորում էին 2060 աշակերտ:[196] Դարասկզբին այնտեղ գործում էր 26 դպրոց[197]:

Ամերիկյան միսիոներների ղեկավար Ռեյնոլդսը Բարնհավի հետ Վանում հաստատվել էր 1872թ. և հիմնել ժողովարան և տարրական երկսեռ վարժարան[198]: Նրանք եկել էին կանխամտածված ծրագրերով և իրենց հետ բերել մեծ գումարներ, որ հատկացնում էր Բորդ ընկերությունը/կազմվել էր 1810 թ. Բոստոնում/ [199]:

Նրանք հայ երիտասարդներից պատրաստում էին բողոքական քարոզիչներ, ուսուցիչներ, իրենց երկրի քաղաքականության երկրպագուներ: Դոկտոր Ռեյնոլդսն ուներ խիստ պահպանողական հայացքներ: Նրա ամերիկացի կամ հայ աշխատակիցները պարտավոր էին «իր ակնոցով նայիլ եւ իր հրահանգով շարժիլ, ապա թէ ոչ պաշտօնին կորսնցուցած իրենց տեղը դառնալ կստիպուէին»[200]:

Դրա ապացույցն է այն, որ երբ 1892թ. իբրեւ դոկտոր Ռեյնոլդսի օգնական և ամերիկյան վարժարանի տեսուչ, Վան եկավ Կ. Պոլսի «Ավետաբերի» խմբագիր Գրինի որդին՝ Ջորջը՝ հայասեր ու ազատախոհ մի անձնավորություն, որը դեմ էր հայ լուսավորչական եկեղեցու պառակտմանը՝ դրանով իսկ խիստ գրգռեց Ռեյնոլդսի դժգոհությունը, «ուղեղային տկարություն ունի ըսելով ՝Վանէն հեռացուցին զայն / Ջորջին-Ս.Գ./»[201]:

Չնայած այդ բոլորին՝ միսիոներների դպրոցներում աշխատող որոշ հայ ուսուցիչներ իրենց դասավանդման ընթացքում աշխատում էին աշակերտների մեջ վառ պահել ազգային զգացմունքները, նրանց դաստիարակել հայրենասիրության ոգով: 1884թ ամերիկյան միսիոներների աղջիկների վարժարանում հայոց պատմություն էր դասավանդում Հ. Երամյանը, Հայաստանի աշխարհագրություն՝ Մ. Նալպանտյանը:

Պատահական չէ, որ <<Ավետաբերի>> մեջ հանդիպում ենք նաև հատվածներ, ուր նշվում է, որ բողոքական դպրոցներում աշխատում և վարձատրվում են նաև

---

[196] «Մշակ», 1898, թիվ 76:
[197] «Մշակ», 1903, թիվ 173:
[198] Երամեան Հ., Յուշարձան, հ.Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 91:
[199] Յիշատակարան Եփրատ Գօլէճի, էջ 35:
[200] Գազանճյան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրական, Բոստոն, 1950, էջ 293:
[201] Երամյան Հ., նշվ .աշխ., էջ 282-286:

լուսավորչական ուսուցիչներ՝ նշելով, որ «բողոքական ըլլալէ աւելի Աստուծոյ մարդը եղող անձանց կը կարօտինք» [202]:

Սակայն շուտով Ռեյնոլդսը, նկատելով աշակերտուհիների ազգասիրական խանդավառությունը, դադարեցնում է նման առարկաների դասավանդումը[203]:

Նա մասնակցել էր Ամերիկայի քաղաքացիական պատերազմին/1861-1865/,սակայն խիստ դեմ էր հայ ազգային–ազատագրական շարժումներին: Բայց և այնպես հայ ազգային-ազատագրական գաղափարները թափանցում են միսիոներական վարժարաններ:

Ա. Չթչյանի ջանքերով բողոքական համայնքի շրջանակներում կազմակերպվում է գաղտնի հեղափոխական խմբակ, որի մասնակիցներն էին Տ. Նալչաճյանը, Լ. Կազանչյանը, Օ. Ռշտունին, Ա. Ասլանյանը և ուրիշներ: Սակայն գաղտնիքը բացվում է և Ռեյնոլդսը պահանջում է ցրել խմբակը ու կապ չունենալ հեղափոխականների հետ: Խմբակի մասնակիցները, մերժելով նրան, որոշում են խմբովին մեկնել Ամերիկա և առաջնորդվելով ռամկավարական Ամերիկայի լուսաւոր գաղափարներով, Ռաֆֆու «Կայծեր»-ի Ասլանի նման <<վերադառնալ Հայաստան և հեղափոխական առաքյալների դեր կատարել Հայրենիքում>> [204]:

1880-ական թթ. Վան եկավ միսիոներուհի օր. Քեմպլը, որն իբրև բժիշկ՝ դարձավ Ռեյնոլդսի օգնականը և աղջիկների վարժարանի տեսուչ: Նրա ղեկավարությամբ կազմվեց խնամատար մարմին, որը դարմանում է 1895-1896 թթ. ջարդերից փրկվածների վերքերը, սնունդ ու ապաստան տալիս նրանց: Նա շուրջ 15 տարի գործեց Վանում և վերադարձավ Ամերիկա[205]:

1900-ական թթ.Ամերիկայից Խարբերդ ,ապա Վան է գալիս դոկտ. Աշըրը, որը բացի դպրոցում դասավանդելուց, բժշկել է շատ հիվանդների[206]: Արժանին պետք է հատուցել ամերիկացի այն միսիոներներին, որոնք օժանդակություն էին ցույց տալիս հայ ազատագրական շարժման մասնակիցներին: Նա ևս հիշատակում է Քլ. Աշըրին, որը մշտապես բուժօգնություն էր ցույց տալիս վիրավոր կամ հիվանդ հայդուկներին:

---

[202] «Ավետաբեր», 1904, թիվ 13, էջ 228:
[203] Նշվ. աշխ., էջ 151:
[204] Վասպուրականը եւ իր տարագիր զաւակները,Պոսթըն, 1942, էջ 78:
[205] Գազանճյան Լ., Վերածնունդ Վան-Վասպուրականի, Պոսթոն, 1958, էջ 300—301:
[206] Գազանճյան Լ., Նշվ.աշխ., էջ 299:

Ամերիկյան հիվանդանոցում են ապաքինվել հայդուկներ Կողբեցի Տիգրանը, Մեսրոպը և ուրիշներ: Ընդ որում, բոլոր դեղամիջոցները տրամադրվել են անվճար[207]: Միսիոներական դպրոցներում դասավանդում էին հայոց լեզու, հայոց պատմություն, ֆրանսերեն, կրոն, թուրքերեն, անգլերեն, ԱՄՆ-ի աշխարհագրություն, թվաբանություն[208]:

Ընդհանուր առմամբ, 1894-96թթ. կոտորածներից հետո աշակերտների հոսքը դեպի միսիոներական դպրոցներ ուժեղացավ, քանի որ ծնողները չէին կարողանում վճարել ուսման վարձը ազգային վարժարաններում: Այնթափի «Կեդրոնական Թուրքիոյ գոլէճ» -ի աշակերտների ուսման վարձը 3 ոսկի էր, գիշերօթիկները այս գումարից զատ 7 ոսկի ևս հացագին էին վճարում: Այնպես որ նախակրթարանի համար գիշերօթիկ աշակերտներին հատկացվելիք տարեկան գումարը 9 և քոլեջի ուսանողներինը՝ 10 օսմ. ոսկի էր: Ադաբազարի հայուհիների վարժարանի տարեթոշակն էր 10 օսմ ոսկի[209]:

Որբերի թիվն այնքան էր շատացել, որ միսիոներները հիմնեցին երկու որբանոցներ: Դարասկզբին /1902-1903թթ/ Վանում գործում էր ամերիկյան միսիոներների տղաների /215 աշակերտ/ և աղջիկների /220 աշակերտուհիներ /վարժարան, տղաների որբանոց /200 որբ/, աղջիկների որբանոց /150 որբուհի/, մանկապարտեզ /40 երկսեռ մանուկներ/:Գերմանական աղջիկների որբանոցում սովորում էին 100 որբուհիներ [210]:

Ռեյնոլդսը մտահոգված էր Վանում բարձրագույն կրթարան հաստատելու գործով: Վանում քոլեջ հաստատելու նպատակով նա 1913թ. ուղևորվում է Անգլիա, ապա նաև Ամերիկա: Անգլիայի հայասերները և ամերիկյան Պորտ ընկերությունը իրենց աջակցությունն են խոստանում նրա ձեռնարկին:Սակայն 1915թ. արհավիրքը անկատար թողեց նրա նպատակը:Միսիոներների գործունեության մասին խոսելիս չպետք է անտեսել մի շատ կարևոր հանգամանք, այն, որ նրանց դպրոցներում բարձր հիմքերի վրա էր դրված լեզուների ուսուցումը՝ անգլերեն, ֆրանսերեն, որ այնտեղից դուրս էին գալիս շատ կրթված և ուսյալ երիտասարդներ, որոնք իրենց նվիրեցին ազգային կրթության և լուսավորության գործին, դարձան ազգային-ազատագրական շարժման

---

[207] Արամը, Մահւան յիսնամեակին առթիւ,Երևան, 1991, էջ 263:
[208] Երամեան Հ., Յուշարձան, հ.Ա, էջ 151:
[209] «Ավետաբեր», 1896, թիվ 36, էջ 284:
[210] «Մուրճ», 1904, թիվ 11, էջ 20-21:

մասնակիցներ: Չպետք է ուրանալ նաև այն, որ «արտասահմանյան բարձր կրթութիւնը քաղաքակիրթ աշխարհի լոյսն եւ շատ օգտակար գաղափարներ բերաւ»[211]:

1890-ականին Թուրքիայում հայ ազգային և բողոքական դպրոցները ունեին հետևյալ պատկերը.[212]

Եվրոպական Թուրքիա			Ասիական Թուրքիա			
դավանանք	դպրոց	աշակերտ	դպրոց	աշակերտ	Ընդամենը՝դպրոց	Ընդամենը՝ աշակերտ
Հայ	125	35624	1264	25692	1389	61316
բողոքական	5	535	101	4384	106	4919

Վանի ազգային և օտար որբանոցների մեջ 1896թ. պատսպարվել և դաստիարակվել են 748 որբ ՝ հետևյալ բաժանմամբ.

	Մանչ	Աղջիկ
ա.Վարագայ	107	-
բ.Կարմրվորի	35	-
գ.Սալնապատի	-	65
դ.Ս.Խաչի	4	12
ե.Ամերիկեան	292	175
զ.Լատինացվոց	28	30
	466	282[213]

1900-1903թթ. Վանի և հարակից գյուղերի մեջ «բողոքականների և լատինացիների վարժարաններ էին հաճախում հետևեալ թվով հայ աշակերտներ:

	Մանչ	Աղջիկ
Բողոքականաց	166	253

[211] Երամեան Հ., Յուշարձան, հ.Ա., էջ 328:
[212] «Ծաղիկ», 1892, թիվ 52, էջ 603-604:
[213] Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ.,Կ.Պոլիս, 1903, էջ 10:

Լատինացվոց	326	437
	492	690[214]

1903 թ. դրությամբ Վանում գործել է 21 ազգային վարժարան 7-ը ՝ քաղաքում, 14-ը՝ մերձակա գյուղերում /1877 աշակերտ, 59 ուսուցիչ/: Վիճակացույցի «Ծանօթութիւններ» բաժնում տրվում են զգալի տեղեկություններ այն վարժարանների ու դպրոցների մասին, որոնք, ըստ էության, դուրս են եղել Կ.Պոլսի առաջնորդարանի ենթակայությունից, թեև դրանք հայկական էին և գործում էին իբրև միսիոներական կամ մասնավոր դպրոցներ: Այսպես՝ Մշո առաջնորդական վիճակն արձանագրել է 23 վարժարան, 6-ը՝ քաղաքում, 17-ը՝ շրջակա գյուղերում /1318 աշակերտ, 35 ուսուցիչ/ [215]:

1903թ. դրությամբ Արևմտյան Հայաստանում գործող ազգային և օտար դպրոցներում և որբանոցներում գտնվող հայ մանուկների և ուսուցիչների թվի մասին փորձել ենք առավել մանրամասն ցույց տալ <<Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ >>-ի տվյալների հիման վրա կազմված աղյուսակով հավելված 2 վերնագրի ներքո:

1901, 1903, 1908թթ. Վիճակացոյցների համեմատական վերլուծությունից պարզվում է,որ իր գահակալության տարիներին Աբդուլ Համիդը ոչ միայն իրականացրել է հայերի զանգվածային կոտորածների հրեշավոր քաղաքականություն, այլև կասեցրել է հայ դպրոցի զարգացումը, արգելել նոր դպրոցների հիմնումը, մի մասն էլ ուղղակի փակել է ՝ ուսուցիչներին «հեղափոխականի» պիտակ կպցնելով: Ռուսական սահմաններին մոտ գտնվող բնակավայրերում, որտեղ բնակչության հիմնական կազմը հայերն էին՝ իրենց հայրենիքում, Թուրքիայի մնացած հայաբնակ գավառների համեմատությամբ, դպրոցների քանակը հասել էր նվազագույնի: Այսպես՝ Բաբերդի վիճակ՝ 7, Կարինի վիճակ /առանց Էրզրումի/ ՝12, Սպերի գավառ՝ 3, Բասենի ՝7, Բայազետի՝ 6, Դիարբեքիրի՝ 4 [216]:

Այսպիսով, վերոնշյալ վիճակագրական տվյալները փաստում են նաև միսիոներական բողոքական դպրոցների կրթական դերակատարման մասին, թեև

[214] Նույն տեղում:
[215] Նույն տեղում:
[216] «Ավետաբեր», 1897, թիվ 17, էջ 129:

ակնհայտ է, որ այս տեղեկությունները չեն ներկայացնում բողոքական դպրոցների ցանցի ողջ պատկերը, քանի որ տվյալները թերի են:

Բիթլիսի վիլայեթում 20-րդ դարի սկզբին կային մեծ ու փոքր հայկական գյուղեր, ուր բնակվում էր 9942 հայ բնակիչ[217]: Այն եղել է նաև կրթա-լուսավորական և մշակութային կենտոն: 19-րդ դարի երկրորդ կեսին վանքերին կից եղել են դպրոցներ: Հիմնվել են նաև խալֆայական տուն-դպրոցներ, որտեղ տիրացուները երեխաներին սովորեցնում էին գրել-կարդալ: Լինչը գրում է, որ իր այցի ժամանակ Բաղեշում կար 100 բողոքական հայ և 300 համակրող, իսկ ողջ գավառում բողոքականների թիվը կազմում էր 1200: Քաղաքի ամերիկյան քոլեջում սովորում էին 210 աշակերտ, որից 15-ը ՝ գիշերօթիկ: Ուսուցիչները չորսն էին՝ առանց միսիոներների: Քոլեջը 3 աստիճանի կրթություն էր տալիս ՝ բարձրագույն , միջին և տարրական[218]:

Բիթլիսում էր գործում նաև բողոքականների բարեգործական-կրթական հաստատություններից մեկը՝ «Բիթլիսի կարոտ տղոց վարժարանը», որի կայացման գործում մեծ դեր ուներ Վեր. Քոլը :Այդ վարժարանի հաստատության գործին ձեռնամուխ լինելուց առաջ նա աշակերտական ժողով էր կազմել՝ աշակերտներին իրենց կարողությունների համաձայն մասնագիտական հմտություններ մշակելու համար[219]:

1904թ. այստեղ կոշկակարությամբ էր զբաղված 6 պատանի: Դերձակությունը ևս ուսուցանվում էր՝ ունենալով 6 աշակերտ: Նախապատրաստություններ էին արվում նաև հյուսնություն արհեստի ուսուցման համար[220]:

«Մաունթ Հոլյոք» Բիթլիսի աղջիկների ամերիկյան դպրոցը նույնպես համբավ ուներ:[221]Այս դպրոցն իր անունը ստացել է Ամերիկայի Մասաչուսեթս նահանգի Սաութ –Հատլի քաղաքի քոլեջից, ուր կրթվել են զույգ քույրեր Իլենները՝ Բիթլիսի այդ դպրոցի հիմնադիր վարժուհիները:1868-1896 դպրոցն ունեցել է 9 կարգ շրջանավարտներ, 2-3 տարին մեկ անգամ շրջանավարտներ ունենալով: Շրջանավարտներից 10-ն էին միայն մնացել Բիթլիսի մեջ՝ գործելով իբրև ուսուցիչ կամ օգնական – ամուսին ուսուցչի կամ

---

[217] Ա-Դօ,Վանի,Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 85-86:
[218] Լինչ Հ.Ֆ.Բ., նշվ. աշխ., էջ 175:
[219] «Ավետաբեր», 1904, թիվ 23, էջ 410:
[220] Նույն տեղում:
[221] Bliss E. M., Turkey and Armenian Atrocities, Fresno, 1982, p. 208.

քարոզչի: Այդ վարժուհիների հետ աշխատում էր նաև միստր Նաբի դուստր միս Գրեյս Նաբը, որը սովորեցնում էր նաև տնտեսական և ձեռագործական աշխատանքներ:

Սովորեցնում էին նաև երաժշտություն և նկարչություն[222]:

Մեծ ուշադրություն էր դարձվում հայերենի իմացությանը .փոխտեսուչ Խաչիկ Վարդանյանը հայերենի /գրաբար/ ուսուցիչն էր: Հաստատությունն ուներ 4 ճյուղ. Մաունթ –Հոլյոք թոշակավոր սանուհիների գիշերօթիկ վարժարան՝ 34 աշակերտներով, հին որբանոց՝ 40 աշակերտներով, գերմանական որբանոց՝ 37 աշակերտուհիներով, Ծաղկոց ՝ 30 ցերեկօթիկ աշակերտով: Բաղեշի ամերիկյան քոլեջի հիմնադիրը և երկար տարիներ նաև տնօրենն է եղել Նեփը:

Ս. Ծոցիկյանը գրում է, որ նա հայերի հանդեպ մեծ սեր է ունեցել և 1896թ. կոտորածի ժամանակ իր անձը վտանգի ենթարկելով՝ փրկել է շատ հայերի կյանք: Նրա որդի Ջորջը հայոց դատի պաշտպաններից էր, որ պատճառ դարձավ իր՝ երիտասարդ հասակում զոհվելուն[223]:

Եվ պատահական չէ, որ Տարոնի և Բաղեշի հայությունը երգեր է ձոնել Նեփին և նրա որդուն: Այդ մասին «Պատմություն Տարոնի աշխարհի» աշխատության մեջ կարդում ենք. «Պիթլիսի եւ Մշոյ մէջ Ճորճ Նեփի անուան երգեր յօրինած էին 1895-1896-ին եւ կերգէին .

Ամերիկացի Ճորճին տարէք բարեւներ,

Մենք չենք մոռնար նրա բարիքներ.

Աստուած պարգեւէ իրեն երկար տարիներ…[224]

Հարկ է նշել, որ Արևմտյան Հայաստանի քաղաքներում ու գավառներում հիմնած միսիոներական-բողոքական նույնատիպ ուսումնական հաստատությունների ծրագրերն հիմնականում նույնն էին: Քոլեջում անցնում էին հետևյալ առարկաները. կրոնագիտություն, հայերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն, թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, տոմարակալություն, բնագիտություն, հայոց պատմություն, Օսմանյան պետության պատմություն, փիլիսոփայություն, գծագրություն, ֆիզկուլտուրա, երաժշտություն և արհեստ:

---

[222] Ա-դո, նշվ.աշխ., էջ 203:
[223] Ծոցիկեան Ս.Մ., Արևմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 194, էջ 130:
[224] Սասունի Կ.,Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1956, էջ 318:

Միսիոներների վարժարանները ժամանակի լավագույն կրթա-լուսավորական օջախներն էին, որոնք ունեին հարմարավետ շենքեր, հարուստ նյութական բազա, բանիմաց, բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներ: Հատուկ ուշադրություն էր դարձվում աշակերտների մտածողության զարգացմանը, տալիս էին հարուստ գիտելիքներ: Ինչպես գրում է Լինչը՝ «միսիոնարները իմաստութիւնը ունեցած են իրենց ջանքերը նուիրելու աւելի կրթական գործին, քան թէ բողոքականութեան տարածման»[225]:

1902թ. հունիսի 25-ին Մարաշում գումարված ավետարանական ժողովում քննարկվեց ուսումնական ու բարեգործական հաստատությունների ներկա ու ապագա վիճակը: Հիմնականում ուշադրության կենտրոնում էին ուսումնական գործընթացները և քարոզչական ու բարեգործական աշխատանքները[226]:

Ուսումնասիրություններից երևում է, որ շատ միսիոներ- ուսուցիչներ իրենց սաներին դաստիարակում էին ժողովրդի, նրա ավանդույթների նկատմամբ սիրո և նվիրվածության ոգով: Լինչը այդ մասին գրում է.«Մահմետականներու մէջ գործելու արգիլուած ըլլալով անոնք հայերուն ընծայեցին թանկագին առաւելութիւններ, գաւառական մայրաքաղաքին մէջ/Բաղեշում-Ս.Գ./ գոլէճ մը բանալով, իսկ գաւառին սահմաններուն մէջ ալ տասնեւհինգի չափ դպրոցներ հաստատելով, աշակերտները կէս առ կէս Լուսաւորչական հայ եղած են եւ այդպէս ալ կը մնան»[227]:

Այս և մյուս համանման դեպքերում բողոքականները հարգում էին իրենց աշակերտների ազգային դավանանքը՝հեռու մնալով դավանական մոլեռանդությունից:

Ըստ Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչության ուսումնական խորհրդի կազմած վիճակացույցի՝1901թ. Բաղեշ քաղաքի և գավառի գյուղերում գործում էին ազգային ու միսիոներական վարժարաններ և ծաղկոցներ: Բաղեշում համիդյան կոտորածներից հետո /1894-1896/ էլ ավելի վատացավ կրթա-լուսավորական ու մշակութային օջախների վիճակը: Փակվեց Միացյալ ընկերությանց բարձրագույն նախակրթարանը, բանտեր նետվեցին առաջավոր ուսուցիչներն ու աշակերտները:[228]

---

[225] Լինչ Հ., նշվ. աշխ, էջ 175:
[226] «Ավետաբեր», 1902, թիվ 33, էջ 309-310:
[227] Լինչ Հ., նշվ.աշխ., էջ 175:
[228] Խառատյան Ա.,Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում 1857-1908թթ., Երևան, 1989, էջ 180:

Այդ ժամանակ քաղաքում գործում էին միսիոներական վարժարաններ և ծաղկոցներ: Քաղաքի ամերիկյան որբանոցում սովորում էր 163 որբ երեխա, քաղաքի և գավառի գյուղերի բողոքական ամերիկյան ցերեկային և գիշերօթիկ վարժարաններում սովորում էր 15 աշակերտ:[229]Բարվոք վիճակում չէին նաեւ գավառի գյուղերի դպրոցները:

Ի մի բերելով ազգային վարժարանների և աշակերտների քանակը՝ստացվում է , որ 1901թ. Բաղեշ քաղաքի և գավառի գյուղերում գործում էր 21 վարժարան –ծաղկոց, ուր սովորում էին 821 աշակերտ և ծաղկոցի մանուկ,աշխատում էր 31 ուսուցիչ,առանց ծաղկոցի ուսուցիչների: Քաղաքի և գավառի միսիոներական որբանոցներում, ցերեկային և գիշերօթիկ վարժարաններում սովորում էր 391 աշակերտ: Բաղեշահայության, առանձնապես նաև նրա ունևոր խավի ուշադրությունից դուրս էին մնացել և անմխիթար վիճակի էին հասել քաղաքի ազգային կրթա-լուսավորական ու մշակութային օջախները: Դեռ հնուց օտարամուտ միսիոներները մուտք էին գործել Մուշ և դաշտի Առինչ, Մոկունք, Նորշեն, Հողունք գյուղերը և հիմնել իրենց համայնքներն ու կուլտուր –լուսավորական օջախները[230]:

Ժամանակակիցների վկայությամբ միսիոներները Մուշում հաստատվել էին առանց դիմադրության, խաղաղ ձևով, որովետև չէին հետապնդում կրոնական ու քաղաքական նպատակներ,այլ մարդասիրական վերաբերմունք են ցուցաբերել թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդին[231]: Նրանց հիմնած դպրոցներն ու կուլտուր-լուսավորական օջախները նպաստել են տարոնահայության ազգային զարթոնքին ու միավորված հայ առաքելական եկեղեցու հետ պայքարել են համիդյան վայրագ կարգերի դեմ, որով էլ նրանք ևս դարձան այդ վարչակարգի զոհերը:

«Արեւելք» օրաթերթում հրապարակված հոդվածաշարում Գ. Տեր-Կարապետյանը մանրամասն նկարագրում է 1899թ. Մուշ քաղաքի, Մշո դաշտի վանքերի ու դպրոցների վիճակը: Ըստ նրա թաղի ազգային 5 վարժարաններում, որոնք ունեին 14 դասարան-սերտարան, սովորում էին 180 աշակերտներ,ծաղկոցի 312 մանուկներ, դասավանդում

---

[229] Վիճակագոյց Գաւառական Ազգային վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ, էջ 4:
[230] Սասունի Կ.,Պատմությիւն Տարօնի աշխարհի, էջ 307:
[231] Hamlin C., My Life and Times, 2nd ed., Boston, 1893, p. 49.

էին 10 ուսուցիչներ: Քաղաքի լավագույն կրթական վարժարաններից էր Հայ բողոքական վարժարանը, ուր սովորում էին 30 աշակերտուհի[232] :

XIXդ. կեսից ստեղծված մշակութային ընկերությունների (Սենեքերիմյան, Անձնվեր, Լուսաբեր և այլն) ջանքերով նկատելիորեն աշխուժացել էր նաև Սեբաստիայի հայերի ազգային, կրթական և հասարակական-քաղաքական կյանքը:Աստիճանաբար քայլեր են ձեռնարկվել կրթության ոլորտը զարգացնելու ուղղությամբ[233]: Հարկ է նշել , որ 19-րդ դարի վերջին քառորդում Սեբաստիայի կրթական կյանքում սկսում են դերակատարում ունենալ նաև ամերիկյան բողոքականների հիմնած կրթական հաստատությունները: Գործում էր փոքրիկ դպրոց ՝ 20 աշակերտներով : 1880թ. դպրոցն ուներ տղաների եւ աղջիկների երկու բաժանմունքներ, տղաների թիվը 140 էր, իսկ աղջիկներինը ՝ 70: Նրանց դասավանդում էին հայերեն, անգլերեն, կրոնի պատմություն, աշխարհագրություն, իսկ աղջիկներին՝ ձեռագործություն, կար ու ձև և այլն: 1888թ. վարժարանն արդեն ուներ 200 աշակերտ[234] :

Սեբաստիայի կայանին էին պատկանում Տիվրիկը,Կյուրինը և Եվդոկիան /Թոքաթ/: Առաջին միսիոները, որը Թոքաթում երկար մնաց ՝ Ջոնսն էր, նա Թոքաթ էր եկել 1845թ.: 1854թ. նոյեմբերին ամերիկացի միսիոներ Վան Լենեփի ջանքերով հիմնվեց Աստվածաբանական վարժարան, որը գոյատևեց ընդամենը 5 տարի[235]:

Ամերիկյան բողոքական միսիոներների մուտքը Ուրֆա կապված էր կրթական շարժման հետ: Ուրֆայի ավետարանական եկեղեցին ուներ 3 դպրոց, որոնցում սովորողների ընդհանուր թիվը հասնում էր 94-ի: 1880թ. միսիոներները կառուցեցին եկեղեցու և դպրոցի նոր շենքեր: Ինչպես արդեն նշվեց, բողոքականներն իրենց կրոնական գործունեությունը զուգակցում էին կրթական ձեռնարկների՝ մասնավորապես դպրոցաշինության հետ, ինչը անկախ իր հեռահար նպատակներից, չէր կարող դրական ազդեցություն չունենալ Սեբաստիայի հայության համար: Դեռևս 1878 թ.ապրիլի 2-ին հիմնվեց Մարդասիրական ընկերությունը, որն ըստ էության մասնավոր ընտելարան էր՝ 50 աշակերտներով և մեկ ուսուցչով; Ընտելարանի ամսական ծախսը կազմում էր 2 օսմ.ոսկի:

---

[232] «Արեւելք», 1899, թիվ 3904, էջ 1-5:
[233] ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ.116, թ. 1:
[234] ՀԱԱ, ֆ. 193, ց.1, գ. 352, թ.1
[235] Anderson R., History of the Missions of ABCFM to the Oriental Churches, vol. 2, Boston, 1872, p. 423.

Հայտնի է, որ Մարդասիրական Ընկերությունը հիմնել են քաղաքի ճգնավոր բողոքականները, որոնք իրենց աշակերտներին գիտելիքներ հաղորդելուց զատ, նաև բողոքականություն էին քարոզում: Ընկերության և դպրոցի հիմնադիրներ են համարվում Ստեփան Անանիկյանը, Մանուկ Նորհատյանը և Յ.Չատրճյանը[236]:

Հայտնի է, որ բողոքականները Սեբաստիայում հիմնել էին նաև աղջիկների վարժարան, ուր կարճ ժամանակ անց սկսեցին հաճախել բազմաթիվ աղջիկներ:[237] Դրան հակադրվելով, Սեբաստիայի ուսումնական խորհուրդը որոշեց հիմնել Հռիփսիմյան վարժարանը, որը սկսեց գործել Մայր վարժարանի հարևանությամբ[238] :

Այնուամենայնիվ, միսիոներների ձեռնարկած բարեգործական աշխատանքները տալիս են իրենց պտուղը՝ շատ հայեր իրենց փրկությունը թուրքական հալածանքներից տեսնում էին բողոքական համայնքին պատկանելու մեջ:

Դեռևս 1886թ. Մարզվանում հիմնվեց «Անատոլիա» քոլեջը: Քոլեջի հայտնի դասախոսներից են եղել օրիորդներ Ֆրիչըրը, Սմիթը և Ուինկեյթը: Ուսումական այս հաստատությունում սովորում էին մինչև 550 հայ, հույն, ռուս, բուլղար և մակեդոնացի ուսանողներ; Քոլեջին կից գործում էր աղջիկների գիշերօթիկ վարժարանը: Մարզվանի ամերիկյան միսիոներները նույնպես աշխատել են հնարավորինս կանխել հայկական ջարդերը, բարելավել տեղի հայերի դրությունը և ԱՄՆ կառավարության ուշադրությունը հրավիրել հայերի նկատմամբ իրականացվող բռնաճնշումների վրա [239]:

Նրանց հաղորդած տեղեկությունները կարևոր աղբյուր են այդ ժամանակաշրջանում Մարզվանում և ընդհանրապես Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելու համար[240]:

Դրանք մերկացնում են թուրքական կառավարության այն ստահոդ փաստարկները, թե թուրք ոստիկանները հայկական նախապատրաստվող ապաստամբությունները ճնշելու համար են հայաբնակ վայրերում իրականացնում

---

[236]ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 121, թ. 1:

[237] Սահակեան Ա., Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, 2005,էջ 45:

[238]ՀԱԱ, ֆ. 193, ց. 1, գ. 1117, թ.1:

[239] Greene F.D., The Armenian Crisis and the Rule of the Turk, London, 1895, p. 150.

[240] Kloian R.D., The Armenian Genocide Fist 20th century holocaust: 65th anniversary memorial 1915-1980, Fresno, Calif.,1980.,Hamlin C., My Life and Times, 2nd ed., Boston, Pub., 1893, Greene F.D., Armenian Massacres and Turkish Tyranny, Chicago, 1896, Morgenthau H., Ambassador Morgenthaus Story, New York, 1918.

ձերբակալություններ, մինչդեռ դրանք որպես կանոն ուղեկցվում էին ջարդերով, բռնությամբ և թալանով:

Մարզվանի քոլեջի ամերիկյան միսիոներներից մեկը պատմում է, թուրքական «հարցաքննությունների» մասին, վկայելով, որ թուրք ոստիկանները հարցաքննվող հային նախ պատմում էին, թե ինչ են ուզում նրանից լսել և ապա այնքան էին ծեծում, մինչև նրանից ստանում էին ցանկալի խոստովանությունը: Այդ «խոստովանությունը» կարող էր հիմնավորում դառնալ մի ամբողջ գյուղում ձերբակալություններ և ջարդեր իրականացնելու համար:

1893 թ. փետրվարի 26-ին դեսպան Ֆորդը հաղորդում էր ,որ Սեբաստիայի վալին թռուցիկների տպագրման մեջ էր մեղադրել Մարզվանի ամերիկյան քոլեջի տնօրինությանը, ձերբակալել հայազգի ուսուցիչներ Թումայանին ու Գայայանին և բանտարկել ընդհանուր առմամբ շուրջ 2 հազ. հայերի: Մի քանի օր անց հրդեհվել էր քոլեջի օրիորդաց վարժարանի մասնաշենքը:

Հյուպատոս Լոնգուորթի տեղեկության համաձայն, հրձիգը եղել էր Սեբաստիայի վիլայեթի ժանդարմերիայի փոխհրամանատարը[241]:

1893թ. Կոնգրեսին ներկայացված հերթական ուղերձում ԱՄՆ նախագահ Ստիվեն Քլիվլենդն անդրադարձավ թուրք-ամերիկյան հարաբերություններին `Մարզվանի քոլեջի հրկիզման կապակցությամբ: Նա մեղադրեց սուլթանական կառավարությանը ` ջարդերի մեղսակցության և արտասովոր անտարբերության մեջ, պահանջելով պատժել հանցավորներին և փոխհատուցել քոլեջին հասցված վնասը[242]:Նախագահը տեղյակ պահեց նաև կոնգրեսին այն մասին, որ հանձնարարել է Թուրքիայում իր դեսպանին `պահանջել Բարձր Դռնից այսուհետ հարգանքով վերաբերվել հայազգի ԱՄՆ քաղաքացիներին: Բարձր Դուռը խոստացավ նաև պատասխանատվության ենթարկել մեղավորներին[243]:

Մարզվանի քոլեջի մասնաշենքի հրկիզման և ուսուցիչների ձերբակալության հարցում բրիտանական դեսպանությունը համագործակցում էր և խորհրդակցում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչության հետ:ԱՄՆ քաղաքական շրջանակները մեծ

---

[241] Կիրակոսյան Ա.,նշվ.աշխ., էջ 231:
[242] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Երևան,1980, էջ 210:
[243] Նշվ. աշխ, էջ 235:

նշանակություն էին տալիս Հայկական հարցին, օգտագործելով այն որպես սուլթանի վրա ճնշում գործադրելու, ինչպես նաև կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ ամերիկյան ազդեցության հաստատման միջոց[244]:

Ամերիկյան բողոքական միսիոներները, կրթական գործունեություն ծավալելով արևմտահայության շրջանում, կարճ ժամանակամիջոցում համոզվեցին, որ չնայած կրթական ցածր մակարդակին՝ հայ աշակերտներն ընդունակ են և կարող են արագորեն յուրացնել դասավանդվող նյութը: Միսիոներուհի Ֆլորենսը, երկար տարիներ աշխատելով Կ.Պոլսում աղջիկների համար բացված քոլեջում, շատ լավ է արտահայտվում հայ աղջիկների մասին՝ նշելով,որ հայ աղջիկները ոչ միայն շատ հավատարիմ ու վտահելի են, այլև՝ կարող են մտավորական լինել [245]:

Ինչ վերաբերում է ամերիկյան միսիոներների ծավալած կրթական աշխատանքներին՝ 1900թ. տվյալներով, օսմանյան կայսրությունում աշխատում էր 162 ամերիկյան միսիոներ՝ 900 տեղացի օգնականների աջակցությամբ: Ավելի քան 40 գիշերօթիկ դպրոցներում և 7 քոլեջներում ուսանում էին 2 հազար 700 տղա և աղջիկ, 15 հազ. երեխա՝բազմաթիվ նախակրթարաններում[246]:

Ինչպես արդեն նշվեց ամերիկյան միսիոներները, հաստատվելով Արևմտյան Հայաստանում, լայն գործունեություն ծավալեցին ոչ միայն կրթա-լուսավորական, այլև՝ բարեգործական ոլորտներում. մանավանդ, որ համիդյան ջարդերը ամերիկյան միսիոներների գործունեության համար լայն ասպարեզ բացեցին՝ ամենուրեք անօթևան որբեր էին, անպաշտպան ու սարսափահար բնակչություն:

Բավական է նշել, որ կոտորածներից հետո տարբեր բնակավայրերում միսիոներների որբանոցներում ապաստանեցին շուրջ 1000 երեխաներ[247]:

Սակայն համիդյան կոտորածի օրերին վտանգավոր վիճակում էին հայտնվել նաև իրենք՝ ամերիկացի միսիոներները: Օրինակ, Խարբերդում տուժեցին նրանցից մի քանիսի տները, որոնք հրդեհվեցին, իսկ միսիոներներն ապաստանեցին Եփրատ քոլեջի շենքում: Է.Լաթիմերը գրում է, որ պլանավորված էր այրել միսիոներների տները և

---

[244] Долян М., Деятельность американских миссионеров в Османской империи б области просвещения. - Тезисы докладов участников XI Республиканской научной сессии молодых Еостоковедов. Ереван, 1985, с.8-16.
[245] ՀԱԱ, ֆ. 1291, գ. 1118, թ. 5:
[246]Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ108:
[247] Strong W.,The Story of the American Board, p. 397.

նրանց ընդհանրապես հեռացնել, թեև նախապես պաշտոնյաները խոստացել էին ապահովել միսիոներների ու նրանց շինությունների անվտանգությունը[248]:1895թ. ջարդից մեծապես տուժեց Եփրատ քոլեջը, որի վրա թնդանոթն արկ արձակեց: Շենքերի մեծ մասը հրդեհվեց[249]:

Ամփոփելով համիդյան կոտորածների հետևանքները Խարբերդի նահանգում՝ նշենք, որ 1895-1896թթ. ընթացքում Խարբերդի նահանգում զանգվածային կոտորածների զոհ դարձավ 40000 հայ :

Կոտորածների տարիներին նահանգի տարածքներում բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15000 հայ, որոնց մեծ մասը հետագա տարիներին վերադարձավ քրիստոնեության: Կոտորածներից հետո ուժեղացավ նաև արտագաղթը:

Միսիոներների կատարած աշխատանքը դրական արձագանքներ գտավ բնակչության շրջանում. սա նաև նշանակում էր վստահություն, համակրանք այն երկրի նկատմամբ, որը ներկայացնում էին նրանք: Կրթական-մշակութային զարթոնքը, որ նկատվեց արևմտահայության շրջանում, նպաստեց արևմտահայության և հատկապես երիտասարդության արտագաղթին: Ակնհայտ է, որ արտագաղթողների մեծ մասը հենց քոլեջների, դպրոցների շրջանավարտներ էին, որոնք ԱՄՆ-ում փնտրում էին ազատության, իրավահավասարության, պաշտպանվածության այն մթնոլորտը, ինչի մասին լսել էին իրենց ուսուցիչներից և ինչը բացակայում էր իրենց հայրենիքում[250]: Հատկանշական է, որ գաղթում էին նախ և առաջ բողոքական եկեղեցու հետևորդ դարձած արևմտահայերը[251]: «Խարբերդի բողոքական եկեղեցին 1896թ. ուներ 3107 հետևորդ, հաջորդ տարի՝ 2413. մնացյալը գաղթել էին Ամերիկա»,- նշում է լավատեղյակ հեղինակը[252]:

Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերից ԱՄՆ մեկնած հայրենակիցների ջանքերով 19-րդ դարի 90-ական թվականներին ԱՄՆ քաղաքներում հիմնվեցին միություններ՝ Հուսեյնիկի, Քեսիրիկի, Մորենիկի, Հողեի Լուսավորչական ու

---

[248] Latimer E., The Last Years of the Nineteenth Century, second edition, p. 172.
[249] Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 118:
[250] Պարթըն Ճ.Լ., Ինչ ըրած են Ամերիկացիք հայոց համար, <<Անահիտ>>, Հանդէս ամսեայ ազգային, գրական, գեղարուեստական, Փարիզ, Է տարի, 1905, փետրվար, թիւ 2, էջ 123:
[251] DadrianV., The Armenian Genocide: an interpretation / America and the Armenian Genocide of 1915 /, edited by Jay Winter,P. 70—77.
[252] Malcom V., նշվ. աշխ., էջ 77:

Բողոքական, Դատեմի, Բարջանճի, Բազմաշենի, Հազարիի, Եղեգիի, Արաբկիրի, Մուռիի Ուսումնասիրաց ընկերությունները[253] և այլն:

Այսպես, 1894-1896թթ և հետագա տարիներին շեշտակիորեն աճեց Օսմանյան Թուրքիայից ԱՄՆ մեկնողների թվաքանակը, ընդ որում ջարդերից հետո հայրենիք մեկնողների մեջ արդեն քիչ չէին ընտանիքներով մեկնողները: ԱՄՆ գաղթած հայերն ամեն կերպ աջակցում էին ամերիկյան առաքելության աշխատանքներին, նրանցից մեկը՝ Ա. Սահակյանը, 15000 դոլարի նվիրատվություն կատարեց կրթական համակարգը զարգացնելու, մեկ ուրիշը գումար հատկացրեց Դիարբեքիրում հիվանդանոց կառուցելու համար, ուրիշները նվիրատվություններ արեցին՝վճարելու Խարբերդի Եփրատ քոլեջի պրոֆեսորի աշխատավարձը, գումար հատկացրին Եփրատ քոլեջի մարզադահլիճին [254]:

Հատկանշական է, որ արտագաղթողների մեծ մասը Խարբերդ նահանգից էր, ուր գործում էր ամենամեծ բողոքական համայնքներից մեկը՝ համապատասխան կրթական ու բարեգործական հիմնարկներով: Խարբերդահայերի մի ստվար հատված զանգված 19-րդ դարի 80-ական թվականներից հաստատվում է ԱՄՆ-ի Ուորչեստր քաղաքում: Ուորչեստրը երբեմն նույնիսկ անվանում էին «Փոքրիկ Խարբերդ»[255]:

1908-1910 թթ. դրությամբ Ֆրեզնոյում հաստատված շուրջ 2326 հայերի մեջ 21 ընտանիք, 87 անձ ԱՄՆ էր եկել Արաբկիրից ու շրջակա գյուղերից, 132 ընտանիք, 676 անձ՝ Խարբերդից ու նրա հարակից 24 գյուղերից, 3 ընտանիք, 17 անձով՝ Մալաթիայից, 9 ընտանիք, 45 անձով՝ Չարսանջակի 4 գյուղերից[256]: Մասաչուսեթսում ամենավաղ հաստատված հայերի մեծ մասը ևս ծագումով Խարբերդի նահանգից էին:ԱՄՆ արտագաղթի այս ծավալներն աննկատ չէին մնում ԱՄՆ հյուպատոսարանների, տարբեր միսիոներական կազմակերպությունների անդամների աչքից, որոնք ևս արձանագրում էին արտագաղթի բացասական հետեւանքները: Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Նորտոնը զեկույցներից մեկում գրում է, որ Խարբերդից ու հարակից գյուղերից ոչ պակաս, քան 200 ընտանիք կամ շուրջ 1000 մարդ, որ կազմում է ԱՄՆ –ի հայության մեկ տասներորդ մասը, նպատակ ունի Ամերիկա մեկնել: Մեկ ամիս անց նա

---

[253] Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ Տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 176-183:
[254] Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, 1910, p.159.
[255] Նույն տեղում:
[256]Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ Տարեցոյց, Ա տարի, էջ 62:

զեկուցում է, որ Նահանգային խորհուրդը որոշում է ընդունել մերժել այդ տարագիրներին, քանի որ արտագաղթը «լրջորեն վնասում է» նահանգի բնակչությանը[257]:

1899թ. միսիոներուհի Թ. Զիգլերը գրում է. «մենք կրթում ենք երիտասարդներին քոլեջի շրջանառության ընթացքում / խոսքը Եփրատ քոլեջի մասին է- Ս.Գ. /, իսկ նրանք թողնում են մեզ և մեկնում են Ամերիկա, ուր նրանք իրենց ապահով են համարում և կարողանում են դրամ վաստակել»[258]:

Ամերկացի քարոզիչ Ջ. Գրինի վկայությամբ «վերջին պատերազմների ու շատ հայերի՝ Ամերիկա արտագաղթի պատճառով նկատելիորեն նվազել է Եփրատ քոլեջի աշակերտների թիվը՝ 1914 թ. կազմելով 611 հոգի»[259]:

1899-1907թթ. ընթացքում հայերի՝ ԱՄՆ արտագաղթի դադար եղավ, քանի որ թուրքական կառավարությունն արգելեց այն և միայն 1908թ., երբ կառավարությունը ճանապարհորդելու ազատություն տվեց, արտագաղթը վերսկսվեց: 1910թ. արտագաղթողների թիվը հասավ 5508-ի,իսկ 1914 –ին ՝ 7785-ի[260] :

Ընդհանուր առմամբ, 1900-1910 թթ. միայն Խարբերդից Ամերիկա էր գաղթել 23719 մարդ: 1913թ. ԱՄՆ գաղթել են 9355 հայեր, որից ավելի քան 1300-ը կրկին Խարբերդից էին[261]:

Պատահական չէ, որ Եփրատ քոլեջի վարչական ժողովի ընդունած կանոնադրությամբ ուսուցչական մարմնին հրահանգվում էր քոլեջ ընդունել միայն այն դիմորդներին, ովքեր քրիստոնյա առաջնորդ լինելու, այսինքն, քարոզչական աշխատանքի ընդունակություն կցուցաբերեն[262]:

Խոսելով Սասունում կազմակերպված կոտորածների մասին՝ ամերիկյան միսիոներ Նեփը նշում է ,որ չպետք է հուսալ, թե սուլթանը որևէ բան կձեռնարկի հայկական ջարդերի մեղավորներին պատժելու համար, քանի որ ակնհայտ է նրա

---

[257] Merguerian B., Like a Policeman in a Mob., The Establishment of the U.s. Consulate in Kharpert ,Turkey , 1901-1905, p. 302.
[258] Great need Over The Water, The Letters of Theresa Huntington Ziegler, Missionary to Turkey, 1898-1905 , p.138.
[259] Greene Rev. J., Leaving The Levant, p.222.
[260] Mirak R.Torn, Between Two Lands :Armenians in America, p.264.
[261] Ավագյան Ք.,Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Երևան, 2000, էջ 33:
[262] Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 4:

ատելությունն այն ամերիկյան միսիոներական համայնքների նկատմամբ, որոնք փորձում են օգնություն ցույց տալ հայերին: Չնայած կառավարության այդ դիրքորոշմանը՝ Սասունի շատ փախստականներ փրկվել են ամերիկյան միսիոներների ջանքներով; Խոսելով հայերի նկատմամբ իրականացվող ջարդերի հիմքերի մասին՝ Նեփը մեջբերում է ամերիկյան ավագ դպրոցների ուսուցիչներից մեկի վկայությունն՝ ըստ որի, Սասունում կեսօրին շուկայի ճանապարհին սպանվել են մի քանի բողոքական հայեր, որոնցից երկուսը երեխաներ էին: Նրանց մեջ էին նաև միսիոներական համայնքին երկար ժամանակ ծառայած ատաղձագործն ու կոշկակարը:Վերջինս ընդամենը մի քանի օր առաջ էր Նեփի համար կոշիկ կարել:Սպանվել էր նաև կոշկակարի 13- ամյա աշակերտը: Նեփը պատկերավոր համեմատություն է անում՝ ասելով, որ եթե մի օր գայլը, մեղադրելով գառանը ջուրն աղտոտելու մեջ, հոշոտում է նրան,ապա՝ Բիթլիսում գառը <<նույնիսկ չի համարձակվում մոտենալ առվին>>: Նա նաև նշում է ,որ «չպետք է թույլ տալ,որ մի ողջ քրիստոնյա ազգ զոհ գնա սրին»[263]:

Այսպիսով 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին արևմտահայության կրթա-լուսավորական կյանքում որոշակի դեր են խաղացել ամերիկյան միսիոներները: Անկասկած, նրանք իրենց աշխատանքով նպաստում էին լուսավորության, գիտության զարգացմանը, մյուս կողմից՝ պառակտում, թուլացնում հայ ժողովրդի միասնությունն ու ազգային–ազատագրական պայքարի ոգին: Արևմտահայ առաջադեմ մտավորականները չկարողանալով աչք փակել նման վտանգավոր երևույթի նկատմամբ, եռանդուն գործունեություն ծավալեցին ընդդեմ օտարամուտ կրթական շարժման՝ հիմնելով ազգային վարժարաններ: Այդպիսի վարժարաններ էին Վանի Վարժապետանոցը, Կեդրոնականը, Երամյան, Սանդխտյան, Գայանյան, Շուշանյան, Կարինի, Տեր-Ազարյան, Արծնեան, Մսրյան, Հռիփսիմեանց, Աղապալյան, Սանասարյան, Մուշի Թարգմանչաց, Երզնկայի Ընկերական, Քրիստինյան վարժանները և ուրիշներ: Արդյունքում 19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայ ազգային վարժարանները բազմացան և վերելք ապրեցին՝ մրցության ընթացքում հաղթող դուրս գալով օտար վարժարանների նկատմամբ: Ընդհանուր առմամբ ամերիկյան բողոքական միսիոներները հովանավորում էին քրիստոնյա փոքրամասնություններին,

[263] ՀԱԱ, ֆ. 411, ց.1, գործ 226, թ. 35:

համապատասխան աշխատանք տանում նրանց ավետարանական դարձնելու ուղղությամբ, տպագրում և տարածում գրականություն, հիմնում եկեղեցիներ, դպրոցներ և հիվանդանոցներ: Նրանց գործունեության շնորհիվ կայսրության քրիստոնյաների համար Ամերիկան պատկերվում է որպես մի մեծ երկիր, որն ուղարկում էր բարեգործներ, ուսուցիչներ և բժիշկներ [264]:

Այսպիսով, կարելի է ասել, որ ամերիկյան միսիոներների քարոզչությունը Օսմանյան կայսրություն բերեց ամերիկյան քաղաքակրթության հոգևոր և բարոյական որոշակի արժեքներ:Այն հնարավորություն ընձեռեց հայ ժողովրդին իր բողոքի ձայնը հասցնել եվրոպական դիվանագիտության լայն շրջանակներ:Անժխտելի է հատկապես այդ դժվարին ժամանակներում բողոքական միսիոներների լուսավորական աշխատանքների կարևորությունը օսմանահպատակ հայության շրջանում:

[264] Կիրակոսյան Ա.,նշվ. աշխ., էջ 234:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1908-1914թթ.

2.1.ԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1908թ. Թուրքիայում իշխանության գլուխ անցան երիտասարդ թուրքերը: Այդ կուսակցությունը սկզբնավորվել էր դեռևս 1870 թ.: 1877թ. կուսակցությունն անցել էր ընդհատակ, նրա գործիչների մի մասն ստիպված էր եղել հեռանալ արտասահման: Այնտեղ նրանք հրատարակում էին մի քանի լրագրեր, որոնց էջերում քարոզչություն էին մղում Աբդուլ Համիդի վարչակարգը կործանելու և Թուրքիայում սահմանադրական կարգեր հաստատելու նպատակով[265]:

1908թ. Ֆրանսիայում տեղի ունեցավ Թուրքիայի կուսակցությունների առաջին համագումար-ժողովը, որն ընդունեց «Եվրոպայում գումարված Օսմանյան կայսրության դիմադրական կուսակցությունների կոնգրեսի դեկլարացիան» [266]: Այն կոչ էր անում բոլորին՝ առանց ազգային խտրության ոտքի կանգնել Աբդուլ Համիդի ռեժիմի դեմ և գահընկեց անել նրան: «Նրա թագավորությունը ,- ասված է այդ փաստաթղթում ,- որ շարունակվում է 30 տարի, կորստաբեր էր ոչ միայն քրիստոնյա ժողովուրդների համար, այլև՝ ստրկության և ավերմունքի հասած մահմեդականների համար: Թուրքաց կայսրության բոլոր ազգությունները մեկը մյուսից հետևից զոհ են դառնում Աբդուլ Համիդի խստասիրտ խելագարությանը. նա հաջորդաբար գրգռում է մի ազգություն մյուս ազգության դեմ»[267]:

1908թ. հուլիսին երիտթուրքական հեղաշրջման հետևանքով խորտակվեց սուլթան Աբդուլ Համիդի բռնակալական ռեժիմը, և Թուրքիայում հաստատվեցին սահմանադրական կարգեր[268]:

Կայսրության ճնշված ժողովուրդները ցնծության մեջ էին: Երիտթուրքերը խոստանում էին սահմանադրությունից բխող դեմոկրատական իրավունքներ, ինչպես

---

[265] Սիմոնյան Հր. Ռ., նշվ. աշխ., էջ 366:

[266]Петросян Ю.А., Младотурецкое движение, М., 1971, Новичев А. Д. История Турции, Л., 1978., Миллер А.Ф., Революция 1908 г. и Мустафа Кемаль //Народы Азии и Африки, № 3, 1975.

[267] Նույն տեղում:

[268] Алиев Г.З., Турция в период правления младотурок, М., Наука, 1972, с. 48.

նաև՝ եղբայրություն ու համերաշխություն երկրի բոլոր քրիստոնյա ու մահմեդական ազգությունների միջև[269]:

Իրենց այդ մտադրություններն ապացուցելու համար նրանք սկզբնական շրջանում նաև որոշակի քայլեր իրականացրեցին. 1908թ. օգոստոսի 3-ին, ինչպես հաղորդում է Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Շիպլին Լոութերին, Կ.Պոլսի բանտից ազատ են արձակվում 92 քաղբանտարկյալներ, որոնցից 60-ը հայեր էին: Նրանք բոլորը մեղադրված էին հեղափոխական գրականության տարածման, ռուս-թուրքական սահմանը խախտելու և զենքի փոխադրման մեջ: Ըստ հյուպատոսի, քաղաքի հայ բնակչությունը արտակարգ խանդավառությամբ էր ընդունել նոր իշխանությունների այդ քայլը[270]:

Պատրիարք Իզմիրլյանը նույնպես հատուկ նամակով ողջունում է երիտթուրքերի <<Միություն և առաջադիմություն >> կազմակերպությանը և սուլթանին :Պատրիարքն իր պատրաստակամությունն է արտահայտում օսմանյան միասնության և բարգավաճման ՝ բոլոր օսմանցիներին շնորհավորելով <<արևածագի>> առիթով, որ բերեց ազատությունը[271]:

1908թ. օգոստոսի 4-ին Լոութերը հաղորդում էր Կ.Պոլսի Շիշլի գերեզմանոցում կատարված արտասովոր մի երևույթի մասին. հայերի և թուրքերի մի մեծ բազմություն՝ կրոնական դասերի ներկայացուցիչների մասնակցությամբ, նշում էր 1895-1896թթ. հայկական կոտորածների զոհերի հիշատակը[272]:

1908թ. օգոստոսի 12-ին հյուպատոս Սթիվենսը հաղորդում էր Բաթումից, որ Թուրքիայի հյուպատոսարանը հայտարարել է սուլթանի կողմից Անդրկովկաս գաղթած փախստականներին, հիմնականում հայերին, ներում շնորհելու մասին և կոչ է անում վերադառնալ հայրենիք[273] :

---

[269] http://www.missionfinder.org/native-american-missionaries/.
[270] Կիրակոսյան Ա., նշվ.աշխ., էջ 433:
[271] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ. 14, վավ. N 155:
[272] Նույն տեղում:
[273] Նույն տեղում:

Մուշում և Բիթլիսում հայ բնակչության խանդավառության, ինչպես նաև մահմեդականների և քրիստոնյաների եղբայրացման փաստերի մասին տեղեկացնում էր նաև (1 սեպտեմբերի) Մեծ Բրիտանիայի փոխիոյպատոս Սաֆրաստյանը[274]:

Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջումը դարձավ ելակետային իրադարձություն: Նրանց կողմից ընդունված օրենքները սկզբնական շրջանում հնարավորություն ընձեռեցին նաև օտարերկրյա միսիոներներին կայսրության քրիստոնյա բնակչության և մասնավորապես, արևմտահայության շրջանում ձեռնարկել լայնածավալ կրոնական, լուսավորական և տնտեսական միջոցառումներ:

Այս ընթացքում էլ Օսմանյան կայսրությունում, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում լայն թափ ստացավ ամերիկյան բողոքական միսիոներների կողմից քարոզվող բողոքական գաղափարախոսությունը, որի օգնությամբ ԱՄՆ կառավարությունն աշխատում էր իր տնտեսական, առևտրական շահերն իրականացնել Թուրքիայի տարածքում: Հարկ է նշել, որ այս ժամանակաշրջանում ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն ընդգրկեց արևմտահայության կյանքի հիմնական ոլորտները՝ սկսած գաղափարախոսականից մինչև լուսավորական, քաղաքական և առողջապահական բնագավառները: Ընդ որում, ամերիկյան բողոքական միսիոներական գործունեության ամենաարդյունավետ և գործուն ոլորտը նրանց լուսավորության համակարգն էր: Քրիստոնյաների ակտիվ մասնակցության շնորհիվ այն զարգանում ու ծավալվում էր: Նրանց համակարգը ընդգրկեց կրթական բոլոր աստիճանները՝ մանկապարտեզներ, նախակրթարաններ, քոլեջներ ու համալսարաններ [275]:

Օգտվելով կայսրությունում իրենց ընձեռված հնարավորություններից՝ ամերիկյան միսիոներների կրթական հաստատությունները չէին գործում Թուրքիայի կրթական համակարգին բնորոշ սկզբունքներով: Իրենց համակարգում ոչ թուրք բնակչությանն ընդգրկելու նպատակով ամերիկյան միսիոներները տարբեր ազգությունների տեր մարդկանց ծանոթացնում էին իրենց լեզվին /անգլերեն/ և գաղափարախոսությանը: Հետաքրքրական է, որ ամերիկյան կրթական համակարգում տեղ էր հատկացվում նույնիսկ ֆրանսերենի ուսուցմանը՝ ֆրանսիական դպրոցների հետ հաջողությամբ

---

[274] Նույն տեղում:
[275] Dwight H.O.The Centennial History of the Armenian Bible Society, New York, 1919,p 120.

մրցակցելու համար: Հարկ է նշել, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը ամերիկյան միսիոներական դպրոցները կայսրությունում ավելի շատ էին, քան արտասահմանյան այլ կրթական հիմնարկները:

Իշխանության գալուց հետո երիտթուրքական կուսակցության քաղաքական ծրագիրը կտրուկ փոփոխության ենթարկվեց[276]:

Գալով իշխանության, երիտթուրքերը սկսեցին վարել իրենց տված խոստումներից արմատապես տարբերվող քաղաքականություն: Կայսրության ամբողջականությունն ու անբաժանելիությունը ամրապնդելու և այն արևմտյան տերությունների ու Ռուսաստանի միջամտությունից զերծ պահելու համար երիտթուրքերը անասելի ճնշումներ գործադրեցին հպատակ ազգերի և առաջին հերթին հայերի ու հույների վրա: Խոստացված հավասարության և եղբայրության փոխարեն նվաճված ժողովուրդներին սպասվում էին նորանոր բռնաճնշումներ: «Կարճ ժամանակ անց նորից յաթաղանն իր հունձն սկսեց,և այս բոլորը կատարվեց քաղաքակրիթ Եվրոպայի, մեծ տերությունների ներկայացուցիչների աչքերի առջև»[277]:

Երիտթուրքական կառավարությունը կարողացավ հաջողությամբ օգտագործել թուրք հասարակ ժողովրդի ատելությունը հայ առևտրականների նկատմամբ իրենց նպատակների իրականացման համար[278]:

Երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելը `1908 թ., փաստորեն, չթեթևացրեց, այլ էլ ավելի վատթարացրեց հայերի վիճակը Թուրքիայում: Աստիճանաբար լարվող միջազգային քաղաքական իրադրությունը բացառում էր մեծ տերությունների միջամտությունը, և, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, երիտթուրքերի այդ հաշվարկները ճիշտ դուրս եկան[279]:

1908թ. հոկտեմբերի 17-ի հաղորդագրությունում Ստամբուլում ռուսական ռազմական գործակալ գնդապետ Խոլսմենը գրում էր. «Մահմեդականների և քրիստոնյաների եղբայրացումը փոխարինվեց ավելի մեծ անվստահությամբ, քան գոյություն ուներ նախկինում: Մի խոսքով, հուլիսյան հեղափոխությունից անմիջապես

---

[276] Սիմոնյան Հր. Ռ., նշվ. աշխ., էջ 367:
[277] Բայբուրդյան Վ.Ա., Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ., էջ 142:
[278] Ստեփանյան Ս.Ս., Էրնստ Վերների նոր աշխատությունը 1915-1916թթ. հայկական սարսափների մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, 1974, համար 1, էջ 140:
[279] Ռիֆաթ Մեվլան Զադե, Օսմանյան հեղափոխության մութ էջերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 113:

հետո համընդհանուր ցնծությունն ու լավատեսական տրամադրությունը փոխարինվեց ճնշված ,ծայրահեղ նյարդային տրամադրությամբ»[280]:

Այս քաղաքականությունն իր անդրադարձն ունեցավ նաև կրթական կյանքում: Խիստ հսկողության տակ առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները: Այդ պահից սովորական երևույթ դարձավ աքսորը: Կուսակալների կողմից քննության առնվեցին հայ պաշտոնյաները և հայկական հրատարակությունները: Վերջին տարիների ընթացքում փակվեցին այն հայկական դպրոցները, որոնք բացվել էին ոչ թե հրովարտակով, այլ միայն կառավարության թույլտվությամբ: Դա է փաստում նաեւ թուրք գործիչ Օսման Նուրին՝ գրելով,-« Հրահանգ տրվեց մամուլի գրաքննական վարչությանը՝արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմությանը և աշխարհագրությանը վերաբերող անունների հիշատակումը»[281]:

Փակվում էին հայկական թերթերը, դպրոցներն ու կուլտուրական օջախները, արգելվում էր փոստային նամակագրությունը, գաղտնի վերահսկողության տակ էին վերցվում ազգային գործիչները[282]:

Ինչպես նշում է Գ. Լազյանը երիտթուրքական կառավարության վերաբերյալ՝ «Անիկա սարսափ կը զգայ կրթութենէ և կուլտուրայէ, որ ինքնագիտակցութիւնն ու ազատ մտածողութիւնը կը կազմեն, ուստի, կրցածին չափ կաշկանդեց հանրային կրթութիւնը և գիտութեան ծարաւ ժողովուրդներէն խլեց ինքնակրթութեան միջոցները: Փակեց վարժարանները, բանտարկեց ուսուցիչները, աքսորեց ուսանողները, իսկ կրթական այն շէնքերուն մէջ, որ դեռ չեն ոչնչացուցած՝ նուազեցուց ուսուցումը, աննախընթաց ծայրայեղ գրաքննութեան մը միջոցով»[283]:

Նման իրավիճակում միսիոներների հիմնած դպրոցները, որոնց նկատմամբ օսմանյան կառավարությունն ավելի հանդուրժողական վերաբերմունք ուներ, աստիճանաբար սկսեցին մեծ տեղ զբաղեցնել արեւմտահայության կրթական կյանքում: Դա խիստ անհանգստացնում էր հայոց պատրիարքարանին, որը միսիոներների կրթական ձեռնարկումները որակում էր որպես ոտնձգություն առաքելական եկեղեցու

---

[280] Վ.Ա. Բայբուրդյան, նշվ. աշխ., էջ 143:
[281] Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 7:
[282] Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, էջ 5:
[283] Լազյան Գ., Հայաստան և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրէ, 1942, էջ 65:

դեմ: Պահպանվել են բազմաթիվ վավերագրեր, որոնք փաստում են միսիոներների կրթական ձեռնարկների նկատմամբ արևմտահայ հոգևորականության ունեցած բացասական վերաբերմունքի մասին: Բերենք Հայաստանի Ազգային արխիվում պահպանված այդպիսի մի նամակի օրինակ.

«Վեհափառ եւ Սրբազան կաթողիկոսին մերոյ եւ
պատուական Հայրապետին Ամենայն Հայոց
Ա.Ա. Գէորգայ խնդիր խոնարհական

Կատարեալ խառնարան մէ եւրոպական եւ Ամերիկեան միսիոնարաց մարդորսութիւն: Մասնաւորապէս կեդրոնին Մ.Ազիզի մէջ/Խարբերդի վիլայեթ-Ս.Գ./ Գերմանք եւ ֆրանսացիք իրենց մարդորսական ուռկանը ձգած են իրենց հիմնարկած գօլէճներու շնորհիւ Խարբերդ քաղաքը գրաւած են Ամերիկացիք իրենց գօլէճով, որով երեք տարբեր գօլէճներ կան օտարներու,Պետական սուլթանիէն, եւ վարժապետանոցը եւ թուրք վարժարանները, որոնք զանազան միջոցներով կը գերեն հայ ուսանողութիւնը: Գերմանք եւ Ամերիկացիք այս տարի բացին երկու դպրոցներ, ուր յաճախող աշակիրտներէն ոչ միայն դրամ չէին պահանջեր, այլև՝ մէկ օսման. ոսկի ամսական կը վճարեն: Մեր հաստատութիւնները դժբախտաբար մխիթարական ոչինչ չունին: Օտարներու ճիգը եւ մարդորսութեան մարմաջը արդէն ստեղծած է տեղիս հայ խաւերուն մէջ անդիմադրելի հակում դեպի օտարութիւն, որը աւելի ուժեղ կդառնայ տնտեսական տնաքանդ տագնապին և մանաւանդ Խարբերդի գաղթականական անդիմադրելի հոսանքին: Ամերիկայ հաստատուող Խարբերդցին նոյն ալ զգալի կերպով սկսած է երես դարձնիլ իւր ծննդավայրի անհուն կարիքներուն: Իր հայրենի օճախին մէջ իսկ, օտար դաստիարակութեամբ փճացող հայ ուսանողը ճշմարիտ հայ պահելու համար «Հայկական ճեմարան» գօլեճի մը ծրագիր յղանալով ծանր զոհողութեանց գնով այս շրջանի սկիզբէն բացինք զայն»:

Վարդապետ Մ.Խորիմյան,1912 թ.»[284]:

Այնուամենայնիվ, չնայած հայ հոգևորականության դիրքորոշմանը՝ միսիոներական դպրոցների ցանցն Արևմտյան Հայաստանում ընդարձակվում էր: Ամերիկյան կրթական համակարգը պատրաստում էր կադրեր, որոնք կարող էին

[284] ՀԱԱ, Ֆոնդ 57, ց. 2, գ. 278, թ. 89:

ղեկավարել թուրքական տնտեսության տարբեր ճյուղերը, մշակութային կյանքի բնագավառները, բժշկական, կրթական ոլորտները և նպաստել ամերիկյան քաղաքական նպատակների իրագործմանը:[285] Ամերիկյան գաղափարախոսության տարածման կենտրոնը «Ռոբերտ քոլեջն» էր, որի խնդիրն էր կայսրության տարածքում ամերիկյան քաղաքական եւ մշակութային ազդեցության տարածումը: Կայսրության տարածքում գործում էին նաև կրթական գործունեություն ծավալող տարբեր ընկերություններ: Ինչպես օրինակ, ««Լուսաբեր ընկերությունը», որը հետևելով «Անձնվեր ընկերության » օրինակին, 1904թ. վերջին բացեց կիրակնօրյա վարժարան, ուր բավական թվով երիտասարդ արհեստավորներ էին ուսանում՝ տարրական ուսում առնելու համար: 1909թ. սկսեցին անցկացվել նաև երեկոյան դասախոսություններ: 1910թ. վարժարանն ուներ 80-100 աշակերտ, որոնք բաժանվում էին չորս կարգերի: Ուսումնական ծրագիրը հարմարեցված էր Արամյան վարժարանի տարրական դասընթացի ծրագրին: Կանոնավոր կերպով դասավանդվում էին հետևյալ դասերը. հայերեն, կրոնագիտություն, թվաբանություն, տոմարագիտություն, ազգային պատմություն, օսմանյան պատմություն, քերականություն, բնագիտություն, աշխարհագրություն, գեղագրություն, գծագրություն, նաև՝ բարոյագիտություն ու առողջապահություն [286]:

Փաստորեն, այստեղ ուսանողներին հնարավորություն էր ընձեռվում նորագույն գիտելիքներ ստանալ ոչ միայն այն առարկաներից ,որոնք ավանդաբար ուսուցանվել էին ազգային դպրոցներում,այլև՝ յուրացնել նոր առարկաներ նոր մոտեցումներով:

Հայտնի է, որ ամերիկյան միսիոներների կողմից հիմնված դպրոցներին աջակցություն էին ցույց տալիս նաև ամերիկյան հյուպատոսներն ու դեսպանները: Այսպես ՝ 1913թ. հունվարի 3-ին Մարզվանի ամերիկյան վարժարանում ճաշի էին հրավիրված եղել ԱՄՆ հյուպատոս պրն. Ռեվնտալը եւ իր տիկինը՝ Ամերիկայից վերադարձի կապակցությամբ: Ճաշից հետո ընդունելություն էր տեղի ունեցել, որին հրավիրվել էին վարժարանի բարձրագույն երկու կարգերը, երեցը և երիցագույնը: Ընդունելությունից հետո հյուպատոսն իր պատրաստակամությունն էր հայտնել հնարավոր բոլոր միջոցներով օժանդակելու վարժարանի առաջընթացին: Ինչը խոսում է

[285] http://www.sedmitza.ru/news/2363764.html.
[286] ՀԱԱ, Ֆոնդ 193, ց. 1, գ. 1128, թ. 1:

այն համագործության մասին,որ առկա էր միսիոներական կրթական հաստատությունների և ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչների միջև:

Միսիոներական կրթական գործունեության առանձնահատկություններից էր նաև այն, որ այս կրթական հաստատությունները փորձում էին իրենց կրթական գործունեությունը համադրել բարեգործական ձեռնարկումների հետ՝ դրանց ներգրավելով իրենց սաներին:Այսպես, 1913 թ. հունվարի 8-ին ,չորեքշաբաթի օրը քոլեջի աղջիկների համար «Քրիստոնեական Ջանասիրաց Ընկերակցության» կողմից կազմակերպվել էր երաժշտական հանդես, որից գոյացած հասույթի մի մասը հատկացվել էր օր. Մ. Գաբրիելյանին: Վերջինս քոլեջի հին շրջանավարտներից էր, և Փոքր Ասիայի գյուղերից մեկում՝ Չալկարայում ջանք չէր խնայում դպրոցից ստացած գիտելիքները տարածելու համար: Վարժարանն ուներ 12 երեց, քոլեջի և նախակրթարանի ընդհանուր աշակերտության թիվն էր 253 հոգի, որից 120-ը քոլեջի եւ 133-ը նախակրթարանի աշակերտներ էին: Աշակերտներից հայ էին 67-ը, հույն՝ 54-ը, թուրք՝ 46-ը, բուլղար ՝45-ը, հրեա՝ 19, ալբանացի՝ 3-ը, անգլիացի՝ 3-ը, ամերիկացի՝ 3-ը, գերմանացի ՝ 2-ը, սերբիացի՝ 1-ը, բելգիացի ՝1, ֆրանսիացի՝ 1, ռուս ՝3, պարսիկ՝ 5: Գիշերօթիկ ուսուցում ստանում էին 167 հոգի, իսկ ցերեկվա ուսուցում՝ 85: Աշակերտուհիների կրոնական պատկանելությունը հետևյալն էր՝ բողոքական 24 հոգի, լուսավորչական ՝ 59, ուղղափառ՝ 97, մահմեդական ՝ 53, հրեա ՝ 19 [287]:

Վերոբերյալ վիճակագրական տվյալները ժխտում են այն կարծիքը,որ միսիոներական կրթական հաստատություններում հիմնականում կրթություն էին ստանում բողոքական համայնքին պատկանողները կամ, որ այդ հաստատություններում ուսանելն անվերապահորեն տանում էր դեպի դավանափոխություն:

1913թ. Մարաշի «Աղջիկների կենտրոնական քոլեջում» սովորում էին 136 աշակերտուհիներ, նախակրթարանի մեջ՝ 65 հոգի, քոլեջի մեջ՝ 71: Ընդ որում, ազգությամբ հայ էին 132-ը, հույն՝ 1-ը, ասորի՝ 2-ը, մահմեդական՝ 1-ը, նրանցից 95-ը բողոքական էին, 40-ը՝ լուսավորչական: Քոլեջի լավագույն ուսուցչուհիներից էր միս Ուելփթոնը: Հայտնի ուսուցչուհիներից էր նաև Օր. Ժոզեֆին Նաջարյանը, որը 3 տարի

[287] «Ավետաբեր», 1913, թիվ 5, էջ 114:

տարի Կ.Պոլսի քոլեջում ուսանելուց հետո սկսել է դասավանդել քոլեջում: Մարզվանի «Անատոլիա» քոլեջում կային 374 աշակերտ,որից որից ազգությամբ հույներ էին 197-ը, հայեր՝ 148-ը, ուղղափառ՝ 170-ը, լուսավորչական՝ 97-ը, բողոքական՝ 81-ը, կաթոլիկ՝ 8-ը, մահմեդական՝ 16-ը, հրեա՝ 2-ը: Զմյուռնիայի միջազգային քոլեջում 1913-1914թթ. տարեշրջանում պաշտոնավարող ուսուցիչների թիվը եղել է 24, իսկ ընդհանուր ուսանողների թիվը՝ 400, որոնցից 320–ը ցերեկային, իսկ 80 –ը գիշերօթիկ ուսուցմամբ: Աշակերտներից 275-ը հույն էին, հայ ՝45-ը, թուրք ՝50-ը, հրեա ՝17-ը, այլ ազգություններից՝ 13-ը: Դավանանքով բաժանվում են հետևյալ կերպ ՝ հույն ուղղափառ՝ 275-ը, հայ-լուսավորչական՝ 35-ը, բողոքական՝ 20-ը, հրեա ՝10-ը, այլ ազգությունների ՝10-ը, մահմեդական՝ 50-ը: Կ.Պոլսի «Ռոբերտ» քոլեջում 1912- 1913 ուս. տարվա աշակերտների ընդհանուր թիվն է եղել 473 հոգի, որոնց 192-ը սովորում էին քոլեջական բաժնում, իսկ մնացած 271-ը՝ նախապատրաստական բաժնում: Երիցազույն կարգի մեջ եղել են 25 աշակերտներ, 349 գիշերօթիկ և 124 ցերեկօթիկ ուսուցման աշակերտներ[288]:

Ուշագրավ է, որ Մարաշի «Աղջիկների կեդրոնական քոլեջն» ուներ իր առանձին մարմնամարզական սրահը, դրսում կար ֆուտբոլի և թենիսի համար առանձնացված հատված:

Դա փաստում է այն մասին, որ միսիոներական դպրոցներում մեծ ուշադրություն էր հատկացվում ոչ միայն ուսուցման մտավոր բնագավառին, այլև ֆիզիկական կրրթությանը, որն ամուր հիմքերի վրա դրվեց ոչ միայն տղաների համար նախատեսված ուսումնական հաստատություններում, նաև աղջիկների դպրոցներում: Սա միանգամայն նոր մոտեցում էր կանանց կրթության բնագավառում:

Մարաշում ևս նկատելի էին զգալի փոփոխություններ կրթական բնագավառում,ուր լայն գործունեություն էր ծավալում Աստվածաբանական ճեմարանը, որի տեսուչը 1912-13 թթ. ուս. տարվա ընթացքում միստր Կուտսելն էր[289]:

Հարկ է նշել, որ այն ուսանողներին տալիս էր ոչ միայն կրոնական բնույթի կրթություն, այլև հարուստ գիտելիքներ լեզվաբանության, բնագիտության, աշխարհագրության, պատմության ոլորտներից:

---

[288] «Ավետաբեր», 1913, թիվ 19, էջ 443:
[289] «Ավետաբեր», 1913, թիվ 20, էջ 480:

Անժխտելի է, որ 1908-1914թթ. Արևմտյան Հայաստանի կրթական կյանքի մի շարք նոր երևույթներ, ինչպիսիք էին, օրինակ, արհեստագործության ուսուցանումը դպրոցներում, բնագիտական և տեխնիկական կրթությունը, լեզուների խորացված ուսուցանումը՝ հատկապես քոլեջներում, անմիջականորեն կապված էին միսիոներների կրթական ձեռնարկումների հետ:

Կրթական նորույթ էր նաև ֆիզկուլտուրայի պարտադիր ուսուցումը, որը զգալի տարածում ստացավ հատկապես 1910-ական թթ.:

Ընդհանուր առմամբ, խոսելով միսիոներների կրթական գործունեության մասին բավական է նշել այն փաստը, որ ամերիկյան բարեգործական կազմակերպությունները 19-րդ դարի վերջին քառորդից մինչ 20-րդ դարի առաջին տասնամյակը հասցրել էին Օսմանյան կայսրությունում հիմնել 551 տարրական և միջնակարգ դպրոց[290]:

Ցույց տալու համար միսիոներների կրթական և բարեգործական հիմնարկությունների նշանակությունն արևմտահայության համար, բավական է թվարկել միայն դրանց անունները՝Ադաբազարի Հայուհիների գիշերօթիկ վարժարանը /հիմնվել է 1886թ./,Այնթափի աղջիկների բարձրագույն վարժարանը/ հիմնվել է 1860թ./,Ադանայի աղջիկների բարձրագույն գիշերօթիկ վարժարանը/ հիմն. 1886թ./,Բաղեշի աղջիկների բարձրագույն գիշերօթիկ վարժարանը /հիմն. 1868թ./,Զմյուռնիայի աղջիկների ամեր. Բարձրագույն վարժարանը/ հիմն. 1886թ./,Եդեսիայի աղջիկների գիշերօթիկ վարժարան/ հիմն. 1893թ./ և այլն[291]: Այս բոլոր հաստատությունները կառուցվել են ամերիկացիների ձեռքով, սակայն դրանց կայացման գործում կա նաև հայ ավետարանականների դերը:

Անհրաժեշտ է նշել այն, որ ի հեճուկս իր բոլոր թերությունների, տկարությունների և զանցառությունների հայ ավետարանական եկեղեցին մեր ազգին մատուցել է մնայուն և հիշարժան ծառայություններ կրթական, մշակութային և հասարակական ոլորտներում: Ուստի բացահայտ թերությունները չեն բացառում Հայ Ավետարանական շարժման նշանակությունը մեր պատմության մեջ, որովհետև դատելով իր արդյունքներից՝ այն բավական կարող ուժ էր դարձել հայության համար:

---

[290] Սահակյան Ռ.Օ., նշվ. աշխ., էջ 75:

[291] Ամերիկյան միսիոներների կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածում հիմնված բարեգործական և կրթական հաստատությունների ամբողջական ցանկը տես << հավելված 3>>-ում:

Ամերիկացի միսիոներները նպաստեցին հայ ժողովրդի հոգևոր կյանքին՝ ներմուծելով քրիստոնեական առողջ համայնք զարգացնելու նոր մեթոդներ՝ հիմք ընդունելով եկեղեցու առաքելության մեջ աշխարհականների դերի վերանայումը: Միսիոներները դեր ունեցան հայ ժողովրդի հոգևոր զարթոնքի մեջ: Միսիոներները մատուցեցին կրթական և մշակութային ծառայություններ, որոնք բավարար են իրենց համար կարևոր տեղ ապահովելու համար հայ ազգի մտավոր և հասարակական կյանքի պատմության մեջ: Հայ ավետարանները ամերիկյան միսիոներների օժանդակությամբ ծառայություն մատուցեցին հայ մշակույթին ոչ քիչ ոլորտներում: Օրինակ, գրականության մարզում նրանք հայ ուսումնականների համար հայթայթեցին բազմաթիվ աղբյուրներ այնպիսի պարբերաթերթերի միջոցով, ինչպիսիք էին «Շտեմարան պիտանի գիտելեաց», «Եփրատ», «Աւետաբեր», «Դիտակ», «Բյուրակն», որոնք ճոխացրին հայ մամուլն ու գրականությունը: Գիտակցելով այն իրողությունը, որ աշխարհաբարը կարիք ունի քերականության հետագա մշակման, նրանք պատրաստեցին մի շարք գնահատելի հատորներ աշխարհաբարի քերականության մասին, կազմեցին նաև բառարաններ՝ հետևելով այդ շրջանի գիտական մակարդակին: Առանձին հիմնահարց է ամերիկյան միսիոներների զգալի ներդրումը հայ գրատպության պատմության մեջ՝ Կ.Պոլսում, Զմյուռնիայում և այլուր[292]: Նրանք հրատարակեցին նաև դասագրքեր, որոնք ընդգրկում էին տարբեր նյութեր ինչպես աստղագիտության, մարդաբանության, մարդակազմության, կենսաբանության, այնպես էլ հոգեբանության վերաբերյալ: Բացի այդ, նրանք իրենց կրթական ծրագրերում ընդգրկեցին երաժշտության դասընթացներ, ինչը ևս կարևոր կրթական նորամուծություն դարձավ:

Հայ ավետարանական եկեղեցին կարևոր շեշտ դրեց ընտանիքի և եկեղեցու համագործակցության վրա՝ նոր մանկավարժական սկզբունքների առումով: Ընդհանուր առմամբ կայսրության մեջ ապրող հայ ավետարանականները համբավ ունեին իբրև պարկեշտ անձանց՝ համեստ նկարագրով:

Հետաքրքիր է, որ իրենք՝ ավետարանականները «բողոքական» բառի գործածությունը չեն բացատրում ժխտական և անվանարկիչ իմաստով, նրանք գտնում

---

[292] Խառատյան Ա., Զմյուռնիայի հայ գաղթօջախը, Երևան, 2008, էջ 25:

են, որ «բողոք» չի նշանակում «բանի մը դէմ ըլլալ», այլ՝ «բանի մը ի նպաստ ըլլալ», վկայել ինչ որ բանի համար: Այսինքն, ըստ նրանց, հայ ավետարանականությունն ամենից առաջ վկայության շարժում է և ոչ թե բողոք՝ ավանդական եկեղեցու դեմ:

Այսպիսով, չնայած ամերիկյան միսիոներների քաղաքական նպատակներին, այն է՝ ԱՄՆ -ի ներթափանցումը Թուրքիայի ներքին կյանքի կարևորոգույն բնագավառներ՝ ամերիկյան միսիոներների ծավալած կրթական - լուսավորական գործունեությունը մեծ դեր խաղաց երիտասարդության մտավոր զարգացման համար, թեև ունեցավ նաև որոշակի բացասական հետևանքներ հայ հանրության կրոնական, հոգևոր–գաղափարական միասնության պառակտման տեսանկյունից:

2.2. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ - ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՔՆԵՐ

1908-1914 թթ. արևմտահայության շրջանում նոր թափ ստացան միսիոներական բարեգործական աշխատանքները:Պատճառն այն է, որ իշխանության գալուց անմիջապես հետո երիտթուրքերը ձեռնամուխ եղան Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ մյուս շրջաններում արևմտահայության ոչնչացմանը: Այս քաղաքականությունն առավել սուր դրսևորում ստացավ Ադանայում, ուր տեղի ունեցան հայերի մասսայական ջարդեր: Երիտթուրքերը և սուլթանի կողմնակիցները, որոնք ատամները կրճտացնում էին հայերի վրա, նրանց «մի լավ դաս տալու» հարցում տարաձայնություն չունեին: Այդ նպատակով մշակված ծրագրի համաձայն նրանք հերթական նախճիրը գործեցին: Թուրք կանոնավոր զորքը 1909թ. ապրիլին Ադանայում և նրա շրջակա վայրերում կոտորեցին 30 հազար հայի: Միաժամանակ հրո ճարակ դարձավ 300 ագարակ, հափշտակվեց ավելի քան 10 հազար գլուխ անասուն:Նյութական ընդհանուր վնասը կազմեց ավելի քան 80 միլիոն դոլար[293]:

Այսպիսով, երիտթուրքական հեղափոխությունից հետո Կիլիկիայի հայությունը խոր հիասթափություն ապրեց: Կոտորածների և անլուր տանջանքների հետ միասին աղքատությունը թափանցեց ամենուրեք:

Թուրքական պաշտոնյաների հարստահարությունները Կիլիկիայում և Զեյթունում ժողովրդին հասցրել էին ծայր աղքատության[294]:

Վերոնշյալ հանգամանքները միանշանակորեն հեշտացրեցին ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունը: 1908թ. երիտթուրքական հեղաշրջումը և սահմանադրության հռչակումը հնարավորություն տվեցին միսիոներներին առավել ընդլայնել իրենց գործունեությունը կայսրության տարածքում՝ հատկապես կրոնական գաղափարախոսության ասպարեզում: Այսպիսով, շուտով ամերիկյան միսիոներների գործունեությունը տարածվեց Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության տարբեր սոցիալական շերտերի մեջ: Ամերիկյան ավետարանական ընկերությունն իր ցանցը տարածեց ողջ կայսրության տարածքով, ուր 1908-1914թթ տարածվել է շուրջ 3.131.421 սուրբ գրքի նմուշ 29 լեզուներով, ընդ որում միայն հայերի համար՝ 7 տարբեր բարբառներով :

---

[293] Սիմոնյան Հր.Ռ., նշվ. աշխ., էջ 143:
[294] Հ.Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 372:

Ամերիկյան միսիոներության տարածման հարցում մեծ դեր խաղացին միսիոներ-բժիշկները, որոնք բժշկական աշխատանքները հաջողությամբ զուգակցում էին բողոքական գաղափարախոսության քարոզչության հետ՝ մեկ անգամ ևս ի ցույց դնելով ամերիկյան մարդասիրությունը: Այսպիսով, երիտթուրքերի որդեգրած քաղաքական ուղղությունը և կայսրության քրիստոնյա բնակչության սոցիալ-քաղաքական ծանր դրությունը ստիպեցին հայերի մի մասին իրենց հույսը կապել ամերիկյան բողոքական միսիոներների մարդասիրական կոչերի հետ, որոնք ձգտում էին իրենց ազդեցությունն ամրացնել երկրի տարածքում: Ամերիկյան միսիոներների գործունեությանը նպաստում էին նաև ամերիկյան դեսպանություններն ու հյուպատոսարանները, որոնք բացվում էին Արևմտյան Հայաստանի գլխավոր քաղաքներում: Դրանք մշակութային և առևտրական կենտրոններ էին և միաժամանակ հանդիսանում էին միսիոներական կայաններ՝ փաստելով ամերիկյան հեռահար քաղաքականության մասին: Նրանք հայ բնակչության շրջանում քարոզում էին բողոքականություն՝ հաջողությամբ մրցակցելով կաթոլիկ առաքելությունների, ուղղափառության և հայ առաքելական եկեղեցու ազդեցության դեմ:

Միաժամանակ անժխտելի է նաև այդ ձեռնարկումների մարդասիրական կողմը: Այսպես օրինակ, Վանի նշանավոր ինքնապաշտպանության ժամանակ ամերիկացի միսիոներները սատարում են հայերին՝ զանազան բնույթի օժանդակություն ցուցաբերելով: Բժիշկ Քլարենս Աշըրը հրաժարվում է ամերիկյան հիվանդանոցի դեղատունը հանձնել իշխանություններին: Նա դեղերը տալիս էր հայերին և ինքն իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ, վիրահատում և բուժում էին հայ հիվանդներին ու վիրավորներին[295]:

Ամերիկյան միսիոներների մեջ կային նվիրյալներ, որոնք իրոք սրտացավորեն էին վերաբերվում արևմտահայությանը: Նրանց մեջ հարկ է առանձնացնել Սայրըս Համլինին /1811-1900/, որն ավետարանչական առաքելությամբ Միջին Արևելք հասած միսիոներների մեջ ամենից ավելի է աչքի ընկել հայ ժողովրդի հանդեպ իր վերաբերմունքով: 1839թ. նա Պորտի կողմից գործուղվում է Կ.Պոլիս և միանում միսիոներներ Դ. Կուտէլի և Շոֆլըրի հետ: Նրան 1839թ. հաջողվում է հիմնել Պէպէքի

---

[295] ԳԱԹ, Հ. Ավագյանի ֆոնդ, գործ 8, թ. 6:

միսիոներական դպրոցը՝աստվածաբանական բաժանմունքով: Դպրոցի կողքին նա հաստատում է վառարանի և կոշիկի կաղապարի գործարաններ, ալրաղաց, փուռ, լվացարան հիմնականում հալածյալ հայ ավետարանականների նյութական միջոցներն ապահովելու համար: Կ.Պոլսում Համլինը կապեր է հաստատում նաև ամիրայական տների հետ՝ մասնավորապես Տատյանների հետ: Նա գրում է երկու հուշագրական բնույթի աշխատություն, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են իր ապրած երկրների քաղաքական, կրթական, կրոնական, և տնտեսական կյանքի ուսումնասիրության համար: Դրանք են՝ «Among the Turks, New York, 1877» և « My Life and Times, Boston, 1893»[296]:

Առանձնանում էր Ջորջ Վուտը /1814-1901/, 1842թ. աշխատել է Կ.Պոլսում, եղել է Ս.Համլինի օգնականը Պէպէքի միսիոներական ուսումնարանում, 1871թ. նա ստանձնում է Կ.Պոլսի միսիոներական գործի ողջ պատասխանատվությունը, նաև աջակցել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը[297]:

Վեր. Ուիլեըմ Կուտելն նույնպես այն հազվագյուտ միսիոներներից մեկն է, որն իր ծառայության տարիներին առավելագույն միտում է ցուցաբերել ճանաչելու հայերին: Միսիոներ Հենրի Ջոն Վան Լեննեփը 1815-1899թթ ծնվել է Զմյուռնիայում: Նա հատկապես բեղուն գործունեություն է ծավալում Թոքաթում, ուր 1854թ. հաստատում է միսիոներական կայան: Նա Հայ Ավետարանական շարժման մղիչ ուժերից մեկն էր: Նա պաշտպանում էր Հայոց միսիոներության հետ հավասար գործակցության սկզբունքը [298]:

Հ. Պարնըմը /1826-1910/ 1858թ. Ամերիկյան Պորտում միսիոներական ծառայության մեջ է մտնում, նա 1860թ. ամուսնանում է Ուիլեըմ Կուտէլի աղջկա՝ Մէյրիի հետ ու մեկնում է Խարբերդ, ուր մնում է մինչև իր մահը[299]: Նա հայտնի էր թուրքերենի լավ իմացությամբ, արդարասիրությամբ և հարցերին մոտենալու դիվանագիտական ոճով: Կառավարական շրջանակները հաճախ դիմում էին նրան այս կամ այն հարցը լուծելու համար: Ուշագրավ են Պարնըմի հուշերը Վան կատարած իր այցելության մասին:Նա նկարագրում է ,թե ինչպես Մուշում ձյունախառն եղանակին մարդիկ այնտեղ շրջում էին

---

[296] Քասունի, նշվ. աշխ., էջ209:
[297] Strong W. E., The Story of the American Board, p.307, Encyclopedia of Missions, pp. 793-794.
[298] Ատանալեան Կ., Յուշարձան հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952, էջ 295:
[299] «Աւետաբեր», 11 յունիսի, 1910, էջ 360:

գրեթե մերկ, ցնցոտիներով, նա նշում է Մուշի շրջակայքի 6 կամ յոթ գյուղերը, որոնք շատ ծանր վիճակում էին, գրեթե ոչ ոք կոշիկ չուներ[300]:

Հ.Պարնըմը գլխովին նվիրված էր իր գործին և սիրում էր իր ժողովրդին, որի մեջ գործում էր, նրա մարմինը հողին է հանձնվել Եփրատ քոլեջի մոտակա գերեզմանատանը[301]:

Ջ.Կրինը 1859թ.հաստատվում է Նիկոմեդիայում: Հայերի մասին նա գրում է. «Այս ժողովրդի մասին իմ առաջին տպավորությունները շատ կողմերով ավելի հաճելի են, քան ես կակնկալեի, աշխատասեր են, և մեծ փափագ ունեն կրթության և ճշմարտության>> [302]: Նա նշում է, որ շատերը վախենում են հարել բողոքականության՝ վախենալով հալածանքներից, ինչը թեև արգելված էր թուրքական իշխանությունների կողմից, սակայն ամբոխը հաճախ էր տարբեր ձևերով /տնից վտարելով, ընկերներին մեկուսացնելով, նյութական վնաս հասցնելով / հալածել բողոքականներին:

Հարկ է նշել, որ այս օրինակը բացառություն չէ, նման մարդասիրական դրսևորումների կարելի է հանդիպել Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր միսիոներական կայանների գործունեությունն ուսումնասիրելիս:

Վանում ևս իրենց հայասեր գործունեության շնորհիվ միսիոներները սկսեցին վայելել ժողովրդի սերն ու հարգանքը: Նրանց մեջ հատկապես մեծ ուշադրության է արժանի բժիշկ Ռեյնոլդսը, որն աշխատել է Վանում ավելի քան 4 տասնամյակ շարունակ, իբրև բժիշկ, ուսուցիչ և աղքատների ու որբերի խնամակալ: Ստույգ մահից նա ազատեց շատ կյանքեր: Ընդհանուր առմամբ Վանում միսիոներների գործունեությունն ունեցավ իր ազդեցությունը ընտանեկան, կենցաղավարական, նիստ ու կացի, ճաշակի, արվեստի ու կրթության վրա:

Բողոքական համայնքին պատկանելը նշանակում էր օգտվել որոշակի արտոնություններից. ստանալ անվճար կրթություն, հարկ եղած դեպքում՝ դեղորայք, միսիոներները հաճախ ցույց էին տալիս ֆինանսական օգնություն կարիքավոր ընտանիքներին: Բացի այդ, հայերը հույս ունեին, որ բողոքական համայնքին պատկանելը հնարավոր կդարձնի թուրքական հալածանքներից խուսափելը:

---

[300] R.Anderson, History of the Missions, vol. 2, pp. 413-414.
[301] Վահէ Հայկ, նշվ. աշխ., էջ 362:
[302] Greene F.D., Armenian Massacres and Turkish Tyranny, p. 39.

Միաժամանակ այս տարիներին երիտթուրքական իշխանությունները հաճախ զանազան լուրջ խոչընդոտներ էին հարուցում հայ բնակչության առջև՝ գնելու կամ վաճառելու անհրաժեշտ քանակությամբ պարեն[303]: Այս պարագայում միսիոներական համայնքների միջոցով հայերը կարողանում էին նաև ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ պարեն: Վիճակը հատկապես սրվեց առաջին համաշխարհայինի նախօրեին:

Պերճախոս է ամերիկյան միսիոներ Գրեյս Կնապի վկայությունը. «Զորահավաքի ընթացքում 1914թ. աշնանը հայերը անողոքաբար թալանվեցին …հարուստ մարդիկ սնանկացան ու աղքատ մարդիկ կողոպտվեցին»[304]: Համանման վկայություն է հաղորդում նաև Մուշի գերմանական որբանոցի տնօրեն Ալմա Յոհանսոնը: Բացի այդ նա ընդգծում է, որ հայ բնակչությունը իշխանությունների կամայականությունները համբերությամբ տանում էր, որպեսզի առիթ չտա հարձակվելու իրենց վրա, քանի որ «իրենց մեկ հատը առարկեր, կրնար վստահաբար ջարդի մը սկիզբը նշանակել»[305]:

Ավելի ուշ, երիտթուրքական իշխանությունները զանազան արգելքներ են հարուցում ամերիկյան միսիոներների առջև, որպեսզի թույլ չտան տեղեկության որևէ արտահոսք արևելյան նահանգներից: Միսիոներներից մեկի կարծիքով, իշխանությունները նման քայլերի էին դիմում, որովհետև ամերիկացիները «պատմում էին Թուրքիայում կատարվող ահավոր երևույթների մասին»[306]:

Սակայն հարկ է նշել, որ Վանում գտնվող ամերիկյան միսիոներուհիները կարողացել էին շրջանցել օսմանյան գրաքննությունը:Նրանք քաջատեղյակ լինելով գրաքննիչների կրթական ցածր մակարդակին՝ հատկապես վիլայեթներում, իրենց ուղարկած նամակի վրա նշում էին, որ այն գրված է ամերիկերեն: Եվ դա բավարար էր լինում, որպեսզի նամակը հասներ հասցեատիրոջը[307]:

Իշխանությունները երբեմն նույնիսկ կանգ չէին առնում ամերիկյան միսիոներների հետ ֆիզիկապես հաշվեհարդար տեսնելու առջեւ, որպեսզի նրանք հանդես չգան իրենց ոճրագործությունների մերկացմամբ: Դա մեկ անգամ ևս փաստում

---

[303] Hovannisian R., The Armenian People from Ancient to Modern Times, Palgrave Macmillan, 1997,Vol. II. Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century,480-493 p.
[304] Knapp G.H., An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War,p.180.
[305] Յոհանսոն Ա.,Աքսորյալ ժողովուրդ մը,Սթոքհոլմ, 1980, էջ 4:
[306] Moranian S.E., The American Missionaries and the Armenian Question 1915-1927, p. 110.
[307] Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ37:

է այն մասին, որ անկախ քաղաքական նկատառումներից դժվար պահերին միսիոներներն, իրոք, անձնվիրաբար կանգնել են մեր ժողովրդի կողքին: Ամերիկյան միսիոներուհի Թեյսի Ատկինսոնը վկայում է, թե ինչպես Խարբերդի ամերիկյան հիվանդանոց են բերում հիվանդ մի հայ զինվորի, որը զառանցանքի մեջ անընդհատ կրկնում էր միևնույն նախադասությունը՝«Հաշվեք հայերին»:/ Այսինքն՝ուշադրության կենտրոնում պահեք հայ վիրավորներին,քանզի նրանց կյանքին անմիջական վտանգ է սպառնում-Ս.Գ./: Բժշկական անձնակազմից ոչ ոք ուշադրություն չի դարձնում տարօրինակ խոսքերին՝ մտածելով, որ դա կապված է նրա հիվանդության հետ: Զինվորի խոսքի նախազգուշացնող իմաստը պարզ է դառնում, երբ մի գիշերը հերթապահ քույրը կարճ ժամանակով բացակայում է, և շուտով զինվորին գտնում են սպանված, թուրքերը կտրել էին նրա կոկորդը [308]:

Ամերիկյան միսիոներուհի Մերի Գրաֆմանը հաղորդում է 1914թ. Սվազում տեղի ունեցած դեպքերի մանրամասնությունների մասին:Ինչպես կայսրության մյուս հայաշատ վայրերում, այնպես էլ այստեղ իշխանությունները ձերբակալում են ամենանշանավոր և հեղինակավոր մարդկանց:

Վերջիններս հարկադրված էին լռելյայն հնազանդվել, հակառակ դեպքում «նրանց տները կհրդեհվեն, իսկ ընտանիքներն իրենց աչքի առջև կախաղան կբարձրացվեն»:[309] Կ. Պոլսում հայոց պատրիարքությունը ստանալով տեղեկություններ այն մասին, որ քրդերն ուժեղացրել են հայերի կողոպուտներն ու սպանությունները՝ պատրիարքի գլխավորությամբ շտապում է մեծ վեզիրին և մյուս նախարարներին ներկայացնել եռանդագին դիմումներ՝ խնդրելով, որ Բ.Դուռն շտապ պաշտպանի հայերին [310]:

Սակայն որևէ գործնական քայլ Բ.Դուռը բնականաբար չի իրականացնում, ավելին որպեսզի միջազգային հանրությունից իրենց կողմից իրականացվող մարդու տարրական իրավունքները ոտնահարող գործողությունները գաղտնի մնան, երիտթուրքական իշխանությունները սկսում են խոչընդոտներ հարուցել չեզոք տերությունների քաղաքացիների առջև՝ Արևմտյան Հայաստան և Փոքր Ասիա

---

[308] Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 43:
[309] Moranian S. E., նշվ. աշխ., էջ 144:
[310] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 149:

ուղևորվելիս: Արգելվում է Թուրքիայի դեմ պատերազմող տերությունների լեզուներով, այդ թվում և հայերեն նամակագրությունը [311]:

Հակառակ խիստ գրաքննությանը, միսիոներները արտաքին աշխարհին հայտնեցին կատարվող վայրագությունների մասին, նրանք նույնիսկ անտեսեցին Միացյալ Նահանգների կառավարության՝ չմիջամտելու քաղաքականությունը և նյութական օժանդակության համար կոչ արեցին Եվրոպայի քրիստոնյաներին՝ նյութապես աջակցելու հայերին և շարունակելու իրենց կրթական-բարեգործական աշխատանքները: Այդ տագնապալի տարիներին միսիոներները «բարի սամարացի» հանդիսացան բոլոր հայերի համար՝ անկախ նրանից՝ ավետարանական են նրանք, թե՝ ոչ: Նրանք հակառակվեցին նաև թուրք կառավարության պահանջներին՝ հանձնել իրենց մոտ ապաստան գտած հայերին: 19-րդ դարի վերջին քառորդին գործադրված ջարդերը մեծապես վնաս հասցրեցին հայկական հաստատություններին, այդ թվում նաև Հայ Ավետարանական եկեղեցուն: Եկեղեցական և դպրոցական շենքեր ավերվեցին, քոլեջի դասախոսները և ուսանողները բանտարկվեցին: Փաստորեն, ջարդերը սահմանափակված չէին մեկ «միլլէթով» կամ կուսակցություններով, այլ ուղղված էին ամբողջ հայության դեմ: Այդ է պատճառը, որ երեք քաղաքական կուսակցությունները՝ արմենականները, հնչակյանները և դաշնակցականները, ինչպես նաև հայ առաքելականները, ավետարանականները և կաթոլիկները մի կողմ դրեցին իրենց կրոնական և աստվածաբանական տարաձայնությունները ՝ համազգային փորձությանը դիմակայելու համար:

Իհարկե, այս օրինակները բավական չեն ցույց տալու համար այն ճանաչողական նշանակությունը, որ ունեն միսիոներների գրագրություններն արևմտահայերի ծանր կացությունն ուսումնասիրելու համար: Դրանք բացառիկ սկզբնաղբյուրներ են,որոնք թույլ են տալիս ականատեսի խոսքերով պատկերացում կազմել XIX դարի վերջի և XX դարի սկզբի Արևմտյան Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ կրթական կյանքի վերաբերյալ:

Թուրքերը միշտ էլ կասկածանքով են վերաբերվել իրենց կայսրության սահմաններից ներս ամերիկյան բարձրագույն կրթական հաստատությունների

---

[311] ՀԱԱ, Ֆ. 227, ց.1, գ. 471, թ. 4:

գործունեությանը: 2001թ. օգոստոսի 3 Կ.Պոլսի «Ռադիկալ» օրաթերթը հրատարակում է Մեհմեդ Ալի Քըչլալըի հոդվածը, ուր նա նշում է, որ «անմեղ երեւոյթով այս միսիոնարները կրօնքի եւ մշակոյթի կալուածներէն ներս իրենց գործունէութիւնը ինչպես ուղղած են քաղաքական նպատակներու,և Օսմանեան կայսրութեան գլխացաւերուն վրայ աւելացուցած են նոր գլխացաւեր>>[312]:

Միսիոներների ջանքերով 19-րդ դարի վերջերին հայերը սկսեցին ապստամբություններ և Ամերիկայում թուրքերի մասին բացասական պատկեր ստեղծեցին: Միսիոներներն հայաբնակ բոլորր շրջանների մեջ իրենց բացած վարժարաններով հայերին օգնեցին, որպեսզի տիրանան հայկական ազգային գիտակցությանը, գրքեր, հոդվածներ հրատարակեցին և որպէսզի ապահովեն տարածումը, օգտվեցին Ամերիկայի և Անգլիայի հյուպատոսներից [313]:

Չնայած Թուրքիայի քաղաքական կյանքի լարվածությանը՝ ամերիկյան դիվանագետներին հաջողվեց այստեղ ունեցած իրենց տնտեսական, իրավական դիրքերի շնորհիվ բավական հաջողությունների հասնել և ճանապարհ հարթել ամերիկյան միսիոներների գործունեության համար: Տնտեսական ոլորտում ամերիկյան գործարարներն առավելություն ունեին մյուս օտարերկրյա գործակալների համեմատությամբ, քանի որ Թուրքիայի կառավարող շրջանների համոզմամբ նրանց գործունեության և ազդեցության հզորացումը չէր սպառնում Թուրքիայի տարածքային ամբողջականությանը: Թուրքական կառավարությունն այդ կերպ նաև փորձում էր հակակշիռ ստեղծել արևմտաեվրոպական երկրների ակտիվ էքսպանսիոնիստական քաղաքականության դեմ: Բալկանյան պատերազմների տարիներին 1912-1913թթ. ընթացքում նկատելի էր ամերիկյան կառավարության զգուշավոր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ՝ այստեղ ամերիկյան գործակալների համար խոչընդոտներ չստեղծելու համար: Այդ հանգամանքով էլ, հավանաբար, կարելի է բացատրել նաև արևելյան հարցին չխառնվելու ԱՄՆ-ի ձգտումը: Սակայն ամերիկյան այս պասիվ քաղաքականությունը չարդարացրեց իրեն ոչ տնտեսական և ոչ էլ քաղաքական

---

[312] Մեհմէտ Ալի Քըչլալը, Ամերիկացի միսիոնարները հայերը մղեցին ապստամբութեան եւ Հայկական ինքնութեան որոնումի, «Ջանասէր», յուլիս-օգոստոս, էջ 168-169:
[313] Նույն տեղում:

առումով: Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ առավել ակտիվ դիրքորոշում ունեցած երկրներն առավելություններ ձեռք բերեցին:[314]

Այդ տարիներն ամերիկյան դիվանագետները հիմնականում զբաղված էին միսիոներների բողոքական համայնքների դիրքերի ամրապնդմամբ և դեպի ԱՄՆ կայսրության քրիստոնյա բնակչության և մասնավորապես հայության գաղթը կազմակերպելով: Գաղթն արագացնող հիմնական գործոն կարելի է համարել երիտթուրքական կառավարության կողմից իրականացվող քրիստոնյա բնակչության ջարդերը: Գաղթին նպաստեց նաև այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը որոշեց կայսրության բոլոր ժողովուրդներն առանց բացառության ենթակարկել զորակոչի:

Այսպիսով, հալածանքներից խույս տալու հույսով արևմտահայերը բռնում էին գաղթի ճանապարհը[315]: Դեպի ԱՄՆ կազմակերպվող գաղթը կրկին սպառնում էր Օսմանյան կայսրությունում եվրոպական երկրների հետապնդած շահերին: Դա սպառնում էր հատկապես օտարերկրյա դեսպանություններին, որոնք իրենց քաղաքականությունն իրականացնում էին հիմնականում քրիստոնյաների միջոցով: Տարագրությունը մի կողմից նպաստում էր Օսմանյան Թուրքիայի թուլացմանը, իսկ մյուս կողմից էլ ԱՄՆ-ը ձեռք էր բերում էժան աշխատուժ, գաղթականները նպաստում էին նրանց տնտեսության և աղյունաբերության զարգացմանը[316]:

Այնուամենայնիվ, մեր ժողովրդի համար այս տառապանքի տարիներին միսիոներների կողմից ցուցաբերվող օգնությունը չի կարելի գնահատել լոկ որպես քաղաքական ուղղվածությամբ միջոցառումներ: Դրանք, իրոք, մարդասիրության դրսևորումներ էին, որոնց շնորհիվ շատ հայեր կարողացան փրկվել թուրքական հալածանքների:

---

[314] http://www.noravank.am/arm/books/
[315] Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 29:
[316] «Հորիզոն», 1915, համար 12:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

3.1 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Արևմտյան Հայաստանում ամերիկյան միսիոներների գործունեության վերաբերյալ հայ հասարակական միտքը հիմնականում առաջ է քաշում երկու իրարամերժ տեսակետ: Առաջին տեսակետի համաձայն,որը հիմնականում արծարծվել է ժամանակի ականավոր թերթերում՝ <<Մշակ>>, <<Հովիտ>>, <<Ժամանակ>>, <<Արևելք>>, <<Արարատ>> և այլն, միսիոներներն Օսմանյան կայսրություն էին գործուղվել ԱՄՆ-ի քաղաքական շահերն իրականացնելու համար: Հետևաբար ցանկացած մարդասիրական քայլ, որ արվում էր նրանց կողմից, համարվում էր շահադիտական ձեռնարկում: Մյուս տեսակետն, ընդհակառակը, փորձում է բացառել միսիոներական գործունեության շահադիտական կողմը՝ նրանց ներկայացնելով որպես բարերարներ: Այդ տեսակետը հիմնականում առաջ է քաշվում սփյուռքահայ պատմաբանների աշխատություններում:

Այսպես, Ս.Մ.Ծոցիկյանը «Արեւմտահայ աշխարհ» աշխատության մեջ Վանում ամերիկյան միսիոներների ղեկավար դոկտոր Ռեյնոլդսի մասին գրում է. «Հայտնի է, թէ Ամերիկացի հայասէր եւ մարդասէր Տոքթ. Ռեյնօլտս, իր կնոջ հետ, վաղ թուականներուն Վան գալով, երկար տարիներ գործեց եւ ուշագրաւ դեր մը կատարեց կրթական, արհեստագիտական եւ որբախնամական ասպարէզներուն մէջ»[317]:

Խորհրդային պատմագիտությունը բացասական կտրուկ առարկումներ ուներ միսիոներների գործունեության հանդեպ՝ հիմնահարցը դիտարկելով բացառապես քաղաքական տեսանկյունից, մանավանդ, խոսքը վերաբերում էր ԽՍՀՄ թշնամի իմպերիալիզմի առաջատար երկրի գաղափարախոսության պատմությանը:

Ակադ. Մ. Ներսիսյանը, իր արժեքավոր ուսումնասիրության մեջ անդրադառնալով միսիոներներին, նշում էր, որ «Ամերիկյան միսիոներների գործունեությունը, անկասկած, չափազանց վնասակար է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ Ռուսաստանի

---

[317] Ծոցիկյան Ս.Մ., Արեւմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 697:

շահերի համար Ասիական Թուրքիայում: Ամենուրեք հիմնելով որբանոցներ ու դպրոցներ, միսիոներները հայ որբ պատանիներին դարձնում են բողոքականներ և հայերի մեջ սերմանում կրոնական ծայրահեղ երկպառակություններ>>[318]:

Նույն կերպ Ա.Ս. Համբարյանը միսիոներների գործունեությունը նկարագրում է մռայլ գույներով: «Միսիոներները, տարածելով իրենց պետությունների գաղութային քաղաքականությունը, միաժամանակ օբյեկտիվորեն օգնում էին թուրքական սուլթանին, քանի որ պառակտում էին քրիստոնեական բնակչությանը տարբեր խմբերի, սերմանում նրանց միջև թշնամություն, քայքայում նրանց առանց այն էլ նվազ ուժերը և հեշտացնում սուլթանի ու աղաների գործը՝ Արևմտյան Հայաստանում բռնկվող ազգային ու սոցիալական շարժումների ճնշման համար»,- գրում է նա[319]:

Այս երկու տեսակետներն էլ, տեղ գտնելով ականավոր պատմաբանների աշխատություններում, որոնց վաստակն անուրանալի է հայոց պատմության հիմնահարցերի լուսաբանման գործում, իհարկե, խիստ արժեքավոր են: Սակայն, այսօր, միսիոներական գործունեությանը անկողմնակալ գնահատական տալու համար, հնարավոր է նորովի անդրադարձ կատարել բողոքականության տարածման պատճառներին, քարոզչության վերջնական նպատակներին և արդյունքներին: Այս հարցերը մշտապես հուզել են նաև հայ հասարակական միտքը՝ իրենց արտացոլումը գտնելով տարբեր աշխատություններում և ժամանակի մամուլում: Ուսումնասիրելով հայ ավետարանականության պատմությունը, գալիս ենք այն եզրահանգման,որ նրա ծագման պատճառները պետք է որոնել 19-րդ դարի հայ մտավոր զարթոնքի մեջ, երբ սկսեցին տարածվել գաղափարներ հայ Առաքելական եկեղեցու բարեփոխման մասին: Հայ Առաքելական եկեղեցու բարեկարգումը մերժելը, սկսած <<Հյուսիսափայլից>> և <<Մեղու Հայաստանի>> պարբերականների ժամանակներից /XIX դ. 50-60-ական թթ./, դարձավ լիբերալիզմի և պահպանողականության պայքարի հիմնական պատճառներից մեկը: Արևմտահայերի մեջ այդ պայքարը դրսևորվեց դավանական հակադրության ձևով և ավելի վաղ:

Արևմուտքի ուժեղ ճնշմամբ ստեղծվեց բողոքական հանրություն/1847/: Ընդ որում, Հայ եկեղեցու բարեկարգման խնդիրը առաջ է քաշվել նաև արևելահայ իրականության

---

[318] Ներսիսյան Մ.Գ., նշվ. աշխ., էջ 280:
[319] Համբարյան Ա.Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, /1856-1914/, էջ 130:

մեջ, հատկապես Ստ.Նազարյանի կողմից, որ պահանջում էր եկեղեցու բարեկարգում: «Հայոց եկեղեցին,-գրում է Ս. Նազարյանը,-պիտո է մի ռեֆորմ առներ ոտքից մինչև գլուխ, այսինքն՝ մի ազդու վերանորոգություն, Ավետարանի հաստարմատ հիման վրա»[320]:

Անշուշտ,Ստ.Նազարյանը ոչ թե բողոքականություն էր քարոզում, ինչի մեջ շտապեցին նրան մեղադրել հակառակորդները, այլ առաջ էր քաշում կրթված հոգևորականության խնդիրը:

Հայ եկեղեցու դավանական անաղարտության դիրքերից ելնելով, Մատթեոս կաթողիկոսը ոչ միայն կտրուկ մերժեց «ռեֆորմի»խնդիրը, այլև սինոդի հավանությամբ դիմեց ռուսական իշխանություններին՝ «Հյուսիսափայլի» հրատարակությունն արգելելու համար: Հայ ավետարանական պատմագետները հավատում են, որ եթե հայոց Պատրիարքարանը ցույց տար հանդուրժող կեցվածք, ապա չէր ստեղծվի այն կացությունը, որ բարեկարգության հետամուտ եկեղեցու անդամները ստիպված լինեին անջատվել Մայր եկեղեցուց: Սակայն հեղինակների մեծ մասը և իրավամբ, մերժում է այդ տեսակետը: Հայ առաքելական եկեղեցու և հայ ազգի մեջ գոյություն ունի սերտ հարաբերություն, որը բոլորովին անհավանական է դարձնում, որ «օտար և ներմուծված» կրոնական հավատքը համարվեր նախընտրելի՝ հայ առաքելական եկեղեցու համեմատությամբ: Հայ եկեղեցին ավանդական հավատից նվազագույն շեղումն իսկ կդիտարկեր որպես «դաւաճանություն եւ սպառնալիք»[321] :

Այսպիսի կեցվածքը համապատասխանում էր հայ եկեղեցու ազգապահպան գործառույթին: Ուրիշ հարց է արդեն, որ բողոքականության տարածման պատճառներից մեկն էլ, անշուշտ, պետք է որոնել Հայ Առաքելական եկեղեցու որոշ թուլության մեջ:

«Հայ եկեղեցին իր հիմերը հաստատ չի պահեց հապա՝ իր կղերին նվիրումով աստուածատուր իր կոչումին: Այդ նուիրումն ալ սրտին հետ կապուած է եւ ոչ թէ մտքին հետ: Ասոնք /միսիոներները-Ս.Գ./ իրենց գիտցածովը չէին պարծենար, հապա՝ իրենց սիրովը եւ իրենց հոգիին լոյսովը: Չէին կրնար քարոզել, բայց իրենց ներկայութեամբը և աղոթքովը զօրութեան մատակարարներ էին: Շրջուն Աւետարաններ էին»,-գրում է

[320] Լեո, Երկերի ժողովածու, հ.VI, Երևան, 1966, էջ 117:
[321] Ատանալեան Կ., նշվ. աշխ., էջ 106-108:

բողոքականությամբ խանդավառ գործիչներից մեկը՝ չթաքցնելով իր դավանական ծայրահեղությունները[322]:

«Եկեղեցին իր նուիրապետութեան հեղինակութեան դէմ իր յարգանքը կորսնցուցեր է, ի մէջ այլ պատճառներու, նաև անոր համար, որ անոնք այդ հեղինակութիւնը այլևս չեն արժեցներ>>[323] ,-եզրափակում է նույն հեղինակը՝ ճգնելով հիմնավորել բողոքականության տարածումը հայերի մեջ:

Այս հարցի շուրջ հետաքրքիր են Ա.Պետիկյանի մտորումները.

«Եթէ պատմական տուեալներու վրայ պիտի հաստատենք մեր դատաստանը, ուրեմն ստիպուած ենք կրօնական բաժանման պատասխանատուութիւնը ՝ առնուազն գերակշիռ չափով դնել ոչ թէ օտար միսիոնարներու վրայ կամ Բողոքականներու վրայ, հապա՝ օրուան եկեղեցական պետերուն վրայ, որոնք դժբաղդաբար պակաս գտնուեցան հեռատես եւ խոհական իմաստութեան մէջ, եւ անարդարանալի մոլեռանդութեամբ դիտեցին, դատեցին եւ գործեցին>>[324]:

Դիպուկ է ասված. «Ամէն բան դուրսէն, արտաքին աշխարհէն սպասող թոյլ ու անչափահաս ազգերը փոխանակ իրենց ձախողութեանց պատճառները քչիկ մըն ալ իրենց ծոցին մէջ որոնելու, ճակատագրական մեղկութեամբ մը անձնատուր կըլլան կրաւորականութեան, եւ կը քշուին արտաքին ազդակներու հոսանքներէն: Կը մնան միշտ ալ դժբաղդ ու դժգոհ>>[325]:Այնուհետև հեղինակը զարգացնում է այս միտքը՝ փորձելով ցույց տալ, որ մեր ազգային խնդիրների համար պատասխանատվության իրենց բաժինն ունեն նաև ներքին թշնամիները: Նա գրում է,- << Ուր տեսնուած է, որ վատառողջ մարմին մը կարենայ յաղթական դուրս գալ յարաբերական պայքարի մէջ: Ուր տեսնուած է, որ ցեցակեր միջուկ ունեցող մինչեւ իսկ հաստատուն ծառ մը՝ կարենայ դիմակայել փոթորիկին»[326]:

Ասվածի մասին է փաստում, նաև Մոսկվայի հայոց եկեղեցիների միաբան. Էմ. քահ. Նազարյանցի հոդվածը քահանաների նյութապաշտության,պաշտոնասիրության և այլ բացասական հակումների մասին, ուր նա գրում է .« Եկեղեցին բոլորովին այլ ասպարեզ

---

[322] ՀԱԱ, ֆ. 1291, ց.1, գործ 592 , թ.4:
[323] Նույն տեղում:
[324] ՀԱԱ, ֆ. 1291, ց.1, գ. 124, թ. 3:
[325] ՀԱԱ ,ֆ. 1395 , ց. 5, գ. 5, թ. 2:
[326] ՀԱԱ, ֆ. 1395, ց. 5, գ. 5, թ. 2:

է: Այնտեղ քահանան, ինչպես և արվեստագետը, բեմի վրայ է: Այնտեղ նա իր սեփական ուժով չի գործում. հասարակական կարծիքը նրա արժանիքների նեցուկն է»[327]:

Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեության ընդլայնման հարցում Ռաֆֆին նույնպես ինչ –որ չափով մեղադրում էր հայ հոգևորականներին:Նա իր հոդվածներից մեկում նշում է Մշո դաշտի վանքերից մեկի վանահոր հետ ունեցած իր երկխոսությունը, որտեղ վերջինս բողոքում է, թե ամերիկացիները քարոզում են հայերի մեջ և իրենք ոչինչ չեն կարողանում անել դրա դեմ: Ռաֆֆին կշտամբում է նրան՝ ասելով, որր մեղավորները հոգեւորականներն են, որոնք մտել են իրենց վանքերը և ապասում են, որ մեկը ծնվի կամ մյուսը մեռնի, որպեսզի իրենց հասույթի բաժինը ստանան, այն դեպքում, երբ ամերիկացի միսիոներները, գյուղից գյուղ ընկած մտնում են յուրաքանչյուր տուն և քարոզ կարդում:Ռաֆֆու կարծիքով հենց դա է եղել պատճառը, որ <<ժողովուրդը հեռացել է հայ հոգևորականներից և ընկել ամերիկացիների ազդեցության տակ»[328]:

Հատկանշական է, որ Մ. Խրիմյանն ևս գտնում էր, որ հայ հոգևորականության մեջ արմատացել են տգիտությունը և կաշառակերությունը: Խրիմյանը համոզված էր ,որ հայ ժողովրդի իրավիճակի բարեփոխումը կախված է հայ եկեղեցու բարեկարգումից [329]:

Եկեղեցականների բացթողումները, թերացումները, իրոք, կարող էին ճակատագրական նշանակություն ունենալ նրա հետևորդների նվիրվածության վրա:

Այսպիսով, Հայ Ավետարանական եկեղեցին որպես շարժում ծնունդ առավ Հայ Առաքելական եկեղեցու մեջ: Առաջին ավետարանականները բնավ մտադիր չէին խզելու իրենց կապը հայոց եկեղեցու հետ, պատահական չէ, որ այն կոչում էին մայր եկեղեցի: Այդ մասին է փաստում ժամանակի հասարակական և կրոնական գործիչ, հրապարակախոս Ա. Պետիկյանը շեշտելով՝ «Եթէ պատմական տուեալներու վրայ պիտի հաստատենք մեր դատաստանը, ուրեմն ստիպուած ենք կրօնական բաժանման պատասխանատուութիւնը՝ առնուազն գերակշիռ չափով դնել ոչ թէ օտար միսիոնարներու վրայ, կամ, բողոքականներու վրայ, հապա՝ օրուան եկեղեցական պետերուն վրայ, որոնք դժբախտաբար պակաս գտնուեցան հեռատես և խոհական

---

[327] Նույն տեղում:
[328] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 14:
[329] Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական –քաղաքական գործունեությունը,էջ 102:

իմաստութեան մէջ, եւ անարդարանալի մոլեռանդութեամբ դիտեցին, դատեցին և գործեցին»[330]:

Ա.Պետիկյանի կարծիքով հայ եկեղեցու առաջնորդները բողոքականության հանդեպ հակամարտ դիրք գրավեցին նաև այն պատճառով, որ միսիոներները մերժում էին պետության և եկեղեցու դաշնակցության գաղափարը: Նրանք պատկանում էին մի մշակույթի, ուր եկեղեցին և պետությունը լիովին անջատ էին միմյանցից: ԱՄՆ սահմանադրությունը արգելում էր պետության միջամտությունը եկեղեցական գործերին: Այդ իսկ պատճառով միսիոներների համար օտար էր հայերի մեջ գոյություն ունեցող եկեղեցի-ազգ յուրահատուկ կապը:

Նրանք չըմբռնեցին այն իրողությունը, որ Հայ Առաքելական եկեղեցին կատարում է պետության և եկեղեցու կրկնակի դեր, երբ հայ եկեղեցին կորցրեց իր աշխարհիկ լծակիցը՝ պետությունը, հանձն առավ կրոնական և աշխարհիկ զույգ պատասխանատվություն, կարևոր մի իրողություն ազգապահպանության գործում:

«Դառնալով մեր ազգային պատմութեան, անգամ մըն ալ մատնանշենք սա բացահայտ իրողութիւնը, թէ երբ մեր պետականութիւնը կորսնցուցինք կրօնական հեղինակութեան նժարը բնականաբար շատ ծանրացաւ: Ժողովուրդը բոլորովին կռթնեցաւ կղերին՝ կամ նուիրապետութեան մը հեղինակութեան վրայ: Բիրտ բացատրութեամբ, կղերը եղաւ թագաւոր: Երբ կըսենք, թէ եկեղեցին ազգային կեանքին տեւականացման հզօրագոյն ազդակը եղաւ, անվիճելի իրողութիւն է: Պետականութիւնը՝ քաղաքականէն անցաւ կրօնականին>>[331],- արդարացիորեն նշում է Ա.Պետիկյանը:

Այդ պահից ի վեր կարելի է ասել, որ այն ինչ կսպառնար հայոց եկեղեցուն՝ կսպառնար և հայ ժողովրդին: Երբ միսիոներները քաջալերեցին «դասալքումը Հայ եկեղեցուց և ավետարանականության դավանումը», դրանում Հայ Առաքելական եկեղեցին լուրջ սպառնալիք նկատեց հայոց ազգային միասնությանը: Ամերիկացի միսիոներների նպատակն էր Հայ Առաքելական եկեղեցու մեջ բարեկարգություն առաջ բերել՝ Թուրքիայում քարոզչության համար: Հայ եկեղեցին, սակայն, ցանկանում էր ընդունել ամերիկացի միսիոներների ընձեռած կրթական բարիքները՝ առանց նրանց բողոքական դրոշմ ունեցող բարեկարգության կամ ավետարանական քրիստոնեության:

---

[330] ՀԱԱ, ֆ. 1291, ց.1, գործ 124, թ. 3:
[331]ՀԱԱ, ֆ. 1291, ց.1, գ. 592, թ.1:

Առճակատումն անխուսափելի դարձավ, երբ միսիոներները սկսեցին թափանցել Հայ եկեղեցու հավատացյալների հոտից ներս:

ԱՄՆ-ը, հենվելով միսիոներների գործունեության վրա, կարողացավ հաջող մրցակցել եվրոպական պետությունների հետ: Ինչպես արևմտաեվրոպական երկրները, այնպես էլ ԱՄՆ-ը միսիոներների գործունեությունը դիտարկում էին որպես իրենց տնտեսական դիրքերի ամրապնդման միջոց, որի համար հատկացվում էին որոշակի նյութական միջոցներ: Այն, որ միսիոներական քարոզչության հիմնական զենքերը սկզբնական շրջանում ֆինանսական բնույթ ունեին, փաստում է նաև ժամանակի հայ հասարակական միտքը: Ինչպես նշում է Ռաֆֆին. <<Ամերիկյան միսիոներները, իրենց 40 տարվա գործունեության ընթացքում միլիոնավոր դոլարներ էին ծախսել, բայց երբ նրանք սկսեցին պակասեցնել իրենց հատկացումները ժողովուրդը պատգամավորներ ուղարկեց Լոնդոն,այնտեղից անգլիկեան եկեղեցու հովանավորութեան տակ մտնելու համար>>[332]:

Հիմնականում հայ բողոքականները դժգոհում էին, որ ամերիկացի միսիոներներն իրենց հատկացնում էին Ամերիկայից ստացվող մեծ գումարների միայն չնչին մասը: Նրանց հիմնած ամեն ինչ դպրոց, որբանոց, հիվանդանոց ծառայուում էին միայն բողոքականության տարածմանը, այլ ոչ թե հայ ժողովրդին[333]:

Հիմնական խնդիրն այն էր, ինչպես նշվում է <<Արարատի>> հոդվածներից մեկում, որ բողոքական հայերը կախվածություն ունեին միսիոներներից: <<Առանց միսիոներների կփակվեին գրեթե բոլոր բողոքական դպրոցները:Այսպիսով եթե որևէ քաղաքում բողոքական համայնքի և միսիոներների միջև գժտություն էր ծագում, ապա միսիոներությունը փակել էր տալիս եկեղեցին և դպրոցը>>[334]:

Այս փաստերից կարելի է եզրակացնել, որ առանց քարոզչական նպատակների միսիոներությունը մտադիր չէր բարեգործական ձեռնարկումներ կատարել հայության շրջանում՝ ելնելով զուտ մարդասիրության դիրքերից, ինչը խոստովանում էր ժամանակի միսիոներական մամուլը՝ մասնավորապես «Աւետաբերը»:

---

[332] Ռաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1895, էջ 14:
[333]«Արեւելք», 1884, թիվ 134, էջ 1:
[334]Արիստակէսեան Յ., Հայ բողոքական հասարակութիւնը եւ ամերիկյան միսիոնարք, «Արարատ» 1883, հունիսի 30, էջ 264:

Փաստերից պարզ է դառնում նաև, որ Արևմտյան Հայաստանում բողոքական միսիոներների գործունեությունը մեծապես հեշտանում էր հայկական կրթական ու բարեգործական հաստատությունների անմխիթար վիճակի, դպրոցներում տիրող հետամնաց բարքերի պատճառով: Գ.Նազիկյանը գրում է, որ 19-րդ դարի 20-ական թթ. հայերը դեռևս չունեին գիշերօթիկ դպրոցներ, որտեղ կարող էին պատսպարվել ու սովորել աղքատ երեխաները[335]:

Բնական է, որ այդ հանգամանքից օգտվում էին միսիոներները: Գնելով խոշոր կալվածքներ և բաց անելով կիրակնօրյա ու ցերեկային դպրոցներ, նրանք հավաքագրում էին բեռնակիրներին, արհեստավորներին և նրանց կարդալ ու գրել սովորեցնում, գործազուրկներին նպաստ բաժանում, որբ ու անտեր երեխաներին ընդունում գիշերօթիկ դպրոց[336]:

Նշանակություն ուներ նաև դաստիարակության մեթոդիկան, ամերիկյան բողոքականները կիրառում էին շատ ավելի առաջավոր, համոզմունքի, խղճի վրա ազդող մանկավարժական սկզբունքներ, որ հակադրում էին տերթոդիկյան մեթոդներին հավատարիմ շատ հայ դպրոցների հետամնացությանը:

<<Արեւելքի>> մեջ տեղ գտած հոդվածներից մեկը ներկայացնում է 13 տարեկան մի տղայի պատմություն, որը պատմել էր ազգային դպրոցում գոյություն ունեցող տարածված պատիժներից մեկի մասին, երբ աշակերտին այս կամ այն թերացման համար ամբողջ օրը կարող էին թողնել առանց սննդի, ինչից խուսափելու համար, նա իր գրպանում հաց էր պահում, որ աչքից հեռու կարողանա ուտել[337]:

Մինչդեռ ֆիզիկական պատժի կիիրառումը վաղուց արդեն մերժված էր եվրոպական կրթական համակարգում և բնականաբար, տեղ չուներ միսիոներական դպրոցներում:

Կարծում ենք այս մթնոլորտում պարզ է, թե ինչու եվրոպական գաղափարներով առաջնորդվող կրթական հաստատությունները սկսեցին հեղինակություն վայելել հայության շրջանում: Օսմանյան կայսրությունում հայերի կրթական դրությունը հուզել է նաև հայ հասարակության որոշ շերտերի: Դրանով մտահոգված էր նաև Մկրտիչ

---

[335] Նազիկյանի այս տեսակետն, անշուշտ, վերաբերում է Արևմտյան Հայաստանին. մինչդեռ հայերը թե Կ.Պոլսում և թե Իզմիրում ունեին գիշերօթիկ դպրոցներ:
[336] Գ.Ա.Նազիկյան., նշվ. աշխ, էջ 163:
[337] «Արեւելք», 1899, թիվ 10, մայիս 25:

Խրիմյանը, որն ուղիներ էր որոնում՝ բարելավելու ազգային դպրոցների անմխիթար վիճակը: Խրիմյանին մտահոգում էր նաև լեզվի խնդիրը: Իբրև հոգևորական, նա նախապատվությունը տալիս էր գրաբարին, բայց իբրև հասարակական գործիչ, գտնում էր, որ ամսագրերը և պարբերական հրատարակությունները պետք է լինեն աշխարհաբար լեզվով[338]:

Այս հարցում ամերիկացի միսիոներների գործունեությունը համընկնում էր Խրիմյանի տեսակետներին: Եթե ամերիկացիները, հաստատվելով Օսմանյան կայսրությունում, զբաղվեին միայն կրթական գործունեությամբ հասարակությունը նրանց շատ ջերմ կընդուներ: Մինչդեռ նրանց գործունեության հիմքում թաքնված էր բողոքականության տարածումը:

Իհարկե միսիոներների շնորհիվ հայ ժողովուրդը հաղորդակից էր դառնում համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին, ինչը միանշանակ դրական երևույթ էր, եթե չլիներ մի հանգամանք. ամերիկացի միսիոներների ձեռնարկած բոլոր այս միջոցառումների նպատակն էր, որքան հնարավոր է, մեծ թվով հայերի բողոքական դարձնելը: Դա հանգեցնում էր հասարակության պառակտմանը. օսմանյան իշխանությունները թշնամաբար էին վերաբերվում հավատափոխ հայերին՝ նրանց թիկունքում տեսնելով մեծ տերություններին, որոնք օգտագործում էին ցանկացած պատրվակ՝ միջամտելու օսմանյան կայսրության ներքին գործերին;

<<Արարատը>>, գրելով միսիոներական բարեգործությունների մասին, նշում է. <<Կ.Պոլսից լուրեր էին շրջում, թե իբր ամերիկացի միսիոներները ջարդերից /ինկատի ունի 1895թ. կոտորածները-Ս.Գ./տուժվածներին օգնություն ցույց տալու հետ մեկտեղ՝ նրանց ստիպում էին բողոքականություն ընդունել>>[339]:

Հայ մտավորականները մշտապես պայքար են մղել և կաթոլիկ և բողոքական միսիոներների դեմ: Իրենց հոդվածներում և գրքերում նրանք մերկացրել են Աստծո <<ճշմարիտ խոսք>> քարոզողներին: <<Մշակը>> գրում է,-<<Փորձը ցույց տվեց այն հույսի սխալմունքը, թե հայը կարող է կրոնափոխության վաճառքով գնել յուր հարստությունը: Թե մի հռոմեացի փափազ, ամերիկացի միսիոներ և այս կամ այն ֆրանսիական, անգլիական հյուպատոսներ, դեսպանները կարող էին մի օտար

---

[338] Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 54:
[339] Վարդուկեան Պ.,Միսիոնարների գործունէութիւնը Տաճկաստանում, «Արարատ», 1897, փետրվար, էջ 65:

պետության մեջ պաշտպանել նորա իրավունքները եւ կամ նոքա կնպաստեին նորա մտավոր եւ նյութական զարթմանը>>[340]:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք հայ ավետարանական եկեղեցին հին պավլիկյանների ու թոնդրակյանների հետևորդն է, ապա ըստ Մաղաքիա Օրմանյանի՝ սա մտացածին բան է, քանզի <<ծանօթ եղելութիւն մըն է, թէ Արեւելքի բողոքականութիւնը Ամերիկացի քարոզիչներու ձեռքով բերուած նէրածութիւն մըն է>>[341]:

Ավելին, հայ բողոքականությունը ավելի լավ հիմք ուներ, քան երբևիցե ունեցել էին հայ պավլիկյանները, քանզի հայ բողոքականներն Արևմուտքի բողոքականներից ստանում էին այն քաղաքական աջակցությունը, որը պակասում էր պավլիկյաններին:

Միսիոներների խնդիրն էր զբաղվել բարեգործությամբ, Ավետարանի հրատարակչությամբ և տարածմամբ, բժշկական և ուսումնական հաստատությունների հիմնմամբ, ամերիկյան արժեքների քարոզչությամբ՝ ձգտելով կայսրության ճնշված խավերին ապացուցել, որ ԱՄՆ-ը, շնորհիվ բողոքականության, հանդիսանում է հզոր և միաժամանակ հումանիստական երկիր, որը պայքարում է կայսրության ժողովուրդների կենսավիճակի բարելավման և անգրագիտության վերացման համար: Այդ գործունեությամբ ամերիկյան կառավարությունը հող էր նախապատրաստում ամերիկյան էքսպանսիայի համար:[342]

Ըստ պատմաբան Ա.Պատրիկի <<Միսիոներական շարժմանը ընթացք տվող քաղաքական գործոնները այսպիսով հասան հաջողության իրենց բուն նպատակի մեջ՝ անգլերեն լեզվի տարածումը և անգլո-ամերիկյան ազդեցության գոտու ստեղծումը Մերձավոր Արևելքում>>[343]:

Այդ մասին է փաստում նաև պատմաբան Ա. Պատրիկը նշելով, որ << Ամերիկյան կառավարությունը, հենվելով միսիոներական գործունեության և քաղաքական ոլորտներում իր հաջուղությունների վրա, ձեռնամուխ եղավ իր հիմնական նպատակների իրագործմանը՝ այն է ներդրումների և տնտեսական էքսպանսիայի

---

[340] Պողոսյան Հ.Մ., նշվ. աշխ., էջ 222:
[341] Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 237:
[342] http://news.am/arm/news/98168.html.
[343] Պատրիկ Ա.Ն., Պատմագիրք-յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հ. Բ, Նիւ Ճըրզի, 1983, էջ 540:

քաղաքականությանը: Հենվելով իր տնտեսական հզորության վրա՝ ԱՄՆ-ը ցանկանում էր թափանցել Թուրքիայի տնտեսության մեջ>>[344]:

Երիտթուրքական հեղափոխությունը և 1908թ. սահմանադրության հռչակումը նոր հեռանկարներ ուրվագծեց արևմուտքի երկրների՝ Թուրքիա ներթափանցման համար: Թուրքական բազմազգ բուրժուազիան ի զորու չէր մրցակցել նրանց հետ և աստիճանաբար զիջում էր իր դիրքերը, որին նպաստում էր նաև երիտթուրքերի դիրքորոշումն ազգային հարցերի վերաբերյալ: Հիմնական բնագավառը, որտեղ ամերիկացիները հաջողություններ գրանցեցին, առևտուրն էր[345]: Միսիոներական գործունեության ծավալման համար միջոցների գլխավոր աղբյուրն էին ամերիկյան առևտրական կազմակերպությունների ներդրումները, որոնց համար միսիոներները հաճախ հանդիսանում էին նաև առևտրական գործակալներ՝ այդ գործունեության մեջ ներգրավելով տեղական բնակչության ներկայացուցիչների: Ամերիկաթուրքական առևտրի ընդլայնման ուղղությամբ մեծ ջանքեր էր գործադրում <<Մերձավոր Արևելքում ամերիկյան առևտրի պալատը>>, որը ստեղծվել էր 1911թ.[346]: Սկզբնական շրջանում բողոքական միսիոներների գործունեությունն ընդգրկում էր հիմնականում հայկական բնակչությունը, սակայն շուտով այն սկսեց տարածվել կայսրության մյուս քրիստոնյա ազգերի շրջանում: ԱՄՆ-ի կառավարող շրջաններն իրենց ողջ գործունեության ընթացքում, հաշվի առնելով հայերի սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմանները, օգտագործեցին հայերի նկատմամբ «հոգատարության գործոնը>>:

---

[344] Նույն տեղում:
[345] Dwight H.O.,Constantinople and its Problems, New York,1901,p.77.
[346] Լեսլի Ա.Դևիս, Սպանդի նահանգ, Երևան, 2001, էջ 52:

3.2. ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Անդրադառնալով հայ հասարակական մտքի կողմից միսիոներների գործունեությանը տրված գնահատականներին, անհրաժեշտ է առանձնացնել երկու օրինաչափություն, նախ այն, որ միսիոներական գործունեության վերաբերյալ ինչպես ժամանակի հայ մամուլում՝ <<Մշակ>>,<<Հովիտ>>,<<Արարատ>>,<<Արևելք>> և այլն, այնպես էլ առանձին հայ գործիչների աշխատություններում հանդիպող դրական անդրադարձները վերաբերում են միսիոներական գործունեության բացառապես կրթական և բարեգործական ձեռնարկումներին՝միաժամանակ չբացառելով դրանց հիմքում ընկած հիմնական նպատակները: Քիչ չեն նաև առանձին անհատ գործիչների վերաբերյալ դրվատանքի խոսքերը, որոնց մարդասիրական դիրքորոշումը, իհարկե, չպետք է նույնացնել միսիոներության ընդհանուր բնութագրի հետ: Միևնույն ժամանակ քննադատական մոտեցումներն ու բացասական գնահատականները հիմնականում վերաբերում են միսիոներական աշխատանքի քարոզչական կողմին, այն գործելաոճին, մեթոդներին և քարոզչական գործիքներին, որոնք օգտագործվել են միսիոներների կողմից իրենց հետևորդների շարքերն ընդլայնելու նպատակով: Արևմտյան Հայաստանում իրենց գործունեության առաջին իսկ օրերից միսիոներները որդեգրեցին քրիստոնեական դաստիարակության միջոցով ավետարանականությունը քարոզելու գործելակերպը: Ավետարան քարոզելու, Աստվածաշունչը թարգմանելու և հրատարակչական ու բժշկական ծառայություն մատուցելու իրենց հանձնառությունից անկախ, նրանք ձեռնարկեցին կրթական ընդարձակ գործունեություն: Իրենց Բոսթոնի վարչական կենտրոնից ստացած պատվերի համաձայն՝ «բարձրորակ կրթական դրություն մը տրամադրելի ըլլալու է ժողովրդին…միսիոնարը ինքզինք շրջապատելու է դպրոցներու ցանցով մը, այնքան, որքան ինք կարող ըլլայ ազդու կերպով վերահսկելու»[347] :

Այս ծրագիրն իրագործվեց բազմաթիվ դպրոցների հիմնադրմամբ, որոնք մեծ դեր խաղացին Օսմանյան կայսրությունում ապրող հայերի կյանքում: Միսիոներական դպրոցները, հակառակ սկզբնական շրջանի խոչընդոտներին, նոր ուղղություն բացեցին հայ ժողովրդի կրթական իրականության մեջ: 1832թ. Ստամբուլում բացելով Աղջիկների

---

[347] Թութիկյան Վ., Հայ Ավետարանական եկեղեցի (1846-1996), Դետրոյթ, 1996, էջ 7:

ամերիկյան քոլեջը, միսիոներները դարձան իգական սեռի դաստիարակության արևմտյան դպրոցի հեղինակ- ռահվիրաները Միջին Արևելքում: Մինչդեռ ,ինչպես արդարացիորեն նշում է <<Արարատը>>,- <<դեռևս մեծ լուսավորիչ Խ.Աբովյանը, իսկ այնուհետև Մ.Նալբանդյանն ու Ստ.Նազարյանցը պահանջում էին «նոր լեզու ու նոր աշխարհաբար,մարդասեր դաստիարակություն, ազատություն կնոջ համար, աղջիկների և տղաների խառը կրթություն»[348]:

Բողոքական քարոզիչների կրթական գործունեության մասին ականավոր պատմաբան Լեոն գրում է. «...լոկ կրօնական նպատակ ունեցող եւրոպացի բողոքականները տալիս էին հայ մատաղ սերնդին մի կրթութիւն, որ կրօնական լինելով հանդերձ՝ ներկայացնում էր դաստիարակչական շատ գեղեցիկ նորոյթ» [349]:

Իրենց գործունեության ընթացքում ամերիկյան միսիոներները երկար ժամանակ ականատես եղան հոգեբանական, քաղաքական, կրթական և կրոնական այն ողբալի պայմաններին, որոնց ենթակա էին հայերը Օսմանյան կայսրության մեջ[350]:

Նրանք հասկացան, որ քաղաքական ինքնուրույն կյանքի կորստից հետո քրիստոնյա հայերը մեկուսացած և ճնշված էին իրենց դրացի մահմեդականների կողմից՝ բռնության տակ պարտադրված լինելով հարմարվելու իրենց համար խորթ կենցաղին՝ պարզապես ապահովելու համար իրենց գոյությունը վայրագ պայմաններում:

<<Միսիոնարներուն ներկայութիւնը, յատկապէս նահանգային կեդրոններուն մէջ զսպած է թուրք կառավարութեան ջարդարար ծրագրերը: Այն ինչ որ հայ ազգային շրջանակը չէր կրնար ընել, եւ այն՝ինչ որ դեսպանական շրջանակները չէին ուզեր ընել, միսիոնարներ կընէին եւ միսիոնարներ հակառակ իրենց վայելած քաղաքական հովանաւորութեան՝ ավելի շուտ եւ աւելի շատ ծառայած էին Աստուծոյն եւ իրենց խղճին՝ քան այս կամ այն պետությանը>>,- ոչ առանց չափազանցության, գրում է բողոքականության ջատագով հեղինակը[351]:

Ոչ բոլոր միսիոներներն էին, որոնք տրվել էին անվերապահ մարդասիրությանը և կարող էին այդչափ քաղաքական ազդեցություն ունենալ թուրքական իշխանությունների վրա:

---

[348] «Անահիտ», 1930, Ա տարի, թիւ 5, էջ 100:
[349] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 90:
[350] Dwight H.O.,The Centennial History of the Armenian Bible Society, New York, 1919, p. 502.
[351] Կ.Ատանալեան, նշվ. աշխ., էջ 21:

Այս պարագայում խոսքը կարող էր վերաբերել միայն միսիոներների մասնակիորեն, սահմանափակ դրական ազդեցությանը, որը չի կարելի անգիտանալ: Նրանց գործունեության գնահատականը շատ ավելի անկողմնակալ է ուրվագծում Լ. Չորմիսյանը,- «Լուծուած էին ազգային մարմինները, թաղականութիւնները, հոգաբարձութիւնները, փակուած էին դպրոցները: Շատ մը եկեղեցիներ հրդեհուած էին, շատերը բռնի իսլամացած: Եւրոպական եւ ամերիկեան նպաստամատոյց ընկերակցութիւնները որբանոցներ էին հիմնում, այրիներու ապաստարաններ եւ աշխատանոցներ, հիւանդանոցներ ու դարմանատուններ հաստատում: Այդ օգնութիւնը բոլորովին անշահախնդիր եւ քրիստոնէական ոգիէն թելադրուած արարք մը չէր անշուշտ, բայց նոյնիսկ իր թաքուն դիտաւորութիւններով շատ բարերար ազդեցութիւն գործեց ոչ միայն զուտ նիւթական, տնտեսական, ֆիզիքական թշւառութիւններու մեղմացումին իմաստով>>[352],-գրում է նա:

Ե.Քասունին ևս դրականորեն է գնահատում բողոքականների կրթական լուման:

<<Իրենց նախաձեռնած կրթական հաստատությունների միջոցով՝ ամերիկացի միսիոներները նպաստեցին հայերի կրթական գործին>>,- նկատում է նա: <<Հազարավոր հայ երիտասարդներ իրենց բարձրագույն ուսումը ստացան ամերիկացի միսիոներների բացած բարձրագույն ուսումնական հաստատությունների մեջ: Բարձրագույն ուսումը հասանելի դարձավ նույնիսկ իգական սեռի համար: Միսիոներները պատրաստեցին զգալի թվով ուսյալ կանայք, որոնք գրավեցին իրենց արժանի դիրքը հայ համայնքի մեջ:Արդյունքում 19-րդ դարի վերջում հայկական նախակրթարանների ուսուցիչների մի մասը իգական սեռի շրջանավարտներ և թեմավարտներ էին, որոնք ուսանել էին ամերիկյան միսիոներական դպրոցներում ու ճեմարաններում>>[353] :

Բացի այդ կա տեսակետ, որ միսիոներական կրթօջախները միշտ չէ, որ հայ երիտասարդությանը հեռացնում էին իրենց ազգային ինքնությունից: Այսպես «Արձագանքը» գրում է. «Ուսում տարածելով հայերի մէջ, կրթելով հայ պատանիներին՝ միսիօնարները չեն պահանջում հայերից հեռանալ իրենց մայրենի եկեղեցուց, այդ թողնուած է նորանց ազատ կամքին. ինձ պատահել է հանդիպել կօլլէժներում կրթուած

---

[352] Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, 1878-1908, էջ 456:
[353] Քասունի Ե., Բողոքականութեան մշակութային ծառայութիւնները հայ ազգին, էջ 9-12:

պարոնների, որոնք անկախ գործերի տէր լինելով,շատ լուրջ կերպով են ըմբռնում հայրենիքի կարիքները և գնահատում հայ եկեղեցու պատմական նշանակութիւնը հայերի համար.նոյն իսկ բողոքական հայ քարոզիչները իրանց քարոզներում ոգեւորութեամբ եւ մեծ ակնածութեամբ են յիշում Ս. Գ.Լուսաւորչին՝սրբացնելով նրա գործերը:Միսիոնարներ, ճիշտ է, կարեկցել են ճնշուած եւ հալածուած հայերին, բայց հակակառավարական ագիտացիայից միշտ հեռու են կացել, այդ կը վնասէր նորանց գործունէութեանը»[354]:

Այնուհետև <<Արձագանքը>> զարգացնում է վերոնշյալ միտքը գրելով.<<Ամերիկացի միսիոներներն իրենց մշտական օժանդակություններով գնահատելի ծառայություն մատուցեցին կարիքավոր հայերին: Իրենց որբանոցների, հիվանդանոցների եւ ծերանոցների միջոցով նրանք հոգացին շատերի ֆիզիկական կարիքները: «Այս ծառայությունները միջոցներ էին Աւետարանը քարոզելու և իրենց առաքելության հոգեւոր նպատակներն իրականացնելու համար: Անհաշիվ կյանքեր փրկվեցին՝ շնորհիվ միսիոներ բժիշկների և հիվանդապահուհիների օգնության>>[355]:

Միսիոներների իրականացրած աշխատանքների վերաբերյալ «Արեւելքը» գրում էր, որ գավառների ծանր վիճակը նույնպես առիթ դարձավ, որ օտարները «հանուն մարդասիրության» տեղական արհեստների գծով արհեստանոցներ բացեին՝ չքավոր անհատներին զբաղմունք հայթայթելու համար, որի արդյունքում նրանց նպաստներ էին տրամադրվում: Թշվառներին նպաստ տրամադրելու այս միջոցը ամենից պարկեշտ ձևն էր, որը թույլ էր տալիս առանց ժողովրդին ստորացնելու՝ օգնություն տրամադրել[356]:

<<Արեւելքն>> անդրադառնում է նաև միսիոներական որբանոցներին, որոնք դրական արձագանք են գտել ժամանակի հայ հասարակական մտքի մեջ: Այստեղ նշվում է, որ Խարբերդի բողոքական միսիոներությունը նույն քաղաքի մեջ խնամում է 401 որբ, 226 տղա և 175 աղջիկ՝ 7 որբանոցների մեջ: Յուրաքանչյուր որբանոց հանձնված է վստահություն վայելող մի ընտանեկան խմբակի: Ս.Կարապետ թաղի որբանոցի խնամածուն է Պ.Պետրոս Պօզոյանը, որն իր տիկնոջ հետ խնամում է 62 որբեր: Ինչպես նշում է <<Արեւելքը>>, <<Այս հաստատությունն այցելողը, տեսնելով որբանոցի

[354]«Արձագանք», 1895, մարտի 12:
[355]Նույն տեղում:
[356] «Արեւելք», 1899, մայիսի 28-9 հունիս:

մաքրությունը, բարեկարգությունը, ճաշակավոր կահավորումը, որբերի զվարթ դեմքն ու առողջությունը ուրախութեամբ պիտի զգայ թէ անոնք կը վայելեն ճշմարիտ ծնողքի մը խնամոտ հոգատարութիւնը>>[357]:

Պատահական չէ, որ հաճախ միսիոներները և ավետարանական հեղինակներն իրենց աշխատություններում միակողմանի և միսիոներությունն իդեալականացնող կարծիքներ են առաջ քաշում, որոնք փորձում են միայն դրական տեսանկյունից ներկայացնել միսիոներական գործունեությունը: Այդպիսի մոտեցումներ կարելի գտնել միսիոներ Ճ. Ռիքթըրի «Մերձավոր Արեւելքի մեջ բողոքական առաքելութիւններու պատմութիւնը» աշխատության մեջ, որտեղ նա ներկայացնում է, թե ինչպես էին միսիներների միջոցով ուտելիք հայթաթվում կոտորածները վերապրածների համար և ապաստարաններ տրամադրվում իսլամական հարեմներից փախած աղջիկների համար: Նրա վկայությամբ Նպաստամատույցի գնահատելի ծառայությունը, սակայն, 132000 հայ մանուկների ապաստան հայթայթելը և դաստիարակությունն էր, որոնցից շատերը դարձան կրթված և հարգված մարդիկ[358]:

Միսիոներական աշխատանքի վերաբերյալ ժամանակի հայ հասարակական մտքում տեղ գտած դրական արձագանքների մի մասն էլ վերաբերում է միսիոներների հրատարակչական գործունեությանը: Կ.Պոլսում և Իզմիրում հիմնած իրենց տպարանների շնորհիվ նրանք հրատարակեցին ոչ միայն կրոնական գրականություն, այլև՝ ճանաչողական և ուսուցողական բնույթի մեծաթիվ գրականություն: Ընդհանուր առմամբ, միսիոներները հրատարակեցին նաև քերականության գրքեր, մեկնաբանություններ, կրոնական հատորներ, ինչպես նաև դաստիարակչական գրքույկներ հայերենով: Միսիոներների տպարանները մեծ ծառայություն մատուցեցին արդի հայերենի զարգացմանը՝ ժողովրդական լեզվով հրատարակություններ լույս ընծայելով: Թեև կային մի շարք պահպանողական տարրեր, որոնք կտրուկ հակառակվում էին գրաբարի կիրառության սահմանափակմանը, սակայն կային նաև առաջադեմ մտավորականներ, որոնք քաջալերում էին գրական լեզվի դեմոկրատացմանը: Մեծ է Վեր. Իլայս Ռիկզի դերը Աստվածաշնչի թարգմանության գործում: <<Թարգմանութեան գործին մէջ գլխաւոր դերը լեզուաբանը կը կատարէ, իսկ

---

[357] «Արեւելք», 1899, մայիսի 28-9հունիս:
[358] Նույն տեղում:

հեղինակութեանց մէջ՝գրագէտը…Բանասիրությունը չի կրնար զլանալ տաղանդին պսակը այնպիսի խոնարհամիտ լեզուաբանի մը, որ թեեւ շատերուն անծանոթ մնաց, բայց որեւէ օտար հայագետի մը աւելի մեր ազգային կեանքին խառնուեցաւ>>,-նշում է ժամանակի պատմաբաններից մեկը[359]:

Աստուածաշնչի աշխարհաբար թարգմանության, լեզվի առումով կատարած դաստիարակչական դերի մասին իր գնահատականն է տալիս <<Մասիս>> շաբաթերթի խմբագիր Կ.Ություճյանը /1823-1904/, գրելով .<<Աշխարհաբար Աստուածաշունչը ամեն օր կարդացուելով պիտի աւանդէ մեր ժողովրդեան, թէ ինչ կերպով պէտք է գրէ եւ խօսի մայրենի լեզուն>>[360]:

Գրականագետ Հ.Գազանճյանը, խոսելով միսիոներների հրատարակչական գործունեության մասին գրում է, որ Բողոքական միսիոներները դեռևս 1839թ. սկսել էին հրատարակել Իզմիրի <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> թերթը մաքուր աշխարհաբարով, որը տեղափոխվեց Կ.Պոլիս և վերանվանվեց <<Ավետաբերի>>[361]:

Այդ մասին Հ.Աճառյանը գրում է. <<Առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն է դարձնում Զմիւռնիոյ անդրանիկ հայ թերթը՝<<Շտեմարանը>>, որ ամերիկյան միսիոնարների հրատարակութիւնն էր: Այսպես, ուրեմն, բողոքական միսիոնարները դուրս են գալիս մեր մէջ իբրեւ աշխարհաբար լեզուի կանոնաւորութեան ու կոկուելուն առաջին պատճառ. եւ նորանցից յետոյ սկսում են օրից օր շատանալ հայ թերթերը ՝աշխատելով հետզհետէ մաքրել ու պատրաստել աշխարհիկ նոր գրական լեզուն>>[362]:

Միսիոներների հրատարակչական գործունեության շնորհիվ արևմտահայության շրջանում նոր զարգացում ապրող ազատամիտ գաղափարների մասին է խոսում Ճ. Ռիքթերը Մերձավոր Արևելքում բողոքական առաքելությունների պատմությանը նվիրված իր աշխատության մեջ:

<<Այս իրողութիւնը տպավորեց հայերին,-գրում է նա,- որոնք իրենց ողջ պատմութեան ընթացքում փայփայում էին ազատութեան գաղափարը՝ նոյնիսկ իրենց կեանքի գնով: Միսիոներները անվերապահօրէն քննադատում էին հայոց

---

[359] Յովհաննէսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 50-51:
[360] «Մասիս», 1898, 28 մարտի, էջ 37:
[361]Գազանճեան Յ.,Պատմութիւն հայ գրականութեան,Ա հատոր, էջ 153-154:
[362] Աճառեան Հ.,Պատմութիւն Հայոց Նոր Գրականութեան, Նոր-Նախիջեւան, 1912, էջ 22-23:

քաղաքացիական իրաւունքների ոտնահարումները թուրքական կառավարութեան կողմից եւ յաճախակի կոչ էին անում արեւմտյան տերութիւններին միջամտելու ի նպաստ հայերի>>[363]:

Մեր կարծիքով, Հայ ավետարանական շարժումը կարող էր որդեգրել լավագույնը հայ առաքելական և բողոքական ավետարանական ժառանգություններից՝ չհրաժարվլով <<Մայր>> եկեղեցու մի շարք արժեքավոր սովորություններից, այն պետք է պահպաներ հայ առաքելական պաշտամունքը, քանի որ ծիսակատարությունների խոշոր բաժինը աստվածաշնչական հիմք ուներ: Հայ ավետարանական առաջնորդությունը պետք է ավելի սերտ շփման մեջ դներ իր հետևորդներին, ուսանողներին, երիտասարդներին Հայ Առաքելական եկեղեցու գրականության, ծիսակատարության, վարդապետության հետ: Բողոքական աստվածաբանության ուսուցումների կողքին, ինչպես Լյութերի, Կալվինի տեսություններն էին, հայ ավետարանականները պետք է նույնչափ կարեւորություն տային Նարեկացու, Լամբրոնացու, Շնորհալու կրոնական հավատամքին:

Անժխտելի է, որ Հայ ավետարանական եկեղեցին տկարացրեց հայ ժողովրդի միասնականությունը: <<Զիրար ամբաստանելու եւ ամբողջ մեղադրանքը հակառակորդին վերագրելու խաղը պատճառ դարձավ անպատմելի դժբախտութիւններու, նախապաշարումներու եւ վիրաւորանքներու երկու կողմերի համար ալ, այս միակ եւ փոքր ազգին մէջ>>,- գրում է ավետարանական գործիչ Վ. Թութիկյանը [364]:

Մի հայտնի չափով հայրենի եկեղեցու գործիչներին էր կշտամբում, դեռևս, 1860-ական թթ. Հ.Սվաճյանը, երբ կրոնական պառակտումների մեջ նկատում էր նրանց ինքնագլխությունն ու անտարբերությունը ժողովրդին նախնյաց հավատին ամուր պահելու նկատմամբ:

<<Կը տեսնենք, -գրում է նա,-որ խումբ –խումբ հայեր, Արարատեան եկեղեցւոյ հարազատ որդոցմէն, կը թողուն ի բաց կերթան իրենց մոր գիրկէն ու Հռոմէական կամ բողոքական կըլլան:Եւ ով է պատճառ այս կրօնական տարագնացութեանց: Ոչ ապաքէն մեր վարդապետներն են, ոչ ապաքէն այդ վարդապետները անպատիժ կը մնան մինչեւ

---

[363] Ռիքթըր Ճ., Մերձավոր Արեւելքի մեջ բողոքական առաքելութիւններու պատմութիւնը, էջ 159-160:
[364] Թութիկյան Վ., նշվ. աշխ., էջ 131:

այսօր…Որովհետեւ ժողովուրդը չունի որեւէ իշխանութիւն անոնց վրայ, որովհետեւ եկեղեցականները պատասխանատու չեն ազգին,այլ իրարու միայն>>[365]:

Զարմանալին այն է, որ հակառակորդները ընկրկում էին Քրիստոսի սիրո միջոցով միավորվելու հնարավորության առաջ, սակայն, օսմանյան իշխանությունների սպառնալիքը միավորեց նրանց, իրոք, 1895-96թթ. ջարդերը, 1909թ. կոտորածները պարտադրեցին, որպեսզի հայ առաքելական և ավետարանական հայերն անդրադառնան այն իրողությանը, որ թուրքի համար իրենք բոլորն էլ ուղղակի հայ են՝ անկախ իրենց դավանական տարբերություններից: Մեր համոզմամբ, ավետարանականների սխալը նաև այն էր, որ ընտրեցին մեկուսացման ուղին: Այն կրելով մեղադրանք, նվաստացում, հալածանքներ, թշնամական զգացումներ, աստիճանաբար մեկուսացրեց իրեն հայ առաքելականներից:

Ինչպես իրավամբ նշում է ժամանակի հասարակական գործիր Վ. Տերոյանը. <<Ընդհանուր առմամբ, բարեգործություն իրականացնող որևէ հասարակական, կրոնական կազմակերպություն, պետք է հեռու մնա այս կամ այն ժողովրդին դավանափոխ անելուց, կամ այս կամ այն գաղափարախոսությունը պարտադրելուց, իսկ ամերիկացի քարոզիչների գործունեության արդյունքում որոշ թվով հայեր հրաժարվում են առաքելական եկեղեցուց և սկսում են դավանել բողոքականություն>>[366]:

Այսպես օրինակ, Վ. Տերոյանը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ բարեգործության դիմակի ներքո թաքնված էին հաճախ հոգեորսներ, որոնք օգտվելով բնակչության ծանր վիճակից, նրանց մղում էին բողոքականության գիրկը: Նմանատիպ փաստն առաջին անգամ արձանագրվել էր նաև 1915թ. աշնանը, երբ Հայաստան եկավ պատվելի Գրահամ Ուիլսոնը: Վերջինս, օգտվելով հայ ժողովրդի համար ստեղծված բացառիկ ծանր պայմաններից, իրականացնում էր նաև բողոքական քարոզչություն՝ օգնություն բաժանելիս նախապատվություն տալով բողոքական հայերին:Ակնհայտ է, որ շատ քիչ թվով միսիոներներ կային, որոնք հեռու էին դավանափոխ անելու գաղափարից, ինչպես օրինակ դանիացի միսիոներուհի Քարրեն

[365] Նույն տեղում:
[366] Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Երևան, 2006, էջ 61:

Եպպեն, և առաջնայինը համարում էին բարեգործությունը, այլ ոչ թե դավանափոխությունը[367]:

Այդպիսի նվիրյալների մասին է գրում ժամանակի հասարակական հրապարակախոս Ա.Պետիկյանը. <<Շնորհակալ ենք, սակայն, այն մարդերէն, որոնք իրենց տուածին կը միացնեն իրենց սերը և շահագրգռութիւնը այն նպատակներուն համար, որոնց հաշուոյն կուտան, ինչ որ կուտան: Ումանք հազար կուտան, կամ տասը հազար, եւ տուածնին համրուած, հաշուուած նիւթն է, սոսկ տոլարը—իսկ ուրիշներ ալ նորէն հազար կուտան կամ տասը հազար, բայց հետը նաեւ՝ իրենց սիրտը >>[368]:

Հայկական բուրժուազիան նույնպես զովաբանել է միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը, և առիթը բաց չի թողել նրանց գործի մարդկայնական ու մարդասիրական նպատակների մասին ներբողներ կարդալու: Իսկ երբ որ գործի բերումով առաջացած դժվարությունները մեծ չափերի են հասել, ստացվել է հաղթություն կամ պարտություն, այն ժամանակ արդեն միսիոները հերոսացել է կամ առաքելական դարաշրջանի մարտիրոսների ու նահատակների շարքը դասվել: Չէ որ միսիոներները, ճիշտ ինչպես նախնադարյան առաքյալները, <<Աստուծո խոսք>> կամ <<կենդանի խոսք>> էին բերում մոլորության, տգիտության, թշվառության և բարբարոսության մեջ թաղված ժողովուրդներին: Այդ սրբազան նպատակն իրականացնելու համար նրանք թողնում էին Եվրոպայի և Ամերիկայի իրենց հանգիստ կյանքը, կուլտուրական միջավայրը և դրա հետ կապված ամեն տեսակի վայելքները, ու փոխարենը կամավոր կերպով մտնում էին դժվարին մի ասպարեզ[369]:

Այսպիսով, փորձելով գնահատական տալ ամերիկյան միսիոներների գործունեությանը արևմտահայության շրջանում, Ե.Քասունին, փորձում է ուշադրության հրավիրել նաև այն փաստի վրա, որ միսիոներներն ազատ չէին իրենց գործունեության մեջ: <<Անժխտելի է հատկապես ամերիկյան պորտի կենտրոնական մարմնի միսիոներական դաշտի վրա ունեցած միահեծան իշխանությունը, որ գալիս էր երկու պատճառաբանությամբ՝ առաջին թե <<իրենք աստվածային ծրագրի մաս են կազմում >> և երկրորդ՝ <<իրենք են իրենց դրամի տերը>>. այս հանգամանքները վկայում են այն

---

[367] Նույն տեղում:
[368] ՀԱԱ, ֆ. 1291, ց. 1, գ. 530, թ. 4:
[369] Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 25-26:

իրողության մասին, որ միսիոներների անձնական նկատառումները, մարդկային հատկանիշները որոշակիորեն սահմանափակված էին Պորտի ծրագրերով>>,- գրում է նա[370]:

Պատահական չէ, որ <<Մշակում>> տեղ է գտել հետեւյալ բնորոշումը. <<Այս պատուելիները՝ որպես տեղացի եւ ժողովրդի ամեն ցաւերից տեղեակ լինելով .լաւ որս են որսել փողով .է ինչ կայ Ամերիկեան միսիոնէր ընկերութեան փողը անվերջանալի է: Շնորհիւ տեղացիների խիստ նիւթական պակասութեան, լաւ են կարողացել յաջողութիւն գտնել>>[371]:

Այդ առիթով Գ. Սրվանձտյանը գրել է. <<Այդ կեղծ բարերարները ոչ հայուն հորեղբայրն էին, ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ,որ զմեզ,իբրեւ վայրիի,պատրաստ ոչխարներու եւ պարարտ կովերու տեղ դնելով, մեր փոխարեն կուզեին խրտնացնել, հեռացնել, եւ իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցել…>>[372]:

Հիմնավոր են նաև Գ. Զոհրապի մտորումները միսիոներության վերաբերյալ: Նա գրում է,- <<Մարդասիրութեան համար չէ, որ միսիոնարները մեր որբերը կը խնամեն. մարդորսութեան եկած են մեր մէջ, մեր պապուն՝ Ս.Լուսաւորչի հաւատքէն զատելու մեր զաւակները: Նախ սա ըսեմ՝ որ մեր ժողովուրդը Լուսաւորչին լոյս հաւատքը պահպանելու համար իր ձեռքէն եկածը ըրած է միշտ: Յանցանքը մերը չէ ուրեմն եթէ կաթոլիկութիւնը կամ բողոքականութիւնը Լուսաւորչի դէմ կըլլան, չեմ անգիտեր, թէ անոնք կը ջանան օգտուիլ մեր կարեկցութեան վիճակէն.ասիկա ընդհանուր ջանքն է ամէն կրօնքներու>>[373]:

Այնուհետև Զոհրապը փորձում է զուգահեռներ անցկացնել գրելով. <<Կերեւակայեմ երբեմն ինքնիրենս, աչքի առջեւ ունենալով մեր ծանօթ մոլեռանդութիւնը, թէ ինչպես պիտի վարվէինք արդեօք եթէ երբեք դիպուածով, մենք ուրիշին կարեկից ըլալու բաղդը ունենայինք, եւ մեր կամովը, մեր վարդապետներուն հսկողութեան տակ որբանոց մը հաստատէինք, օրինակի համար, բողոքական տղաքը պատսպարելու եւ կրթելու նպատակով: Մտքէս անգամ չեմ անցներ որ կրօնական այնքան թոյլտուութիւն

---

[370] Քասունի Ե. Նշվ. աշխ., էջ 44:
[371] ՀԱԱ,ֆ. 227,ց. 1,գ. 6, թ. 23-24:
[372] Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.2, Թիֆլիս, 1898, էջ 331:
[373] «Արեւելք», 1899, թիվ 11, էջ 108:

շնորհէինք իրենց որքան մերիններրը,աղեկ կամ գէշ,կը վայելեն անոնց բացած որբանոցներուն մէջ>>[374]:

Հեղինակն իր այս հոդվածում, իհարկե, չի հերքում այն իրողությունը, որ որբանոցներ հիմնողների համար նաև ցանկալի է իրենց սաներին կրթել և դաստիարակել իրենց ուսմունքին համապատասխան,սակայն Զոհրապն այդ փաստը միանգամայն բնական է համարում:Նա առավել կարևորում է այն հանգամանքը, որ ամերիկյան որբանոցներում հայ մանուկները չեն ենթարկվում ճնշումների: Լիովին համամիտ ենք Զոհրապի եզրակացության հետ,ուր նա գալիս է այն իրողությանը, որ <<Հայ ժողովուրդը չի կրնար եւ պէտք չէ որ մոռնայ իրեն եղած բարիքը, միմիայն կրօնական խուլ մոլեռանդութենէ մը մղուած.կը պահանջեմ, որ ժամանակագրական սխալները սրբագրենք քիչ մը:Պէտք չէ մոռնալ որ, ինչպէս հարստութիւնը, անանկ ալ աղքատութիւնը իր պարտականութիւնները ունի, իր…ինչպէս ըսեմ, անխուսափելիութիւնները.Պէտք է հանդուրժել գիտնալ ասոր. պէտք է հանդուրժել գիտնալ ասոր,պէտք է մուրացկանութիւնը ընել գոնէ վայելուչ ձեւով մը. պէտք է համեստութեամբ ու երախտագիտութեամբ ընդունիլ ողորմութիւնը որ կը տրուի մեզի եւ ոչ թէ ծիծաղելի գօռոզութեամբ մը նմանիլ այն պապուկին՝ որ իրեն ողորմութիւն տրուած վարունգին ծուռ ըլլալուն վրայ կը գանգատէր>>[375]:

Միսիոներների կրթական գործունեությունը դրական է գնահատվում <<Անահիտում>> հրապարակված հոդվածներից մեկում, ուր նշվում է ,որ արևմտահայ կանանց կրթության գործը հենց ամերիկացիներն սկսեցին, ինչը <<բարձրացուց իրենց ընտանեկան իմա-ցողութիւնը, բերաւ մշակում եւ նրբութիւն ընկերութեան մէջ, զօր անկարելի էր ուրիշ որևէ կերպով առաջ բերել>>[376]:

Եվ, վերջապես, միսիոներների գործունեության և հայ-ամերիկյան փոխհարաբերությունների վերաբերյալ փաստորեն գրեթե նույն տեսակետն է արտահայտում ամերիկահայ պատմաբան Գ. Սարաֆյանը: Նա կոչ է անում <<կասկած

---

[374] Նույն տեղում:
[375] Նույն տեղում:
[376] «Անահիտ», թիւ 2, Փարիզ, 1905, էջ 43:

չունենալ ամերիկյան միսիոներների <<անկեղծ մարդասիրական նպատակների վերաբերյալ>>[377]:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում՝ ակնհայտ է դառնում այն վիթխարի աշխատանքը, որն իրականացնում էին միսիոներները: Հարկ է նշել, որ ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությանը փորձում էին խոչընդոտել արևմտաեվրոպական երկրները: Բոլոր այդ երկրների վերջնական նպատակը Օսմանյան կայսրության տարածքում իրենց քաղաքական և տնտեսական ազդցության պահպանումն ու ընդալայնումն էր, ինչն էլ հակասությունների տեղիք տվեց Մերձավոր Արևելքում:

Ինչպես նշում է Ն.Ադոնցը,- <<Թուրքիայով շահագրգռված տերությունների քաղաքականությունը. գլխավորապես հիմնված նրանց տնտեսական շահերի վրա, այս նոր փուլում պետք է ընդունի քաղաքական օրինականության որոշակի աստիճան: Մինչ Թուրքիան դիտվում էր սոսկ որպես էժանագին ապրանքների շուկա, նրանք, ում այն վերաբերում էր, կարող էին և անբավարար ուշադրություն էին դարձնում Թուրքիայի ներքին դրությանը>>[378]:

Գաղտնիք չէ, որ ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ մյուս եվրոպական երկրները շարունակ շահարկում էին հայկական հարցը Օսմանյան կայսրությունում իրենց դիրքերն ամրապնդելու համար,իսկ միսիոներների գործունեությունն այդ առումով հենարան էր ստեղծում քաղաքական նպատակների իրականացման համար:

Հարկ է նշել,որ ժամանակի գործիչներն ու մամուլը միսիոներներին գնահատել են ոչ միանշանակ,այլ ելնելով նրանց գործունեության և դրական, և բացասական կողմերի գնահատականից:

Միաժամանակ, նկատելի են 1894-96թթ. կոտորածներից միսիոներների հանդեպ դրական վերաբերմունքի ու գնահատականի առավել հաճախակի դրսևորումները,որոնք կապվում են միսիոներների մարդասիրական գործունեության ծավալման հետ: Վերաբերմունքի նման փոփոխությունը, ինչ խոսք, կապված էր նաև միսիոներների և հայ եկեղեցու միջև հակամարտության թուլացման հետ:

---

[377] Sarafian G., History of education in Armenia, California, 1930, p. 163.
[378] Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, էջ 44:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիկյան միսիոներների ակտիվ գործունեություն արդյունքում 19-րդ դարից 20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության և մասնավորապես արևմտահայության շրջանում որոշակի տարածում գտավ բողոքականությունը: Ամերիկյան միսիոներներն իրենց քարոզչական աշխատանքները համադրում էին բարեգործական և լուսավորական գործունեության հետ: Նրանց գործունեության այս վերջին կողմը որոշակի դրական արդյունք ունեցավ արևմտահայության համար: Ամերիկյան միսիոներները բացեցին բազմաթիվ դպրոցներ, կրթական ու մշակութային տարբեր հիմնարկություններ, հիվանդանոցներ ու այլ բարեգործական հաստատություններ: Սակայն միսիոներների գործունեության անխուսափելի հետևանքն էր նաև արևմտահայերի մի զգալի մասի դավանափոխությունը, ինչն, անշուշտ, խարխլում էր հայերի կրոնական միասնությունն ու Հայ Առաքելական եկեղեցու դիրքերը: Պատմական դժվարին այդ պահին կրոնական երկպառակությունն իր բացասական հետևանքներն ունեցավ արևմտահայության համար:

Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն արևմտահայության շրջանում, ինչպես և նրանց նկատմամբ հայ հասարակական մտքի վերաբերմունքն առ այսօր համակողմանի գնահատական չի ստացել, ուստի կարևոր է հարցին մոտենալ մի քանի տեսանկյուններից և լինել հնարավորինս օբյեկտիվ՝ նրանց գործունեության արդյունքների և նպատակների գնահատման մեջ: Վերոնշյալ հարցերի ուսումնասիրումը արխիվային նյութերի հիման վրա սկզբունքային նշանակություն ունի ոչ միայն միսիոներական գործունեության առանձնահատկությունների և նպատակների ուսումնասիրման առումով, այլև Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մի շարք դրվագների՝ նոր տեսանկյունից դիտարկման համար: Միսիոներների գործունեության լուսաբանումը մեզ հնարավորություն է տալիս նոր լույսի ներքո դիտարկել նաև ներկայումս Հայաստանում տարածված ժամանակակից կրոնական նոր ուղղությունների և աղանդների գործունեության պատճառները, իրական նպատակներն ու հնարավոր արդյունքները հայության համար: Ակնհայտ է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում միսիոներների գործունեության ընդլայնմանը հատկապես նպաստեց թուրքական կառավարության հայահալած

քաղաքականությունը, որն իր նոր դրսևորումները ստացավ 1895-96թթ. համիդյան ջարդերի ժամանակ և առավել աղետալի չափերի հասավ 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո:

Մեր ուսումնասիրության մեջ անհրաժեշտ էր առաջին հերթին հանրագումարի բերել այն հիմնական գործոնները, որոնք նպաստեցին բողոքականության տարածմանն Արևմտյան Հայաստանում: Բազմաթիվ փաստեր հաստատում են, որ հայերի մեջ բողոքականության տարածումն ուներ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ կրոնական պատճառներ: Սակայն չպետք է ժխտել նաև այն փաստը, որ առկա էին նաև ներքին, ներազգային պատճառներ, որոնք հնարավոր դարձրեցին միսիոներների գործունեությունը:

Այստեղ կարևոր է այն կացության վերհանումը, որ հնարավոր դարձրեց բողոքականության տարածումը Արևմտյան Հայաստանում, անդրադարձը՝ իրենց հայրենի հավատին ու եկեղեցուն հայերի հավատարիմ մնալու պատրաստակամությանը, Հայ եկեղեցու՝ միսիոներների նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև բողոքականների հետ Օսմանյան իշխանությունների կոնկրետ առնչությունների բացահայտումը:

Թեմայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ բողոքականությունը, տարածում գտնելով արևմտահայության մեջ ամերիկյան միսիոներների գործունեության արդյունքում, հայ ժողովրդի համար ունեցավ հակասական արդյունքներ. մի կողմից կրթական-լուսավորական ոլորտում ընդգրկվեցին եվրոպական առաջադեմ գաղափարներ, կատարվեցին բարեգործական զգալի աշխատանքներ, մյուս կողմից՝ միսիոներների գործունեության արդյունքում հայության մի մասը հեռացավ Մայր եկեղեցուց, անջրպետ առաջացավ առաքելական ու բողոքական հայերի միջև, որոնց կրոնական բաժանումը, թերևս, միայն նպաստեց թուրք ջարդարարների հայաջինջ ծրագրերին:

Արևմտյան Հայաստանում միսիոներական գործունեության իրական պատճառների մեջ աչքի է զարնում Թուրքիա ներթափանցելու՝ ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական ռազմավարությունը: Գաղտնիք չէ, որ իրենց երկրների համար նույն քաղաքական նպատակներն էին հետապնդում նաև այս ժամանակաշրջանում

Թուրքիայում հաստատված գերմանական և կաթոլիկ միսիոներները, որոնք, սակայն, չկարողացան ընդլայնել իրենց գործունեության ասպարեզը:

Հակառակ գերմանացի միսիոներների և նրանց ազգակից հասարակական ու քաղաքական գործիչների երկար տարիների համառ ջանքերին՝ շահել արևմտահայության համակրանքը, հայությունը, չփոխեց իր կողմնորոշումը, չաջակցեց գերմանական ներթափանցմանը Թուրքիա: Հենց սա է, գուցե, այն իրողության բացահայտման ելակետերից մեկը, թե ինչու գերմանական իմպերիալիզմն անվարան իր համաձայնությունը տվեց իրենց ճանապարհից հայությանը վերացնելու երիտթուրքերի ծրագրերին:

Պանթուրքիզմի գաղափարախոսության ծավալմանը քողարկված ձևով նպաստում էր նաև Անգլիան: Անգլիան ամենուր դաշինք էր փնտրում այն ուժերի հետ, որոնք թեկուզև փոքր չափով խափանում էին Ռուսաստանի ձգտումը՝ տարածվելու դեպի հարավ, դեպի Միջերկրականի տաք ջրերը, տիրելու Հնդկաստան տանող ուղիներին:

Պանթուրքիզմի գաղափարախոսության ձևավորմանն ու տարածմանը նպաստում էր նաև Ֆրանսիան, որը նույնպես խիստ շահագրգռված էր այն բանում, որպեսզի Ռուսաստանը Հայաստանի և Քուրդիստանի վրայով չանցնի Միջերկրականի ավազանը և սպառնալիքներ չստեղծի իր տնտեսական և ռազմավարական շահերին: Վերոնշյալը մեկ անգամ ևս փաստում է այն մասին, թե ինչու, ստեղծված իրավիճակում, երբ հայ ժողովրդին ո՛չ ներքին քաղաքական ուժերից, ո՛չ էլ արտաքին աշխարհից չտրամադրվեց օգնություն, ամերիկյան միսիոներական կազմակերպությունների կողմից ցուցաբերվող նյութական և բարոյական օգնությունը որոշ դրական նշանակություն ունեցավ արևմտահայության համար, թեև այն ոչ միշտ էր, որ անշահախնդիր բնույթ ուներ: Պատահական չէ, որ չնայած միսիոներների բազմաթիվ մարդասիրական ձեռնարկումներին, արևմտահայերը հիմնականում կասկածանքնով էին վերաբերվում նրանց գործունեությանը: Այդ առումով մեծ դերակատարում ուներ նաև Հայ ազգային եկեղեցու քարոզչությունը: Հայ առաքելականներին կոչ էր արվում ոչ միայն խուսափել բողոքականների հետ առնչություններից, այլև բացառել որևէ կենցաղային շփում բողոքականների և նույնիսկ նրանց ազգականների հետ: Որպես այս, ինչպես և հակազդեցության այլ դրսևորումների հետևանք, միսիոներների գործունեության ոլորտում ընդգրկված հայության լոկ աննշան մասը փոխեց իր դավանանքը՝ հարելով

բողոքականությանը: Այստեղ վերհանվում են այն հիմնական գործնական միջոցները՝ նյութական օգնությունը, անվճար կրթությունը, որոնք նպաստեցին բողոքականության տարածմանը: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ միսիոներները, գիտակցելով, որ Աստվածաշունչը մատչելի չէ հասարակ ժողովրդին, ձեռնարկեցին և լայն թափ հաղորդեցին Աստվածաշնչի թարգմանությանն ու տպագրությանը: Բացի այդ, նրանք տնտեսության մեջ ներմուծեցին նորագույն գյուղատնտեսական և արհեստագործական գործիքներ՝ դրանց կիրառումը ուսուցանելով տարբեր արհեստագործական դպրոցներում: Այդ բոլոր կրթական հաստատությունները քարոզչության համար լավագույն միջոց էին, ինչի հնարավորությունը և բաց չէին թողնում միսիոներները: Նրանց քարոզչության համար նպաստավոր պայմաններ էին ստեղծում արևմտահայաստանի հայ բնակչության իրավազուրկ վիճակը, քրդական հարստահարություններն ու թուրքական իշխանությունների կողմից գործադրված բռնությունները, և հատկապես 1894-1896թթ. կոտորածները, որոնք հայերին մի հայտնի չափով մղում էին հակվել դեպի հեղինակավոր տերությունների ուժը ներշնչող միսիոներները: Վերջիններիս մեջ ոչ քիչ դեպքերում հայերը տեսնում էին իրենց ֆիզիկական գոյության կամ թշվառությունից խուսափելու երաշխիքները: Ավելացնենք, որ հայ եկեղեցին, իր հերթին, չէր կարող լիարժեք դիմակայել միսիոներական քարոզչությանը՝ թուրքական իշխանությունների կողմից իրեն պարտադրված անգործունակության և իրադարձությունների վրա ազդելու չափազանց աննշմար կարողությունների պատճառով: Այս հանգամանքը ևս դյուրին էր դարձնում հայերի դավանափոխությանն ուղղված միսիոներների գործունեությունը:

Միսիոներական դպրոցների ու քոլեջների, դրանց կրթական ծրագրերի հետ կապվող հարցերը քննարկելիս բացահայտվում է այն իրողությունը, որ միսիոներական կրթական համակարգը ոչ միայն տվեց բանիմաց և ուսյալ շրջանավարտներ, այն նաև չաղճատեց ազգային արժեքները հայ աշակերտների հոգում, և բացի այդ, միսիոներական դպրոցները, թեկուզ և հանգետս, նպաստեցին ազգային դպրոցների կատարելագործմանը և կրթական որակի բարձրացմանը, որ հասկանալի մրցակցության հետևանք էր:

Միսիոներների կրթական ձեռնարկների շարունակական զարգացման ընթացքի վերլուծությունը հաստատում է այն եզրակացության, որ երիտթուրքական հեղաշրջումը

որևէ դրական փոփոխություն չմտցրեց հայերի կյանքում: Ընդհակառակը կառավարությունը միջոցներ ձեռնարկեց դպրոցների ցանցը նվազեցնելու ուղղությամբ, ուժեղացվեցին հալածանքները կայսրության հայ բնակչության և նրա ազգային գործիչների դեմ:

Ստեղծված ծանր կացության մեջ միսիոներական դպրոցները ձեռք բերեցին կարևոր նշանակություն արևմտահայ երիտասարդությանը կրթելու և գիտության լույսով զինելու ասպարեզում: Հատկապես պետք է նշել այն նոր որակները բողոքականների գործունեության մեջ, որ նկատելի եղան 1908-1914թթ. ընթացքում, այն ուղղությունները, որոնք ներմուծվեցին միսիոներական դպրոցներ:

Այդպիսիք էին արհեստագործական, բնագիտական և տեխնիկական կրթությունը, լեզուների ուսուցումն ու ֆիզիկական դաստիարակությունը, որը տարածում գտավ հատկապես 1910-ական թվականներին:

Աշխատության մեջ ներառված՝ միսիոներական դպրոցներին վերաբերող վիճակագրական տվյալները փաստում են միսիոներական աշխատանքների ծավալի մասին: Այսպիսով, չնայած ամերիկյան միսիոներների քաղաքական նպատակներին, այն է՝ ապահովել ԱՄՆ -ի ներթափանցումը Թուրքիայի ներքին կյանքի կարևորագույն բնագավառներ՝ ամերիկյան միսիոներների ծավալած կրթական - լուսավորական գործունեությունը մեծ դեր խաղաց երիտասարդության մտավոր զարգացման համար, թեև ունեցավ նաև որոշակի բացասական հետևանքներ հայ հանրության կրոնական, հոգևոր–գաղափարական միասնության պառակտման տեսանկյունից:

Միսիոներների մարդասիրական, բարեգործական աշխատանքները այլասիրական նկարագիր ունեցան մասնավորապես 1908-1914թթ. ընթացքում: Այստեղ պետք է կարևորել այն հանգամանքը, որ այս ասպարեզում առավել լայնորեն դրսևորվեցին նրանց գործունեության դրական այն հատկանիշները, որոնք կապ չունեին քաղաքական նախասիրությունների հետ, այլ հետամտում էին մարդասիրական նպատակներ: Հանրահայտ է, որ միսիոներները, ականատես լինելով 1895-96թթ ջարդերին, 1909թ. կոտորածներին և հետագայում նաև 1915թ. հայերի զանգվածային կոտորածներին ու տեղահանությանը, չէին մնում անտարբեր դիտորդի դերում, այլ վտանգելով իրենց կյանքը՝ փորձում էին փրկել տարաբախտ հայերին:

Պատահական չէ, որ միսիոներների հուշագրությունները այս բովանդակային կողմով ևս սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Արևմտյան Հայաստանի և նրա բնակչության՝ 19-րդ դարի և 20-րդ դարի պատմության ուսումնասիրության համար: Ամերիկյան միսիոներները երկար տարիներ աշխատել են Արևմտյան Հայաստանի ու Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում և գիտեին տեղական ժողովուրդների կյանքը: Նրանք շնորհակալ աշխատանք են կատարել իրենց գործունեության շրջաններում հայ բնակչությանը կոտորածներից փրկելու համար: Ամերիկացի միսիոներներ Ք.Աշըրը, Է. Յարոուն և Գ.Կնապը հետագայում նաև անմիջականորեն մասնակցություն են ունենում Վանի ինքնապաշտպանական մարտերին:

Աղբյուրների այս խումբը կարևոր է նաև այն առումով, որ դրանք կարևոր և ստուգապատում փաստարկներ են երիտթուրքական ցեղասպանության քաղաքականությունը ուրացող թուրքական պատմագիտության խեղաթյուրումների դեմ:

Իրական պատմությունը նենգափոխողների այդ փորձը մեկ անգամ ևս անհաջողության է մատնվում ոչ միայն նշված հուշագրությունների, այլև վավերական այն նոթերի և զեկուցագրերի, որոնք մերկացնում են պետականորեն կազմակերպված հայկական ջարդերի թուրքական քաղաքականությունը, որն իր գագաթնակետին հասավ 1915թ. ցեղասպանության ժամանակ: Այսինքն, միսիոներների հուշագրություններով ևս մեկ անգամ ապացուցվում է այն իրողությունը, որ ցեղասպանությունը ծրագրվել և որոշակիորեն փորձարկվել է դեռևս համիդյան բռնապետության օրոք՝ կատարելագործվելով երիտթուրքական ոճրագործների կողմից:

Միսիոներների գործունեության արդյունքները հանրագումարի բերելիս հարկավոր է անկողմնակալ մոտեցում ցուցաբերել դրանց թե՛ դրական և թե՛ բացասական կողմերին: Վերջիններս վերհանելիս անդրադարձ է կատարվել մի քանի ազդեցիկ թերթերի՝ <<Մշակ>>, <<Արձագանք>>, <<Արևելք>>, <<Բյուրակն>>, <<Հայրենիք>>, <<Մուրճ>>, <<Նոր դար>> և այլն: Ուսումնասիրվել են կրոնական պարբերականները՝ <<Հովիվ>>, <<Արարատ>> և անհրաժեշտաբար, ավետարանական ուղղություն ունեցող <<Ավետաբերը>>:

Ժամանակի հայ հասարակական միտքը հիմնականում բացասաբար է գնահատել միսիոներների քարոզչական գործունեությունը: Բացասական այդ վերաբերմունքին

սնուցիչ ուժ էր տալիս հայերի կրոնաեկեղեցական միասնությունը քայքայելուն ուղղված միսիոներների քարոզչությունը:Սակայն, դրա հետ միասին, որոշ դեպքերում հաճախ նկատելի է նաև որոշակի դրական արձագանք բողոքականության՝ եկեղեցին բարեկարգելու անհրաժեշտությանը վերաբերող առանձին դրույթների վերաբերյալ: Այդ ամենի կողքին մենք նկատում ենք հայ հասարական մտքի արդարացի մտահոգությունը միսիոներների գործունեության արդյունքում հայ հասարակության պառակտման վերաբերյալ, ինչպես նաև այն իրողության գիտակցումը, որ ի դեմս հավատափոխ հայերի, օսմանյան իշխանությունները նրանց թիկունքում տեսնում էին մեծ տերություններին, որոնք պատրվակ էին որոնում Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար:

Միաժամանակ քիչ չեն նաև ժամանակի մամուլում տեղ գտած դրական տողերը բողոքական առանձին գործիչների մասին:

Այստեղ հատկապես պետք է նկատել, որ հայ հասարակական միտքը 1894-96թթ. սկսած միսիոներական աշխատանքին տրված իր գնահատականներում որոշակի մեղմություն է դրսևորում, առավել հաճախակի են դառնում դրական որակավորումները: Կարծում ենք, դա անմիջական արձագանքն էր միսիոներական աշխատանքի քարոզչականից բարեգործականին անցմանը: Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ կոտորածների այդ տարիներին միսիոներները տվել են հայերին պաշտպանելու բավականաչափ օրինակներ: Դա է պատճառը, որ այս տարիներին միսիոներների նկատմամբ որոշակի հանդուրժողականություն է դրսևորում նաև Հայ Առաքելական եկեղեցին:

Պետք է նաև նշել, որ չնայած իրենց կրոնական առանձնահատկությունների գիտակցմանը՝ հայ բողոքականները, այնուամենայնիվ, չէին կորցնում իրենց ազգային ինքնագիտակցությունը: Պատահական չէ, որ այսօր էլ նրանք իրենց համարում են աշխարհասփյուռ հայության անքակտելի մաս: Նրանք իրենց այդ համոզմունքը բացատրում են հիմնվելով երկու հիմնական եզրահանգումների վրա: Առաջին՝ նրանք փորձում են ցույց տալ, որ բողոքականությունն օտարածին երևույթ չէ հայերի համար, այլ ընդհակառակը, դրա դրսևորումները եղել են մեր ժողովրդի պատմության մեջ: Բողոքականները փորձում են ցույց տալ, որ օտարերկրյա միսիոներները ոչ թե սկզբնավորել են բողոքականությունը հայերի մեջ, այլ ուղղակի՝ տարածել: Իրենց այս

տեսակետը նրանք փորձում են հիմնավորել՝ բողոքականության վաղ դրսևորումներ փնտրելով հայ իրականության մեջ ժամանակին տեղ գտած երկու աղանդավորական շարժումների՝ Պավլիկյանների և Թոնդրակյանների մեջ: Մի կողմ թողնելով այս ոչ գիտական, այլ ավելի շուտ՝ հայերի մեջ բողոքականությունը հիմնավորելուն ուղղված սուբյեկտիվ մոտեցումը, նշենք, որ կա շատ ավելի ընդունելի տեսակետ, որը փորձում է ցույց տալ, որ եթե անգամ բողոքականությունը չունի հայկական ծագում, դա չի զրկում նրանց հայության մի մասնիկը կազմելուց: Հայ բողոքականները նույնքան հայ են, որքան մյուս հայերը, որոնց միավորում է մշակութային միևնույն անցյալը, ազգային կարևոր հիմնահարցերի արծարծումը, որոնց մեջ կառանձնացնեինք հայրենիքի անվտանգության գաղափարը և ազգային պահանջատիրության գործոնները:

Այսպիսով, թեմայի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ միսիոներական գործունեությունն Արևմտյան Հայաստանում պայմանավորված էր հայ իրականության առանձնահատկություններով և դրա, ինչպես և Օսմանյան Թուրքիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության վերաբերմունքով: Անկախ իրենց գործունեության շարժառիթներից՝ միսիոներներն իրական օգնություն ցույց տվեցին շատ հայերի: Գտնվելով հայերի կողքին և հայերի մեջ՝ նրանցից շատերը հայ ժողովրդի խնդիրներին սկսեցին վերաբերվել մարդասիրական զգացումներից ելնելով, և անգամ՝ առանց որևէ անմիջական կապի՝ վերոհիշյալ քաղաքականության իրացման հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.1.Արխիվային փաստաթղթեր և նյութեր

Ա.Հայաստանի ազգային արխիվ

1.1.1.Ֆոնդ 1291 (Պետիկյան Անդրանիկի անձնական ֆոնդ), ցուցակ 1, գործեր 124, 530, 592, 606, 1118:

1.1.2.Ֆոնդ 193 (Պերպերյան Հայկի անձնական ֆոնդ), ցուցակ 1, գործեր 116, 117, 121, 352, 1117, 1128, 1136:

1.1.3.Ֆոնդ 411 (Հ.Ֆ. Լինչի անձնական ֆոնդ), ցուցակ 1, գործ 226:

1.1.4.ֆոնդ 420 (Յոզղատի և շրջակայից բարեսիրական հայրենակցական միության ֆոնդ (Բեյրութ-Լիբանանան), ցուցակ 1, գործ 10, 11:

1.1.5.Ֆոնդ 476 (Գալուստյան Հայկազնի անձնական ֆոնդ), ցուցակ 1, գործ 197:

1.1.6. Ֆոնդ 227 (մշակ գրական-քաղաքական թերթի խմբագրություն), ցուցակ 1, գործ 6, 476:

1.1.7.Ֆոնդ 57(Ամենայն հայոց կաթողկոսի դիվան), ցուցակ 1, գործ 399, ցուցակ 2, գործ 278:

1.1.8.Ֆոնդ 1395 (Եկեղեցական հիմնարկների, կազմակերպությունների, գործիչների փաստաթղթերի հավաքածու), ցուցակ 5, (Էմ. քհ. Նազարյանց), գործ 5:

1.2. Բ. Մ.Մաշտոցի անվան Մատենադարան

1.2.1Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ.14,վավ. N 155:

1.2.2.Աշ. Հովհաննիսյանի անձնական արխիվ, թղթ. 24411, վավ. 126:

1.3.Գ.Ե.Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարան

1.3.1.Հ. Ավագյանի ֆոնդ, գործ 8:

1.3.2. Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, 2-րդ բաժին, գործեր 146, 720:

2.Գրականություն

2.1.Հայերեն

2.1.1.Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Եր.,ԵՊՀ հրատ.,1989,116 էջ:

2.1.2.Ա-դօ,Վանի,Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները,Եր.,տպ. «Կուլտուրա», 1912, 406 էջ:

2.1.3.Ահարոնյան Գ., Մեծ երազի ճամբուն վրա / Ակնարկ հայկ. հարցի պատմ. Վրայ/, Լոս Անճելիս, Շիրակ, 1986, 224 էջ:

2.1.4.Անդրանիկ, Տէրսիմ. ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1900, 238 էջ:

2.1.5.Ալպոյաճեան Ա., Պատմություն Մալաթիոյ հայոց, հրատարակչություն Մալաթիոյ կրթասիրաց ընկերութեան,Պեյրութ 1961,1535 էջ:

2.1.6.Ալպոյաճեան Ա.,Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գահիրէ, տպ. Կեսարիոյ եւ շրջ. Հայրենակց. միութ. Գահիրէի վարչ. հրատ.,1937, 1294 էջ:

2.1.7.Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Եր., ՀՀ ԳԱԱ, <<Գիտություն>> հրատարակչություն, 2000, 239 էջ:

2.1.8.Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Եր., «Զանգակ -97», 2002, 768 էջ:

2.1.9.Ատանալեան Կ.Պ., Յուշարձան Հայ Աւետարանակաց եւ աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, Կալիֆորնիա, Տպ., Croown Printing co., 1952, 527 էջ:

2.1.10.Բայբուրդյան Վ.Ա., Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914թթ., Եր., 1974, Հայաստան, 389 էջ:

2.1.11.Բախտիկեան Ս., Ոսկեգետակ, Գ հատոր, Պէյրութ, հրատ. Արաբկիրի և շրջ. Հայրենակցական միութ., 1948, 448 էջ:

2.1.12.Գասապեան Մ.Գ., Հայերը Նիկոմեդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, Տպ., Ազատամարտի, 1913, 314 էջ:

2.1.13.Գալոյան Գ. Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Եր., Հայաստան, 1982, 460 էջ:

2.1.14.Գազանճեան Յ., Պատմութիւն հայ գրականութեան, Ա հատոր, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970, 140 էջ:

2.1.15.Գինոսյան Ն., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային կյանքում /19-րդ դարի երկրորդ կես-20-րդ դարի սկիզբ /թեկն.ատենախոսություն/, Եր., 2009:

2.1.16.Դեվիս Լ., Սպանդի նահանգը.Ամերիկյան դիվանագետի զեկուցագրերը հայկական ցեղասպանության մասին,1915-1917թթ.,Եր., Դալլ, 2001,367 էջ:

2.1.17.Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ.Ա., Աղեքսանդրիա, Տպ., Արամ Գասապեան, 1929, 502 էջ:

2.1.18.Զոհրապ Գր., Հայկական հարցը փաստաթղթերուն լոյսին տակ, Բեյրութ,Շիրակ հրատ., 1973, 32 էջ:

2.1.19.Թութիկյան Վ., Հայ աւետարանական եկեղեցին 1846-1996, Ա.տ., Ա.հ., 1996, 378 էջ:

2.1.20.Ընդարձակ օրացոյց Ազգային հիվանդանոցի, Կ.Պոլիս, տպ. Տէր –Մինասեան, 1900, 366 էջ:

2.1.21.Ինճիկյան Հ.Գ., Օսմանյան կայսրության անկումը, Եր., Հայաստան, 1984, 335 էջ:

2.1.22.Լազյան Գ., Հայաստան և Հայ Դատը: Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Ա.տ., Արմէն հրատ., Ա.թ., 440 էջ:

2.1.23.Լեփսիուս Յո., Գաղտնի տեղեկագիր, Հայաստանի ջարդերը, Եր., Ա.հ., 2003, 205 էջ:

2.1.24.Լեսլի Ա.Դնիս, Սպանդի նահանգ, Եր., Տպ., Դալլ, 2001, 367 էջ:

2.1.25.Լինչ Հ.Ֆ.Պ., Հայաստան ուղևորութիւններ և ուսումնասիրութիւններ, Կ.Պոլիս, տպ. Յ.Ասատուրեան եւ որդիք, 1914, 376 էջ:

2.1.26.Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությունը, Եր., Շաղիկ, 1994, 204 էջ:

2.1.27.Խառատյան Ա.,Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում 1857-1908թթ., Եր., Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., 1989, 380 էջ:

2.1.28.Խառատյան Ա., Զմյուռնիայի հայ գաղթօջախը, Եր., Էդիթ պրինտ, 2008, 40 էջ:

2.1.29.Խոսրոևա Ա., Ասորիների ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և հարակից թուրքաբնակ վայրերում 19-րդ դարի վերջ-20-րդ դարի առաջին քառորդ, Եր., Ա.հ., 2004, 114 էջ:

2.1.30.Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Եր., Համազգային հայ կրթ. մշակութ. միության հրատ., 1995, 100 էջ:

2.1.31.Ծոցիկեան Ս.Մ., Արևմտահայ աշխարհ, Նիւ Եորք, տպ. Լէյլեկեան, 1947, 814 էջ:

2.1.32.Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Եր., Երևան 2000, 440 էջ:

2.1.33. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը,Երևան,Համազգ. Հայ կրթ. մշակութ. միութ. հրատարակություն, 1995, 100 էջ:

2.1.34.Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2005, 175 էջ:

2.1.35.Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Եր., Հայաստան, 1980, 455 էջ:

2.1.36. Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը 19-րդ դար-1914թ., Եր.,ԵՊՀ հրատ., 2014, 400 էջ:

2.1.37.Ղուկասյան Հ., Բողոքականությունը Կովկասուն Հայոց մեջ, Թիֆլիս, Ա.հ., 1886, 382 էջ:

2.1.38.Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրէզնօ, Նոր օր, 1930, 572 էջ:

2.1.39.Ճիզմէճեան Մ., Խարբերդը և իւր զավակները, ԱՄՆ, Ֆրեզնո, Ա.հ., 1955, 751 էջ:

2.1.40. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, Եր., Հայպետհրատ, 1955, գիրք 1-598 էջ:

2.1.41.Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում /1898-1908թթ./, Եր., ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., 1999, 478 էջ:

2.1.42.Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում՝ 1828-1923թթ., պրոֆ. Ջ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., Հայաստան, 1972, 809 էջ:

2.1.43.Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.,1988, 256 էջ:

2.1.44.Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ Տարեցոյց, Ա տարի, Բոստոն, տպ. Կիլիկիա, 1911, 383 էջ:

2.1.45.Մկրտչյան Լ., Զեյթունի ապստամբությունը 1895-1896թթ., Երևան, Ա.Հ.,1995, 209 էջ:

2.1.46.Միրախորյան Մ.,Նկարագրական ուղեւորություն ի հայաբնակ գավառս Արեւելյան Տաճկաստանի, մաս Բ.,Կ.Պոլիս, տպ. Մ.Կ. Սարըեան, 1885, 285 էջ:

2.1.47.Յիշատակարան Եփրատ գոլէճի,Պոսթոն, Ա.հ., 1942, 491 էջ:

2.1.48.Յովհաննէսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, Ս.Ղազար, 1006 էջ:

2.1.49..Յոհաննսոն Ա.,Աքսորյալ ժողովուրդ, Եր., Հայոց ցեղասպանության թանգ. ին-տի հրատ., 2008, 147 էջ:

2.1.50.Նազիկյան Գ.Ա., Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Եր., << Լույս>> հրատ., 1969, 383 էջ:

2.1.51. Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, 1878-1908, 572 էջ:

2.1.52.Պալասանյան Ստ.,Պատմություն հայոց, Թիֆլիս, Թիֆլիսի վրաց. հրատ. ընկ., 1895, 833 էջ:

2.1.53.Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը 1409—1921 թթ., Երևան, Հայաստան,1969,458 էջ:

2.1.54.Պատրիկ Ա.,Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հատոր Ա, Պէյրութ, հրատ. Համասեբաստահայ Վերաշինաց Միութիւն, 1974, 880 էջ :

2.1.55.Սահակեան Ա., Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 2005, 114 էջ:

2.1.56.Սահակյան Ռ.Օ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Եր., <<Գիտություն>>, 2005, 401 էջ:

2.1.57.Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., <<Հայաստան>>, 1991, 630 էջ:

2.1.58.Սասունի Կ.,Պատմությիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, տպ. Համազգային, 1957, 1252 էջ:

2.1.59. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը /1876-1920/, Երևան,ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, 248 էջ:

2.1.60.Սրվանձտյան Գ., Երկեր, հատոր 2, Եր., Հայկ. ՍՍՀ հրատ., 1982, 564 էջ:

2.1.61.Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթողիկե և ավետարանական համայնքները. ժամանակակից միտումներ, Եր., <<Նորավանք>>, 2012, 160 էջ:

2.1.62.Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և հայոց ցեղասպանության մասին, Եր., <<Հայագիտակ>>, 2011, 720 էջ:

2.1.63.Վիճակացոյց Գաւառական Ազգային վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ, Կ. Պոլիս, տպ. Հակոբ Մաթեւոսյանի, 1901, 32 էջ:

2.1.64.Վահէ Հ., Խարբերդ եւ անոր ոսկեղեն դաշտը, Նիւ Եորք, Ա.Հ., 1959, 1500 էջ:

2.1.65.Վարդանյան Հ.Գ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան,ԳԱ հրատ., 1967, 355 էջ:

2.1.66.Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., Ա.հ., 2006, 436 էջ:

2.1.67.Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ, Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., 2008, 122 էջ:

2.1.68.Ռաֆֆի , Երկերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2011, 400 էջ:

2.1.69.Ռաֆֆի, Տաճկահայք /Հայոց հարցը/ Վիեննա, Մխիթարյան տպարան, 1913, 163 էջ:

2.1.70.Ռիֆաթ Մ., Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Եր., Կ.ՓՀ., 1990, 330 էջ:

2.1.71.Քասունի Ե.,Լուսաշաւիղ, Պատմութիւն հայ ավետարանական շարժման, Պէյրութ, Շնորհոքեան ամերիկյան տպարան, 194, 603 էջ:

2.1.72.Քեչեան Ա.,Ակն և ակնեցիք, Փարիզ, հրատ., Ամերիկայի Ակնայ Հայրենակց. Միութ.,1952, 232 էջ:

2.1.73.Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Եր., Ա.հ., 1993, 280 էջ :

2.1.74.Փայասլյան Ստ., Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը, /թեկն. Ատենախոսություն/, Եր., 2007:

2.1.75.Փափազեան Վ., Իմ Յուշերը, հատոր առաջին, Պօսթըն, <<Հայրենիք>>, 1950, 425 էջ:

2.2.Անգլերեն

2.2.1.An Appreciation .In Memory of the Rev.George Washburn(1833-1915).Printed. not Published by The Trustees of Robert Qollege.New York,1915, 43p.

2.2.2.Bliss E.M. Turkey and Armenian Atrocities.Fresno,Calif.,Meshag Publishing,1982, 574p.

2.2.3.Dwight H.O.,Constantinople and its Problems, New York,1901, Pub.,Fleming H.Revell Company, 298 p.

2.2.4.Dwight H.O.The Centennial History of the Armenian Bible Society, New York, pub.,The Macmillan Company,1919, 605 p.

2.2.5.Eddy D.B.,What Next in Turkey, Boston, Pub.,Taylor Press,1913,191 p.

2.2.6.Greene F.D., Armenian Massacres and Turkish Tyranny, Chicago, Pub., International Publshing co.,1896, 512p.

2.2.7.Greene F.D.,The armenian crisis in Turkey: The massacre of 1894, its antecedants and significance, New York London, Putnam,1895, 174 p.

2.2.8.Great need Over The Water, The Letters of Theresa Huntington Ziegler, Missionary to Turkey, 1898-1905 , Comidas institute,1999, 375 p.

2.2.9.Hamlin C., My Life and Times, 2nd ed., Boston, Pub., Congregational Sanday-Scholl and Pub.Society, 1893, 438p.

2.2.10.Hewsen R., Armenia. A Historical Atlas, University of Chicago press, 2001, 341 p.

2.2.11.Greene F.D., The Armenian Crisis and the Rule of the Turk, London ,1895, 188 p.

2.2.12.Knapp G.H., An American Physician in Turkey. A Narrativees of Adventures in Peace and War, Boston and N.Y.,1917,198 p.

2.2.13.Sarafian G., History of education in Armenia, California, 1930, 163 p.

2.2.14.Moranian S.E., The American Missionaries and the Armenian Question 1915-1927, University of Wisconsin Press, 609 p.

2.3.Ռուսերեն

2.3.1.Алиев Г.З., Турция в период правления младотурок. М.,Наука, 1972,387 с.

2.3.2.Амфитеатров А., Армянский вопрос, С. Петербург, Пушкинская скоропечатня,1906, 58с.

2.3.3.Армянский вопрос и геноцид армян, Библиография литиратуры на русском языке 1877-1997, Составители П.О. Оганесян, Э.А.Бабаян, Е., 1998, 281 с.

2.3.4.Джордж Л., Правда о мирных договорах, т.2, Москва,Изд-во инос. Летературы, 1957, 556 с.

2.3.5.Новичев А.Д., История Турции, ч.1, Ленинград, 1963, 314 с.

2.3.6.Петросян Ю.А., Османская империя: могущество и гибель, Москва, Наука, 1990, 280с.

2.3.7.Петросян Ю.А., Младотурецкое движение, М., Наука, 1971, 328 с.

2.3.8.Шпилькова Б., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.), Мосва,1960,151 с.

2.3.9. Сафрастян Р.А.,Доктрина османизма в политическои жизни Османскои империи (50-70 гг. Х1Х в.). Ереван, Изд-во АН АрмССР,1985, 148 с.

2.3.10.Тодорова М.Н., Англия, Россия и Танзимат, Москва,Наука, 1983, 183 с.

2.3.11. Колюбакинь А., Материалы для Военно-Статистическаго Обозрения Азиатской Турции, Тифлис, Б.и 1890, т. 3, ч. 1,464 с.

2.3.12.Гаюк, И. Яковлевна, Армянская церковь как уникальный феномен христианского мира, Львов, Логос, 2005, 227 с.

2.3.13.Фадеева И.Л. Османская империя и англо-турецкие отношения в середине Х1Х в.,Москва, Наука,1982, 160с.

2.3.14.Фадеева И.Л., Официальные доктрины в идеологии и политике османской империи (османизм-панисламизм) XIX-начало XX в., Москва,Наука, 1985, 272 с.

3. Հոդվածներ

3.1.Հայերեն

3.1.1.Արիստակէսեան Յ., Հայ բողոքական հասարակութիւնը եւ ամերիկյան միսիօնարք, <<Արարատ>> ազգային ամսագիր, Էջմիածին, 1883, հունիսի 30, էջ 150-162:

3.1.2.Գեղունի, Որբունի կամ պատկերազարդ բացառիկ բազմավեպ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1900, էջ 5:

3.1.3.Երկանյան, Վ. Ս., Հայկական դպրոցը 1800-1870 թթ., Լրաբեր Հասարակական Գիտությունների, Եր.,1970, № 10 , էջ 31-45:

3.1.4.Թառոյան Կ., Արևմտահայ գաղթականությունը և նրա վիճակը 19-րդ դարի 90-ական թվականների վերջերին և 20-րդ դարի սկզբներին, ԲՀԱ, Երևան, 1974թ., հատոր 3, էջ 77-84 :

3.1.5.Ստեփանյան Ս.Ս., Էրնստ Վերների նոր աշխատությունը 1915-1916թթ հայկական սարսափների մասին, ԲՀԱ, Եր.,1974, համար 1, էջ 135-144:

3.1.6.Ռեֆիք Ա., Հայոց դերը թուրք մշակոյթին մեջ, <<Ընդարձակ տարեցոյց ազգային հիվանդանոցի>>, Կ. Պոլիս, 1931, էջ 113-148:

3.1.7.Սաֆարյան Ա., Զիյա Գյոքալփը թուրք կանանց իրավունքների մասին, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Եր., 2006, հատոր 4, էջ 13-38:

3.1.8.Կիրակոսյան Ա., Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում 19-րդ դարի 90- ական թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1984, համար 1, էջ 101-113:

3.1.9.Պարթըն Ճ.Լ., Ինչ ըրած են Ամերիկացիք հայոց համար, <<Անահիտ>>, Հանդէս ամսեայ ազգային, գրական, գեղարուեստական, Փարիզ, Է տարի, 1905, փետրվար, թիւ 2, էջ 120-133:

3.1.10.Քարամյան Կ.Ն., Երիտթուրքերը և Կիլիկիայի 1909թ.կոտորածը, ԲՀԱ, Եր., 1979, համար 3, էջ 66-72 :

3.1.11.Փայասլյան Ստ., Ամերիկացի միսիոներ Ջորջ Քաշինգ Նեփի զեկուցագիրը Բիթլիսի հայ բնակչության ջարդերի մասին, ԲՀԱ, Եր., 2004, համար 2, էջ 17-29:

3.1.12.Փայասլյան Ստ., Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին, ԲՀԱ, Եր., 2006, համար 1, էջ 120-134:

3.2.Անգլերեն

3.2.1. DadrianV., The Armenian Genocide: an interpretation / America and the Armenian Genocide of 1915 /, edited by Jay Winter,P. 70—77.

3.2.2. Hovannisian R., The Armenian People from Ancient to Modern Times, Palgrave Macmillan, 1997,Vol. II. Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century,480-493 p.

3.2.3.Journal of Mr.Dwight on a Visit to Brousa,"Missionary Herald"december, 1838, pp. 461-462.

3.3.Ռուսերեն

3.3.1.Долян М., Деятельность американских миссионеров в Османской империи б области просвещения. - Тезисы докладов участников XI Республиканской научной сессии молодых Еостоковедов. Ереван, 1985, с.8-16.

3.3.2.Долян М., Распространение протестантства американскими миссионерами в Османской империи (1908-1917 гг.). - Тезисы докладов XIУ Республиканской научной сессии молодых востоковедов, Ереван, 1988,с.4-1

4.Պարբերական մամուլ

4.1. <<Անահիտ>>, Փարիզ, 1905:

4.2. <<Աւետաբեր>>,Կ.Պոլիս, 1896-1908:

4.3. <<Արարատ>>, Էջմիածին, 1883,1887:

4.4. <<Արևելք>>,Կ.Պոլիս, 1891,1899:

4.5.<<Արձագանք>>,Կ.Պոլիս,1895:

4.6.<<Գլոբուս>>, Երևան, 2008:

4.7.<<Մշակ>>, Թիֆլիս, 1901,1902,1908:

4.8. <<Մուրճ>>, Թիֆլիս, 1899-1907:

4.9. <<Լրաբեր Հասարակական գիտությունների>>,Երևան,1970, 1984:

4.10.<<Բանբեր Հայաստանի արխիվների>>, Երևան, 1974, 2004:

4.11.<<Ծաղիկ>>,Կ.Պոլիս, 1890:

5.Էլեկտրոնային կայքէջեր

5.1.http://news.am/arm/news/98168.html.

5.2. http://www.lragir.am/armsrc/comments31494.html.

5.3.http://www.noravank.am/arm/books/

5.4. http://www.sedmitza.ru/news/2363764.html.

5.5.http://cheloveknauka.com/turetsko-amerikanskie-otnosheniya-1908-1917-gg-i-rol-missionerskih-organizatsiy#ixzz2IzNI6DJx.

5.6. http://www.missionfinder.org/native-american-missionaries/.